

792(47925)

U-88

Հայկ և Եւրոպ
Արժիւնք



ԱՇԽԱՐՀՈՎ

Վեկ

Հայկերն Տրամ

792.447.9251

U-88

Հայկեան Երկրի
Արժիւնք

ԱՇԽԱՐՀՈՎ



933

Հայաստանի
Երկիր



АЙК И ЭММА АРЦИВ

„ПО ВСЕМУ МИРУ“

(На армянском языке)

Армянское государственное издательство

(Айдеграт), Ереван 1964

Երկու խոսք

Այս հուշագրության հեղինակները՝ աշխարհաշրջիկ երգիչ-դերասաններ Հայկ և Էմմա Արծիվները, հայ դերասանական արվեստի այն գործիչներից են, որոնց բաժին է ընկել մեր ժողովրդի տարագիր հատվածի ճակատագիրը: Օտար ավերում ապրելով, սակայն արվեստագետ լույզը չի ենթարկվել թափառական կյանքի ավերիչ ազդեցությանը: Օժտված լինելով արտիստական շնորհներով, նրանք ավելի քան երեք տասնամյակ այդ շնորհները ի սպաս են դրել հայ բեմարվեստը, երգն ու երաժշտությունը սփյուռքահայության մեջ տարածելու շնորհակալ գործին:

Բնական է, որ որդեգրելով այդպիսի հայրենասիրական միսիա՝ Հայկ և Էմմա Արծիվները պետք է շրջեին աշխարհով մեկ, հանդես գային աշխարհի ամենատարբեր բեմերում, ամենաբազմազան խաղացանկով: Եվ այսպես, նրանք աշխատակցում են շատ արտիստական խմբերի, բեմադրում են շատ պիեսներ, օպերետներ ու համերգներ. երգում են մի շարք երաժշտախմբերի ելազակցությամբ:

Այս շրջագայությունների ճանապարհին արվեստագետ Վույզը հանդիպում է հայ և այլազգի շատ նշանավոր գործիչների, լսում է նրանցից իրենց արվեստի մասին դրվատանքի և քաջալերանքի խոսքեր: Որտեղ էլ որ հանդես են գալիս Հայկ և Էմմա Արծիվները՝ տեղի հայկական մամուլը զովեստով է խոսում նրանց արտիստական ջնորհների մասին: Այս հուշագրության մեջ քաղվածաբար բերված զրախոսությունները այդպիսի դրվատանքի մի մասն են միայն:

Հուշագրության առավել ուշագրավ հատվածներից են հրնդկաստանյան տպավորությունները: Նկարագրված փոքրիկ դրվագները և առանձին դիտողությունները տպավորիչ պատկերացում են տալիս ժամանակի հնդկական կյանքի, ազգային սովորույթների, գաղութային տիրապետությունից ալատագրվելու երկրում ծայր առած մասսայական ձգտման մասին: Ծանաչողական հետաքրքրություն են ներկայացնում մանավանդ տեղի հայկական համայնքի ներքին կյանքին վերաբերող հատվածները: Դրանց մեջ ընթերցողը տեսնում է Հնդկաստանում ապրող մի բուռ հայության ազգային ինքնագիտակցությունը անաղարտ պահպանելու կամքը, երբևէ իրենց հայրենիքը՝ Սովետական Հայաստան վերադառնալու անխախտ հավատը:

Արվեստագետ Վույզի համերգները այստեղ ջերմությամբ են ընդունվում ոչ միայն տեղի հայկական համայնքի կողմից, այլև արժանանում են հնդիկ և այլազգի արվեստասեր հասարակասության պատշաճ գնահատականին:

Բաան տարի շարունակ Հայկ և Էմմա Արծիվները ապրել ու ստեղծագործել են Բուենոս Այրեսում (Արգենտինա) դառնալով տեղի հայ համայնքի մշտական, սիրված արտիստները: Այստեղ 1942 թ. նրանք պատրաստում են Ա. Տիգրանյանի «Անուշ»

օպերայի բեմադրությունը (Արգենտինայում առաջին անգամ մինչ այդ բեմադրել են Ալեքսանդրիայում, Կալկաթայում և Թեհրանում): Սարոյի և Անուշի դերերը կատարում են Հայկ և Էմմա Արծիվները: Այս ձեռնարկությանը չի խանգարում և այն հանգամանքը, որ «Անուշի» ոչ ամբողջական նոտագրությունն է գտնվում իրենց ձեռքի տակ: Օպերան այն ժամանակ հրապարակված չէր: Այստեղ օգնության է հասնում Հայկ Արծիվի երաժշտական ջնորհքը. նա ինքն է հորինում օպերայի բացակա հատվածները՝ հարապատ մնալով Տիգրանյանի երաժշտության ոգուն ու բովանդակությանը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ գերմանական Ֆաշիստական կառավարությունը կախվել էր նաև հայ ժողովրդի վրա, արվեստագետ Վույզը անմասն չի մնում ընդհանուր թշնամու դեմ մղվող պայքարից: Նրանք իրենց հայրենաշունչ երգերով արթուն են պահում հայ մարդկանց մեջ հաղթանակի հավատը: Այդ շրջանում են լույս տեսնում Հայկ Արծիվի հայրենաշունչ քայլերգները և ձոն՝ սվիրված Հովհաննես Բաղրամյանին, «Ցնծա՛, երկիր»՝ սովետական բանակին:

Հայկ և Էմմա Արծիվները բազմիցս ելույթներ են ունեցել ռադիոկայաններում, ունեն ձայնագրված շատ երգապատկեր կազմված հայկական ժողովրդական երգերից և դասական երաժշտության նմուշներից:

Ի վերջո կատարվում է արվեստագետ Վույզի բաղձանքը. առանց սպասելու Արգենտինայից հայրենադարձության՝ նրանք անձնական նախաձեռնությամբ 1959 թ. վերադառնում են հայրենիք:

Հայկ և Էմմա Արծիվները անդամ են Հայաստանի թատերա-

կան ընկերության, ներկայումս ապրում են Երևանում խաղաղ և ապահով կյանքով:

Քե՛ն հուշագրերը շարադրված են առաջին դեմքով, հիմնականում Հայկ Արծվի անունից, սակայն գրքի ստեղծմանը գործնական մասնակցություն է ունեցել նրա երգչուհի կինը՝ Էլմաս Օջախյանը (Էմմա Արծիվ):

Վ. Դանիելյան

ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻՑ

ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻՑ

Գյուղի վարժարանում ամենից շարը, ամենից ճարպիկը ես էի, այդպես էին ասում, և ինչ որ անախորժ դեպք էր պատահում, ինձ էին վերագրում: Մեկ անգամ հայրս՝ վարժապետ Հարությունը զգուշացրեց ինձ, որ այլևս շարություններ չանեմ, բայց ես առանց վախի շարունակում էի: Հիշում եմ թվարանության դասը. երեք հոգի ինձ մոտ նստած հանգիստ սրտով սպասում էին, որ հուշարարություն անեմ, հայրիկս նկատեց, մոտեցավ ինձ և ասաց. «Հայկ, դուրս գնա դասարանից»: «Ինչո՞ւ», — պատասխանեցի: «Ինչո՞ւ» չկա, գնա և նայիր արդյոք դուրսը անձրև կա՞»: Ես ծիծաղեցի: «Հայրիկ ջան, ի՞նչ անձրև, ինչ բան, չի՞ս տեսնում, որ հրաշալի արև է»: Այնուամենայնիվ, հայրիկս ինձ դուրս արեց դասարանից, հետո իմացա, որ խեղճ ընկերներս «գերոս» են ստացել: Երկրորդ օրը հայրիկս կանչեց նրանց ծնողքին և պատմեց եղելությունը, իմ ականջիցս էլ մի լավ քաշեց: Այդ եղավ իմ մանկության վերջին դերակատարությունը:

Գյուղական հարսանիքներ շատ էի սիրում: Մեծ տղայի

նման մեջտեղ էի նկատում, պարում և երգում: Բոլոր հարսնե-
վորները զարմացած նայում էին ինձ՝ «Ի՞նչ տղա է, կրակի
կտոր»:

Մեր բնասնիքը կազմված էր յոթ անձից՝ շոքս եղբայր,
մեկ քույր, հայրս և մայրս: Մորս երբեք չեմ տեսած: Ձմռանը
հայրս ուսուցիչ էր, իսկ գարնանը՝ հողի աշխատավոր: Վար-
ժապետ Հարությունը Գոման գյուղում համարվում էր ամենա-
լավ գերանդի քաշողը և սրողը. շատերը գալիս էին նրա մոտ
իրենց գերանդիները սրել տալու: Հայրիկս սիրով գոհացնում
էր բոլորին: Նա միևնույն ժամանակ մասնագետ էր հայկա-
կան ազգային երաժշտության և ուներ ձայնագրած բազմա-
թիվ երգեր: Ուներ բնատուր, գեղեցիկ ձայն, որը ղողանջում
էր զանգակի նման: Ո՞ր ախալքալարցի է կամ գոմանցի է չի
լսել նրա «Ձայն տուր, ո՞վ ծովակիր», «Մայր Արարսին», «Կը-
ռունկ, ուստի՞ կուզաս», «Լոնց, ամպերը» և չի հիացել:

Մայրիկիս մահվանից հետո՝ տասնհինգ տարի շարունակ,
հայրս այրի մնաց: Վարժապետի շնչին ամսականով և գյու-
ղացու չարբաշ աշխատանքի վաստակով նա այնուամենայնիվ
կարողացավ իր որդիքը ուսման տալ, նույնիսկ բարձրագույն
կրթության: Գարեգինը՝ մեծ եղբայրս, Գևորգյան ճեմարա-
նում էր սովորում, համարվում էր Կոմիտասի լավագույն
աշակերտներից մեկը, որպես մեներգիչ և երաժիշտ: Կոմի-
տասի հանձնարարությունը Գարեգինը հավաքում է Զավախ-
բի շրջանի հայ գեղջկական երգերը և հանձնում վարպետին:
Ավարտելով ճեմարանը, Գարեգինը շարունակում է իր ուսու-
մը՝ Յարոսլավլի համալսարանի իրավաբանական մասնա-
ճյուղը: Հետագայում որպես դպրոցների տեսուչ և միևնույն
ժամանակ երաժշտության ուսուցիչ, Ախալքալարում, Կաղըզ-

վանում և այլ տեղերում կազմում է իր երաժշտական խումբը
և տալիս համերգներ: Նրա լիբրեյտական ձայնը անմիջապես
աչքի էր ընկնում: Մեծ հաջողությամբ երգում էր Կոմիտասի
«Անտունին», «Հորովելը», «Ալազյազը» և ուրիշ շատ երգեր,
հիացմունք պատճառելով ունկնդիրներին: Մյուս եղբայրս՝
Աշիկը, ուսումը շարունակեց Քիֆլիսի ներսիսյան դպրոցում.
ավարտելուց հետո, որպես ուսուցիչ ու տնօրեն, երկար տարի-
ներ նվիրվեց կրթական ասպարեզին:

Առաջին անգամ մեր գյուղում ես տեսած եմ Աշիկ եղ-
բորս ցուցադրած ներկայացումները և տպավորված: «Ասլան
Քալափի» ներկայացումը, ինչպես նաև եաշատուր Աբովյանի
«Վերք Հայաստանի»-ից ամփոփված «Աղասիի աղերսը»
թատերգության վերածած էր եղբայրս: Այդ օրը ես այնքան
ուրախ էի, այնքան ուրախ, որ կարծես աշխարհն ինձ էին
տվել: Զգում էի մատաղ հասակիցս, որ իմ մեջ աստիճանա-
բար աճում և ուճանում էր արվեստի սերը: Սիրում էի երբեմն
կերպարանափոխվել, ծպտում էի դեմքս սև ածուխով և կան-
չում էի ընկերներին, որ իմ խաղերին մասնակցեն: Մտքովս
որոշեցի նվիրվել թատերական ասպարեզին, թեև սիրում էի
նաև նկարչությունն ու երաժշտությունը:

Մի օր, դասի ժամանակ, ես զբաղված էի ուսուցչիս՝ Շա-
վարշ Դեմիրճյանի (Դերենիկ Դեմիրճյանի եղբայրը) դիմագի-
ծը նկարելով, գաղտնորեն: Քովս նստած էր նրա աղջիկը:
Տեսնելով իմ աշխատանքը, իսկույն լուր տվեց իր հայրիկին,
բայց ուսուցիչս ինձ վրա չբարկացավ, ընդհակառակը, սաս-
տեց իր աղջկան ինձ խանդարելու համար:

Իվ այսպես, ես մանկությունիցս սիրում էի գեղարվեստը
իր բոլոր ճյուղերով: Քաղաքային դպրոցն ավարտելուց հետո

Գարեգին եղբայրս ինձ տարավ Գևորգյան ճեմարանը ուսանելու: 1917 թվից մինչև 1914-ը գտնված եմ ճեմարանում: Գպրոցական տոներին բոլոր հանդեսներին մասնակցում էի և հաճախ երգում «Միծեռնակ»-ը և դրա համար էլ ճեմարանի իմ բնկերները անունս դրել էին Միծեռնակ:

Ճեմարանի դասական բաժինը վերջացնելուց հետո, անցա Քիֆլիս, իմ երազները իրականացնելու համար: Որպես սիրող դերասան մասնակցում էի հայ դրամատիկական դերասանական խմբի ներկայացումներին՝ ղեկավարությամբ հայտնի ռեժիսյորներ Օվի Սևումյանի և Արմեն Արմենյանի:

Արա հասավ 1915 թվականը: Կայծակի արագությամբ պատերազմի սկզբը տարածվեց աշխարհով մեկ: Եվրոպայի «մարզասերները» անտարբեր մնացին, բայց հայ երիտասարդությունը շեր կարող անտարբեր մնալ իր հայրենակիցների ճակատագրի նկատմամբ: Ինձ նման հազարավոր երիտասարդներ կամավոր մտան ռուսական բանակը: Կազմվեցին հայ կամավորական զնդեր՝ կռվելու շարիքի ղեմ: Չորս եղբայրներով մտանք զինվորական ծառայության և անմիջապես ուղեվորվեցինք տաճկանական ֆրոնտ: Տրապիզոնի ճակատում Բլաթան կոչված գյուղաքաղաքում վիրավորվեցի: Ինձ փոխադրեցին նախ Բաթում, ապա փոքր ինչ կաղզուրվելուց հետո՝ Քիֆլիսի զինվորական հիվանդանոց: Հայրս և Գարեգին եղբայրս եկան ինձ տեսության: Երջանիկ վաչրկյան էր այդ հայրս ճակատս համբուրեց, իսկ եղբայրս սեղմեց ձեռքս:

1917 թվականից սկսեցի կրկին հետևել թատերական արվեստին. մասնակցում էի Զուրաբովի անվան թատրոնում տրված ներկայացումներին (ղեկավարությամբ դերասանապետ Ամո Խարազյանի): Հիշում եմ, ներկայացնում էինք

«Վելիզարիոս» մեյուզրամը. ինձ վիճակվեց խաղալ մի գյուղացու ղեր, որտեղ պիտի երգեի ինչ-որ մի արտեր երգ: Այնքան հուզված երգեցի, որ հանդիսականները ծափողույններով գնահատեցին իմ հյուշիլը: Այդ օրվանից ես ետանդով փարվեցի նաև երգի արվեստին, որոշեցի երաժշտության հետևել, սակայն հնարավորություն չունեցա. որոշ ժամանակ անց մեկնեցի Բաթում և ընկերային պայմաններով կազմեցինք մի թատերախումբ, անվանելով դրամա-օպերետային խումբ: Մեր խաղացանկը կազմեցինք հիմնականում Շիրվանզադեի գործերից: Ես կատարում էի ընդհանրապես սիրահարական դերեր: Առաջին ներկայացումը որոշած էինք «Պատվի համար»-ը. Անդրևաս էլիզբարյանի պատասխանատու դերը վերապահված էր Գարեգին եղբորս, Սաղաթելի դերը տրված էր Մ. Ներսիսյանին, իսկ Արտաշես Օթարյանի դերը ես պիտի խաղայի: Պատրաստվում էինք և անհամբեր սպասում օրվան:

Վերջապես ներկայացրինք «Պատվի համար»-ը, որն իր ամբողջությամբ անցավ խրախուսական: Երկաթե թատրոնը ամբողջությամբ լիքն էր թատերասեր ժողովրդով: Քաջալերված այդ ձեռնարկից, սկսեցինք մեր հերթական ներկայացումները: Երկրորդ ձեռնարկը հայտարարված էր «Զար ոգին».

Գիծ Գանիելի պատասխանատու դերը ինձ էր վիճակված: Երիտասարդ էի, բայց պետք է ապրեի այդ ցավատանջ, հոգեբանական նուրբ դերը: Բեմում ես թե՛ նվագում էի և թե երգում: Չորրորդ արարվածին ես այնքան հուզված էի, որ երբ դրսից ներս էի մտնում, ազատելու անմեղ Սոնային, փշրելով պատուհանի ապակիները, ձեռքերիցս արյուն էր հոսում: Ես քնձանից դուրս էի եկած և կարծում էի, որ իրականության առջև եմ գտնվում: Ներկայացումը վերջացավ փոթորկալից

ծափերու մեջ: Հաջորդաբար ժողովրդի փափագին ընդառաջելով, ներկայացրինք մի շարք օպերեաներ: Ճիշտ այդ ժամանակ Բաթում ժամանեց դերասանապետ Հովհաննես Աբելյանը. նա որոշած էր արտասահման անցնել Թատերական գաստրոլների համար: Վարպետի խորհրդի համաձայն մենք էլ մի քանի ընկերներով որոշեցինք կարճ ժամանակից հետո անցնել արտասահման, տեսնել նոր երկրներ, նոր բարքեր և մի քանի տարիներից հետո վերադառնալ հայրենիք:

ԴԵՊԻ ՕՏԱՐ ԱՓԵՐ

1918 թվականի վերջերը, անցազրային խնդիրները կարգադրելուց հետո պատրաստվում էինք մեկնելու: Այդ օրերին Բաթում ժամանեց հսկայական մի նավ, որի անունն էր «Կոստանդին»: Վերջը իմացանք, որ դա սեփականությունն է Գյումուշկերտյան անունով մի պոլսահայի: Այդ ժամանակ Հայաստանից և Կովկասի այլ կողմերից բազմաթիվ հույներ վերադառնում էին իրենց հայրենիքը, և ահա «Կոստանդին» նավը բեռնավորված երկու-երեք հազար հույն հայրենադարձներով, պիտի մեկնեի Պոլիս և այնտեղից էլ ուղղակի Հունաստան: Ես և ընկերս նավային ընկերությունը դիմեցինք, ստացանք տոմս, և մի տխուր օր հեռացանք հայրենիքի սահմաններից:

Նավը շարժվեց դեպի հեռավոր հորիզոնները: Սև ծովը սկզբում խաղաղ էր, բայց շուտով փոթորկեց: Ահռելի ալիքները հսկա նավը դարձրել էին խաղալիք, մեծ անհանգրստություն էր տիրում ամբողջ նավում, լավում էին լացի և հեկեկանքի ձայներ:

Անսպասելի կերպով հայտնի դարձավ, որ նավի վրա բուն է գրել վարակիչ մի ախտ: Տխուր էր տեսարանը և սրտաճմլիկ: Հույս չկար որևէ տեղ կանգնելու: Քարանթինի դեղնագույն դրոշակը ծածանվեց նավի վրա:

Մի քանի օրից պարզվեց, որ մեր մեջ 120 հոգի հայեր կային, մեծ մասամբ արևմտահայեր. զանգատվում էին, որ իրենց ուտելիքը վերջանում է: Ես և ընկերս մեր ունեցած պաշարը բաժանեցինք եղբայրաբար և մի քանի օրից հետո մենք էլ մնացինք առանց սնունդի:

Նավում կար հույն մի քահանա, որին հանձնված էր ներգաղթողների խնամքի գործը: Նա բաժանում էր իր ժողովրդին հաց, ձիթապտուղ և այլն: Ես ու ընկերս որոշեցինք նրանից օգնություն հայցել: Բարի քահանան ընդառաջելով մեր խնդրանքին, որոշ քանակությամբ հաց և ձիթապտուղ հանձնեց ընկերոջս՝ բաժանելու հայերին: Վերջապես մի քանի օրից հետո հասանք Պոլիս, նավը կանգ առավ քարանթինի դրոշակը ծածանած: Բացարձակապես արգելվեց ցամաք իջնել: Հուսահատությունը մեղ խեղդում էր, չգիտեինք ի՛նչ անել: Նավային պաշտոնեության միջոցով լուր ուղարկեցինք ազգային իշխանությունը, որ մի միջոց ստեղծեն ցամաք դուրս գալու համար: Սակայն այդ անկարելի էր: Շուտով մեր նավը շարունակեց իր ճամփան դեպի Սալոնիկ: Շատ տխուր էինք, որ մեզ չհաջողվեց ցամաք իջնել: Մտաւորապես մեկ ու կես օրվա ճամփորդությունից հետո հասանք անմարդարնակ մի վայր: Նավը ցամաքին մոտենալուն պես հունական ոստիկանությունը շրջապատեց և հարցաքննեց բոլոր ճամփորդներին: Հրամայեցին մերկանալ, մտնել մի ինչ-որ ջրի տակ մաքրվելու, լողանք առնելու: Որոշ ժամանակ

մնացինք մերկ, մինչև որ մեր զգեստները ախտահանվեցին, հետո բաժանեցին տերերին և ոստիկանության հսկողության ներքո առաջնորդեցին մեզ փայտաշեն խցիկների մեջ: Որոշեցինք կառավարչից խնդրել, որ մեզ ազատ արձակեն, բայց անկարելի եղավ: Պետք է համակերպվեինք մեր ճակատաբերի հետ: Երկրորդ, երրորդ գիշերն էր, որ սուկալի էր մեր վիճակը. մնացել էինք մոլորված: Ես համոզված էի, որ եթե երկար մնանք այդ վայրում, մենք էլ պիտի վարակվենք այդ նույն հիվանդությունից, որի ճանկերից քշերն էին ազատվում:

Հագար անգամ զլջացինք հայրենիքից բաժանվելու համար: Ընկերս՝ Օհանյանը ինձ հույս էր տալիս՝ «Մի՛ մտածիր» ասելով, «Մի բան կանենք.— «Ի՞նչ բան» — հարցնում էի նրան: Օհանյանը ասում է. «Երեկ գիշեր զաղսնապես տեսնվեցա պահակի հետ, նա խոստացավ մի ճանապարհ ցույց տալ մեզ, սակայն պետք է նրան լավ վարձատրել: Կաշառք տալ և մի հրաշքով ազատվել այս դժոխքից: Մի քանի օրից հետո ընկերս կարգադրած էր այդ խնդիրը: Պահակի ցուցմունքով զաղսնի ճանապարհով, խորհուրդով ձորերի միջով, բեռնավորված, վախճ սրտներս զնում էինք: Վերջապես երևաց Մալոնիկի ծայրամասը: Առաջին հանդիպող հույնին խնդրեցինք, որ մեզ ցույց տա Հայոց եկեղեցին: Մերոնին տեսնելով որ օտարական ենք և անծանոթ միջավայրին, ընկերացավ մեզ մինչև Հայոց եկեղեցին: Մեզ ընդունեց մի ալեզարդ ծերունի քահանա: «Ձեր խոսակցությունից երևում է, ասաց նա, որ կովկասահայեր եք, ես շատ եմ սիրում կովկասցիներին՝ իրենց անկեղծության և հայրենասիրության համար, դուր կարող եք այստեղ հանգիստ լինել»:

Երրորդ օրը լուսարացին, ի՞նչ տեսնեք, քարանօթինց մնացյալ բոլոր հայերը մեկիկ-մեկիկ զաղսնի ճանապարհներով եկել և լցվել էին եկեղեցու բակը: Մեր քահանան զրոները լայն բացեց բոլորի առաջ և տեղավորեց վերնահարկը՝ գիշերելու համար. միևնույն ժամանակ տեղեկացրեց եկեղեցու վարչությանը՝ խնամք տանել, ուտելիք հայթայթելու եկողներին:

Անցան օրեր: Եկեղեցու մեջ ազմուկը և անհամաձայնությունը շարունակվում էր, և ցավալի իրականություն՝ փախստականներից ոմանք իրենց հետ բերած էին հիվանդություն, վարակված էին: Տեր Պետրոսի հետ խորհրդակցելուց հետո զաղսնապես դիմեցինք բժիշկների օգնությանը: Ես և ընկերս լծված էինք աշխատանքի, դարձած էինք մի-մի հիվանդապահ: Շուտով ևս էլ ընկա անկողին, և բավական ծանր էր վիճակս:

Մեկ օր, առավոտյան դեմ, մեկ էլ հանկարծ մի սառն ձեռք հպվեցավ ճակատիս, աչքերս բացի՝ մի անծանոթ անձնավորություն դեմս կանգնած: Մտածեցի՝ արդյոք բժիշկ է, բնազդաբար զգացի, որ վտանգը հասած է: Անծանոթը երբ հեռացավ, ինքդինքս հավաքեցի, վախճ սիրտս առած անմիջապես պայուսակիցս հանեցի նոր զգեստներս, հագնվեցա, երեսս դժվարությամբ ածիլեցի և ուղում էի ոտքի կանգնել, բահանային տեղեկացնել իմ կացության մասին: Դժբախտաբար ոտքի շփ կարողանում կանգնել, ուժասպառ էի եղած: Զեռնափայտի օգնությամբ առաջացա դեպի բակը և այնտեղից էլ աստիճանների վրայով՝ քահանայի բնակարանը: Քահանան շահվատաց իր աչքերին. «Պարոն Արժիվ, ինչպե՞ս կարողացաք անկողնուց դուրս ելնել և այս աստիճաններից բարձրանալ»: «Սը՛րը՛ս» ձայն տվի,— ինձ ներս տարեք մի

ապահով տեղը: Քահանան թեև մտավ և ինձ առաջնորդեց ճաշասենյակը: «Տներ հայր, ոստիկանությունը գտել է հետքերս, շրջապատած է եկեղեցին և որոշած է քարանթիինից փախածներին ետ վերադարձնել, իսկ այնտեղ վերադառնալ՝ նշանակում է դերեզման մասնել: Ծիշտ այս խոսակցություն վայրկյանին դուրս գարկին: Քահանան ինձ առանձնացրեց մի անկյուն: Ներս մտան մի ոստիկան և կառավարական բժիշկը. կանչեցին Տեր Պետրոսին՝ փախստականների մասին տեղեկություններ առնելու համար: Վարակված հիվանդներին փոխադրեցին կրկին քարանթին: Ընկերս՝ Սհանյանը, դուրսը լինելու պատճառով ազատվեցավ այդ փորձանքից, և երբ վտանգը բոլորովին անցած էր, տեր հոր հետ միասին եկան ինձ մոտ: Հոգեպես ուրախ էի, որ մի մեծ փորձանքից վերջապես ազատված էի և հանգիստ շունչ էի քաշում, կարծես այլևս տաքություն չունեի և բավականին լավ էի զգում ինձ:


Մի քանի հայրենակիցների հետ խորհրդակցելուց հետո քաղաքում մի սենյակ վարձեցինք և բժշկությունն շարունակվեց: Մոտ երկու ամիս էլ անկողնին ծառայեցի չերմի հիվանդություններ: Անիծյալ հիվանդությունը ինձ հալումաշ էր արել: Բոլորովին ուժասպառ, հագիվ ստքի վրա կանգնելու կարողություն ունեի: Տեր Պետրոսի միջամտությամբ անցադրերս պատրաստել տվինք և առաջիկա նավով որոշեցինք անցնել դեպի Իզմիր, որտեղ կար պատվական մի հայ գաղութ:

ԳԵՊԻ ԻԶՄԻՐ

Իզմիրը Սալոնիկից շատ հեռու չէ. երեկոյան դեմ երևաց նավամատույցը: Երկու ժամ սպասելուց հետո անցադրեր

քննող ոստիկան-սպան հայտնեց, որ գաղթականներին քաղաք չեն ընդունում, պետք է կրկին ետ վերադառնանք: Մտածում էինք՝ արդյոք ո՞վ է, որ մեզ ներս չի ընդունում, հունական ոստիկանությունը՝ թե հայ գաղութի պատվարժան խորհուրդը: Պարզվեց, որ Իզմիրի ազգային խորհրդի պատվերովն է այդ, ավելի ճիշտ՝ այնտեղի ջոշերի որոշումն է, որպեսզի որեկից հայ չընդունեն՝ իրենց զլխացավ շպատճառելու համար: Բողոքեցինք այդ անհիմն կարգադրության համար և բացատրեցինք, որ մենք գաղթականներ չենք, այլ անցորդներ և ունինք օրինավոր անցադրեր: Ի դուրս եղավ մեր բողոքը, ոստիկանությունը հրամայեց անմիջապես վերադառնալ նավ: Վիճակս վատ էր, բոլորովին շէր լավացած, դեռ հիվանդ էի և կարոտ բժշկական խնամքի: Հուսահատությունը խեղդում էր ինձ: Որոշեցինք անձամբ տեսնվել կապիտանի հետ, աղերսել մեր փրկության համար: Առաջ ընկերս ներկայացավ կապիտանին և մանրամասն պարզեց մեր վիճակը: Նավաստին տեսնելով իմ անտանելի դրությունը, խղճահարվեց և ապա հույս ներշնչելով հեռացավ: Մենք անհամբեր սպասում էինք նրա վերադարձին: Սև ամպերը կարծես ցրվում էին, մեծ հույսով և հավատքով սպասում էինք կապիտանի վերջնական որոշումին: Մի քանի բոլակից հետո նավային պաշտոնյան վերադարձավ ժպտադեմ և հայտնեց, որ կարգադրված է խնդիրը: «Ձեզ մի փոքրիկ նավակով քաղաքի հակառակ կողմը ցամաք պիտի հանենք, միայն ոչ ոք չպետք է իմանա»:

Մեր ուրախությանը սահման չկար: Տեղավորվեցանք փոքրիկ մակույկի մեջ: Առիթից օգտվելով՝ մի քանի ճարպիկ հայ երիտասարդներ նույնպես մտան մեր մակույկը և մի քանի



վարկյանից հետո իջանք ցամաք: Մեր նյութական բոլոր միջոցները հիվանդության պատճառով վերջացած էին. գրպանումս մնացել էին վերջին 25 դրախմին, այդ դումարն էլ վճարեցինք մի ձիակառքի և մեկնեցանք սուրբ Ստեփաննոս կոչված հայոց եկեղեցին: Ընկերս բակում մնաց, իսկ ես գոնասպանին խնդրեցի ինձ ներկայացնել առաջնորդին:

Դուրք բացվեց և Տեր-Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյան սրբազանը ինձ ներս կանչեց: Ասացի «Աստված օգնական, սրբազան հայր», «Աստված պահպան, զավակս», — պատասխանեց նա: Մոտեցա, ուզեցի ձեռքը համբուրել, չի՞ողեց: Մի քանի ջերմ խոսքերից հետո կանչեց իր գրադրին և պատվիրեց, որ ինձ համար թեյ և կարկանդակ բերեն:

— Զավակս, ձեր խոսակցությունից երևում է, որ դուք կովկասահայ եք». «Այո» — պատասխանեցի ես: Տեր Ղևոնդը զլուխը բարձրացնելով, մի ակնարկ ձգեց պատի վրայի մեծ նկարին, և ասաց. «Տեսնո՞ւմ եք այս լուսանկարը, Իզմիրի նախկին առաջնորդ Տեր Մելիքսեթ արքեպիսկոպոսն է, բնիկ զարաբաղցի. երջանկահիշատակ սրբազանը այս դադուբի համար մեծ ծառայություններ է մատուցել և սակայն չի գնահատված՝ իր ճշմարտասիրության համար, իսկ մահվանից հետո, հայությունը սիրած է նրան և նույնիսկ պաշտած: Նրա նշխարները կհանգչեն սուրբ Ստեփաննոսի դամբարանի մեջ: Մեր ազգը իր արժանավոր զավակներին սիրում է մահից հետո:

Շուտով գրագրի ընկերակցությամբ ինձ առաջնորդեցին Բալթազարյան հիվանդանոցը:

Աննշմարելիորեն տաքությունս սաստկացել էր, զառան-

ցասքների մեջ մտածում էի ընկերոջս մասին, արդյոք ի՞նչ կզավ, Օհանյանը ո՞ւր գնաց:

Առավոտյան դեմ եկավ ինձ մոտ հիվանդապահուհին և հայտնեց, որ մի երիտասարդ ուզում է ինձ տեսնել: Ուրախացա — անպայման ընկերս կլինի: Նա ներս մտավ տխուր, տրտում. խիստ հուզված էր, արցունքները աչքերին: Պատմեցի նրան, որ բժիշկը ինձ հույս տվեց, ասեց, որ շուտով ոտքի պիտի կանգնեմ, կլավանամ, ամեն ինչ կատարյալ կլինի: Ինչ որ արժեքավոր իրեր ունեի, հանձնեցի ընկերոջս և ասացի. «Գնա սրանք ծախիր և մի մանդոլին դնիր»: Նա զարմացած հարցրեց. «Ինչո՞ւ համար են այդ խոսքերը»: «Նրա համար, որ դու գնաս սրճարաններում նվագելու, պատվավոր կերպով հացդ հանես, մինչև լավանամ, հետո կմտածենք մեր անելիքների մասին»: «Ի՞նչ ամոթ բան է, չե՞մ կարող» — պատասխանեց Օհանյանը: «Ինչո՞ւ շեք կարող, ամոթը թշվառության մեջ մնալն է»: Երկար մտածելուց հետո ընկերս համակերպեցավ առաջարկիս և ասեց. «Լավ, մնաս բարյավ» — համբուրելով ճակատս, հեռացավ:

Հոգեկան մի ուրախություն պատեց ինձ. ուզում էի արտասվել, բայց ծիծաղում էի:

Հիվանդանոցում ձանձրալի էր: Բժշկի քննությունից պարզվեց, որ շուտով կարող եմ դուրս գրվել: Լուր ուղարկեցի Օհանյանին: Նա եկավ շափազանց ուրախ տրամադրությամբ: Պիտույքներս վերցրինք, երախտագիտությունս հայտնեցի հիվանդանոցի տնօրինությանը և հեռացանք: Մեկ ամիս շարունակ ես էլ ընկերացա Օհանյանին, միասին երգում էինք հույն սրճարաններում, որպես թափառաշրջիկ աշուղներ:

Մի գեղեցիկ օր որոշեցինք գնալ այցելության սրբազան

Կուրյանին: Նա սիրալիր ընդունեց մեզ, բարի խորհուրդներ տվեց և կեսօրվա ճաշին պահեց իր մոտ: Երբ իմացավ երգիչ-դերասանի իմ հանգամանքը, խնդրեց, որ երգեմ Եկմայլանի «Քրիստոս պատարագչալը»: Ես չէի կարող մերժել, երգեցի և ջանացի զո՛հ ձգել մեծ եկեղեցականը: Նա ոգևորված էր. ճակատս համբուրեց և խոստացավ ամեն կերպ օգնել մեզ, նույնիսկ իր կողմից պատվո վկայագիր տվեց, որ դժվարությունների չհանդիպենք:

Մեկ օր հայոց եկեղեցու փողոցով անցնելիս նշմարեցինք հայադիր մի ցուցանակ. «Հայ ակումբ». ուրախացանք, մոտեցանք, որոշեցինք ներս մտնել՝ հայ տեսնելու համար: Դժբախտաբար հիասթափվեցինք: Ակումբի ղոնապահը կոպիտ կերպով զիմավորեց մեզ՝ ասելով. «Դուք անդամ չեք մեր ակումբին, ձեզ ներս չենք կարող ընդունել»: Քաղցրություններ բացատրեցինք, որ մենք նորեկներ ենք, պանդուխտ հայեր, կփափաղենք հայ տեսնել և ուրիշ ոչինչ: «Անկարելի է,— պնդեց նա,— ակումբի վարչության կարգադրությունն է այդ, ես ի՞նչ կարող եմ անել»: Մեր վիճարանության ձայնը լսեց ոմն և ասեց. «Ի՞նչ եք ուզում, պարոններ, եթե որևիցե բանի պետք ունիք, դիմեցեք եկեղեցուն կամ աղքատախնամին:— Շատ ենք ցավում, որ սխալ զուռ ենք զարկել: Յտեսություն ասելով հեռացանք:

Շարունակում էինք մեր ճամփան. տեսանք մի երկրորդ ակումբ, վրան գրված էր «Կիլիկյան ակումբ»: Կանգ առինք ղուան առջև, մտածում էինք՝ ներս մտնե՞լ թե... Վճուպանություններ մոտեցանք առաջին հանդիպողին և հարցրինք. «Հայրենակից, այս ի՞նչ ակումբ է»: Նա պատասխանեց «Սոցիալ-դեմոկրատ հնչակյան ակումբ է»: «Շատ բարի, արդյոք կա-

րո՞ղ ենք ներս մտնել»: «Ինչո՞ւ չէ, համեցեք» — քաղցր ժրպիտով մեզ ընդունեց: Ներս մտանք, նստեցինք մի սեղանի շուրջ, և դարձյալ սկսվեց հարցաքննությունը: Մեր խոսակիցը անմիջապես նկատեց, որ Կովկասահայեր ենք: «Պատմեցեք նախիմ Կովկասի անցուզարձեն ինչ որ գիտեք»: «Ներքեցեք, որ չենք կարող որևիցե տեղեկություն տալ, Կովկասում մենք գրադված էինք միայն թատերական գործերով»: «Հա, ուրեմն դերասաննե՞ր եք, ուրախալի է. ի՞նչ ներկայացումներ կուտաք»: — «Դրամաներ, օպերետներ և համերգներ»: «Հաշտություն կմաղթեմ, երբ պետք ունենանք՝ ձեզ նկատի կունենանք»: Մեր քայլերը ուղղեցինք դեպի Հայոց եկեղեցի: Սակայն ահա և ուրիշ մի ակումբ, վրան գրված. «Ժողովրդի տուն»: Մտածեցինք, որ անպայման հայ մարտականների հավաքատեղին է. նրանք վարպետ են դրսից այցելող հային քաղցրությամբ զրավելու, սիրաշահելու: Եվ իսկապես. մեզ տեսնելուն պես մի բարձրահասակ, թուխ դեմքով տղամարդ մոտեցավ, բարևեց. «Հայրենակիցնե՛ր, ինչպես երևում է, զուք նորեկներ եք. համեցեք, մեր ակումբի ղուռը բաց է ձեր նմանների առջև, ներս մտեք, մի փոքր տեսակցինք»: Ճիշտն ասած, ես չէի ուզում մտնել, տեղյակ էի նրանց հոգեբանությունը, սակայն առ ի քաղաքավարություն, ստիպվեցանք մի բանի վայրկյան ներս մտնել: Դարձյալ սկսվեց հարցուփորձը. դա մեզ համար այնքան էլ հաճելի չէր: Ավելի ճիշտը, վիճարանության տեղիք շտալու համար, ներողություն խընդրելով հեռացանք: Եկեղեցու անկյունի մոտ տեսանք մի ցուցափեղի՝ զրադարան էր: Այստեղ բախտ ունեցանք ծանոթանալու վարժարաններու տնօրեն Գառնիկ Բարունակյանի հետ: Նա պատրաստված, լայնախոհ, համակրելի մի անձնավորու-

թյուն էր: Մտերմացանք նրա հետ, լսեցինք նրա բարի խորհուրդները և աստիճանաբար անցանք գործնական աշխատանքի:

Փոքր ժամանակից հետո ունեցանք մեր առաջին ձեռնարկը, ցուցադրեցինք երգախառն պատկերներ և կովկասյան պարեր: Բարոյապես և նյութապես ունեցանք որոշ հաջողություն: Հայ գաղութը առաջին անգամ ծանոթացավ մեզ հետ: Հաջորդ մեր ձեռնարկը եղավ «Մարվոյ ճրագներ» ներկայացումը ի նպաստ ազգային վարժարանի, Իզմիրի մեծ թատրոնում: Կարճ ժամանակից հետո անցանք Մանիսա, Օդեսի՜ կոչված փոքրիկ բաղաբները. ամեն տեղ ունեցանք երկկույսհամերգներ: Օդեսի՜ լի էր դարբարազցի հայերով: Երբ մըտնում էինք որեիցե հայի տուն, իսկույն լսում էինք Ղարաբաղի բարբառը:

1921 թվականի սկզբներին Պոլսումն էի: Արևելքի այդ խորհրդավոր, բնական գեղեցկությամբ օժտված, սակայն արյունարբու սուլթանների մայրաքաղաքը, որն իր սև պատմությամբ ծանոթ է աշխարհին: Այնտեղ սնունդ են առել ազգիս մեծագույն դահիճները՝ Թալեաթ, էնվեր և նմանները, որոնք կազմակերպեցին հայկական մեծ եղեռնը 1915 թվականին, որին զոհ գնաց մեկ ու կես միլիոն անմեղ, պատվական հայ ժողովուրդ:

Այդ միջավայրում օրերս անցնում էին խիստ մտազբաղ սիրտս հանդիստ չէր, մտածում էի անվերջ՝ ինչո՞ւ հայրենիքից, հարազատներից հեռացա: Սույն մտքերով տարուբերվում էի, հանկարծ մտածեցի. «Այսօր կիրակի է, անցնեմ Հայոց եկեղեցին և հայրենակիցներ տեսնեմ»: Եկեղեցու տխուր մեղեդիները ինձ կրկին հուզեցին, երկար շկարողացա

մնալ, ձեռքումս ունեի «էկլոն» ճաշարանի հասցեն: Որոշեցի անցնել այնտեղ՝ հայրենակիցների հանդիպելու եվ հանդիպեցի ծանոթ կոմպոզիտոր Գրիգոր Սյունի Միրզոյանին, որը միաժամանակ եղած է իմ երաժշտության ուսուցիչս: Ծանոթացա նաև դաշնակահար Լևոն Տեր-Օհանյանի և բանաստեղծ Շահան Նաթալիի հետ: Այնտեղ նույնպես հանդիպեցա հայտնի քյամանչիստ Ռուբենի և թառիստ Արգարի հետ, որոնք նվագում էին հայկական օպերետներին և ժողովրդական հանդեսներին: Տեղի պատվարժան հայերը ինձ տուն հրավիրեցին: Գիպվածով ծանոթացա հանրածանոթ դերասանուհի Վարդիթեր Ֆելիկյանի հետ: Նա հայ բեմի յավագույն դերասանուհիներից մեկն էր, օժտված նույն բարեմասնություններով և ռեպերտուարով, ինչ որ առաջնակարգ դերասանուհին է: «Շահ-զադե բաշի» թատրոնում նրա ղեկավարությամբ պիտի բեմադրվեր «Քույր Քերեզա» պիեսը: Լսածիս համաձայն, Ֆելիկյան թատերախմբի կարևոր սյուններից մեկը դերասան Գարագաշն էր, սակայն հայոց լեզվին լավ շտիրապետելու պատճառով, եթե ոչ այլ պատճառներով, քույր Ֆելիկյանները հայագետ դերասան էին փնտրում. գտնվում էին անել կացություն մեջ: Ինձ առաջարկեցին մասնակցել հիշյալ ներկայացմանը, «Քույր Քերեզա» պիեսի մեջ ստանձնել Կիստաֆո Իմպոլիի դերը: Դժվարությամբ համաձայնեցի, ժամանակը կարճ էր և դերը կարևոր: Երկու օրվա մեջ գիշերը ցերեկ դարձրած սերտեցի դերս և կարողացա բեմ դուրս գալ:

Ներկայացումը տեղի ունեցավ: Դերասանուհի Վարդիթեր Ֆելիկյանը ծափողույններով գնահատվեցավ, ես արդարացրի ինձ վիճակված դերը: Նույն գիշերը Գարգանելից եկավ

էր նշանյան թատերախումբը՝ շնորհավորելու Ֆելեկյան քույրերին:

Նշանյանը ինձ տեսնելուն պես մոտեցավ, նույնպես շնորհավորեց, ասելով տիկին Վարդիթերին. «Այս երիտասարդ դերասանը բնական էր իր դերում, խորհուրդ եմ տալիս նրան պահել ձեր խմբում»: նույն ներկայացմանը կմասնակցեք նաև ներկա երգիծաբան Նշան Պեշիկթաշլյանը, Թեոդորի դերում նա շատ հաջող էր, մնացյալ դերակատարների անունները գծրախտաբար շեմ հիշում, բոլորն էլ իրենց դերերի իսկական տիպարներն էին:

Պոլսում այդ ժամանակ գործում էին մի քանի թատերախմբեր, որոնք միմյանց հանդեպ ընկերական ջերմ վերաբերմունք չունեին: Պատիշան թատրոնում պոլսահայ դրամատիկական խումբը կգործեր, մասնակցութեամբ հայտնի դերասանուհի էլիզ Կովանի և սիրված դերասան Ա. Շահխաթունիի, որ ժամանակին մասնակցած է կինոյի աշխարհածանոթ դերասան Իվան Մաժուխինի հետ «Ուֆա» ընկերության մեջ «Միշել Սարկով» ֆիլմում: Շահխաթունին որպես Իվան Յազորով, գերազանցած էր գլխավոր դերակատարին: Այսպես էին արտահայտվել միջազգային կրիտիկները: Խմբում կրմասնակցեին նաև Մ. Զանան, Գրիգոր Ավետյան, Չափրաստ և Աշոտ Մաղաթյան՝ որպես ռեժիսոր և բեմադրիչ: «Երիտասրա» թատրոնում կգործեր հայ դրամա-օպերետային խումբը՝ մասնակցութեամբ վաստակավոր դերասանուհի տիկին Գալուշի, դերասաններ Ղազոյի, Մաղալյանի և Սուրբբյան ամոյի:

Այդ օրերում ինձ կանչել էր քույր Ֆելեկյանը. նրանք առաջարկում էին ինձ մնալ Պոլսում և մշտապես մասնակցել

իրենց ներկայացումներին: Դժբախտաբար չէի կարող մնալ և ընդունել նրանց առաջարկը, ինձ ավելի երզն ու երաժշտությունն էին քաշում:

Տեղում անուն հանած Գերասիմ Արխատակեսյանի նախաձեռնութեամբ կազմեցինք համերգային մի շրջիկ խումբ և ծովային ճանապարհով անցանք դեպի Բանդրմա:

ՊՈԼՍԻՅ ԲԱՆԳՐՄԱ—ՄԻՆՁԵՎ ԻԶՄԻՐ

Բանդրման ծովափնյա մի փոքրիկ քաղաք է, որտեղ կար փոքրաթիվ հայ զաղութ, ունեին իրենց եկեղեցին, դպրոցը և թատերասահլոր: Ունեցանք մի երեկույթ և մեկնեցանք Բալթիքի. տաճկական միջավայր, որտեղ նույնպես կային հայեր, սակայն տաճկախոս էին: Այնուամենայնիվ ունեցանք մի երեկույթ և հաջորդ օրը շարունակեցինք մեր ուղղությունը Աքսարի վրայով դեպի Մանիսա:

Մեր դրությունը զնալով անմխիթարական էր դառնում, անվերջ ծախսում էինք, իսկ մուտք չկար:

Հասանք Մանիսա: Վերոհիշյալ քաղաքը մեր տեսածներից ամենաբաղմամբաղն էր, ունեին իրենց հայկական դպրոցը, սրահն ու եկեղեցին: Գիմեցինք դպրոցի հոգաբարձութեանը, որ եթե կարելի է՝ սրահը տրամադրել մեկ ձեռնարկի համար: Սակայն նրանք մերժեցին, պատճառաբանելով, որ իրենք ևս պետք ունեին այդպիսի մի ձեռնարկի: Պարզեցինք մեր նյութական անձուկ վիճակի մասին և խնդրեցինք, որ գաղութը մեզ օգնե, բայց անկարելի եղավ. այդ մարդկանց խոսք հասկացնելը

գծվար էր և մենք ստիպվեցանք առաջին ձեռնարկը տալ ի նպաստ գերեզմանի պարիսպների վերանորոգման: Քառուստ Աբգարը, կատակախոս մի անձնավորություն, պարտականու-
թյուն էր ստացել տոմսերի վաճառման խնդրում, և ով որ տոմս չէր գնում, ասում էր. «Եղբայր, զնեցեք մի քանի տոմս, էլի, աստված ձեր մեռելներուն բարաբյաթ տա»: «Տո, ի՞նչ մարդիկ են, հա... ողջերը թողած, մեռելների ետևից են ընկած»:

Վերջապես այդ ձեռնարկը տեղի ունեցավ, և մենք երկ-
րորդ հանդեսը որոշեցինք տալ հուլյն ղինվորական ակում-
բում, որն անցավ բավական հաջող: Նյութական մի փոքր հասույթ գոյացավ և Մանիսայից անցանք Իզմիր: Սա իմ երկրորդ այցն էր Իզմիր: Մեր խումբը ունեցավ մի քանի երեկույթներ: «Իզմիր թատրոնում» հրաժեշտի առթիվ որո-
շեցինք ներկայացնել Օսկար Ուալդի «Մալոմեն»: Նույն ժա-
մանակներում Աթենքից Իզմիր ժամանած էր հայտնի ջութա-
կահար Գրիգոր Քարաջյանը, որն ունեցավ մի քանի համերգ-
ներ:

Պարոն Արիստակեսյանը տեսնվեցավ Քարաջյանի հետ և մեր խմբի կողմից առաջարկեց ստանձնել բալետային օր-
կեստրի ղեկավարությունը: Քարաջյանը համաձայնեց: Մեր ձեռնարկը բարոյապես և նյութապես հաջող անցավ:

Քարաջյանի հետ ծանոթացանք Իզմիրում, սակայն մեր ծանոթությունը երկար չտևեց: Շուտով վրա հասավ Իզմիրի աղետը: Ես մեկնեցա Եզիպտոս, իսկ Քարաջյանը՝ Աթենք: Հետագայում լսեցի նրա հոշակի մասին: Փարիզի աղգային կոնսերվատորիան ավարտելուց հետո, Քարաջյանը հաստատ-
ված է եղել Աթենքի կոնսերվատորիայում, որպես ջութակի

առաջին կարգի պրոֆեսոր: Նա իր տված համերգներով բո-
վանդակ Հունաստանում մեծ համբավի է արժանանում: Հուլյն
նշանավոր երաժշտագետ Մանուիլ Գալոմիոսը գնահատած է
Քարաջյանին որպես ճիպոտի անզուգական վարպետի:
Հետագայում Քարաջյանը հետևած է ումանացի նշանավոր
ջութակահար-երգահան Զորջ-Էնեսբուրի ղարոցին: Քարաջ-
յանը մեծ վարպետությամբ կատարում էր Բեթհովենի, Մեն-
դելսոնի, Բրամսի, Պաղանինի, Բախի, Մոցարտի, Չայկովսկու,
Սեն Սանսի, և հուշակավոր շատ կոմպոզիտորների սահղա-
գործությունները: Հակառակ, որ Հունաստանում Քարաջյանը
շատ սիրված ու գնահատված արվեստագետ էր, սակայն իրեն
օտար էր զգում: Եվ ահա 1946 թվականին՝ առաջին ներգաղ-
թին միանալով՝ մեկնում է հայրենիք՝ Սովետական Հայաս-
տան: Տասնվեց տարի շարունակ, մինչև իր կյանքի վերջը,
նա աշխատեց որպես առաջին ջութակ և կոնցերտմեստեր
Երևանի պետական օպերայում: Արիստակեսյանի խորհրդով
անցանք Միտիլի կոչված կղզին, որտեղ ունեցանք մի հա-
մերգ:

Արիստակեսյան ընտանիքը մնաց Միտիլիում, իսկ ես
վերադարձա Իզմիր: Սկսվեց ողբերգությունը: 1921—22-ը:
Թուրքերը աստիճանաբար մտնենում էին Իզմիրին: Կոիլը
սկսված էր: Այդ խառնաշփոթ ժամանակներում Իզմիրում
կգտնվեր մեծանուն դերասանապետ Հովհաննես Աբելյանը,
որը մտադիր էր ներկայացնել Գեի «Տրիբին» և մեկնելու
նվրոպա: Սակայն զժվարությունների հանդիպած էր: Նախ
պետք եղած դերակատարները չէր կարողացած ապահովել
և միևնույն ժամանակ գտնել մի միություն, որ սպառեր
տոմսերը, հակառակ զեպբում նյութական հաջողություն չէր

ապահովված: Մանիսայից նոր էի վերադարձել Իզմիր, լսեցի Արեւլանի այցը և անմիջապէս գնացի վարպետին տեսութան: Արեւլանը ուրախացավ, փաթաթեց ինձ, ասելով. «ամենանեղ ժամանակս հասար, ոչ հուշարար ունեմ և ոչ էլ դերակատարներ, խնդրում եմ ինձ օգնես»: Եվ անցանք գործի: Ես ամբողջ քաղաքը ոտքի տակ տվի, քանի որ ծանոթ էի միջավայրին, և պետք եղած դերակատարները ապահովելուց հետո մի հանձնախումբ էլ կազմեցի տոմսերը վաճառելու համար: «Տրիրի» ներկայացումը անցավ մեծ հաջողութեամբ: Գերասանապետ Արեւլանը Սվենգալիի դերով միշտ էլ աննման էր: Մի քանի օրով կրկին մեկնեցի Մանիսա: Հետագայում լսեցինք, որ Արեւլանը անցած է Աթինը:

Եվ ահա այդ ժամանակներում սկսվում է Իզմիրի ողբերգութիւնը: Լսվում են վայնասունի ձայներ: Թուրք զինվորները շրջապատած են քաղաքը և առաջանում են դեպի Կորդոն ծովափը, իսկ հուլն զինվորները առանց դիմադրութեան փախուստի էին դիմում: Ցավում էի և զարմանում, միևնույն ժամանակ զայրանում, թե ի՞նչպես կարելի է մի բանակ առանց դիմադրութեան թողնի իր սեփական հողը, իր հարազատ ժողովուրդը և լքելով ամեն ինչ, նույնիսկ իր ձեռքի հրացանը, փախուստի դիմել: Թուրքական զորքերը հրդեհի տալով գրավեցին Իզմիրը: Կրակի բոցերը հասել էին երկինք, այրվում էր ամեն ինչ, սև ամպերը ծածկել էին հորիզոնը, լսվում էին լաց ու կոծի ձայներ, գնդակների շառաչունը սաստկանում էր, անվերջ սոսկումի ձայներ, աղաղակներ... Մի խումբ պանդուխտ հայեր՝ զինված թեթև զենքերով, դիմում էին ճակատ՝ պաշտպանելու անտեր մնացած ամբոխին: Գեներալ Հաճինեակիի կառավարութիւնը փախուստի ճամ-

փան էր բռնել իր կյանքը ազատելու համար: Հայ կտրիճներու անվեհեր դիմադրութեան շնորհիվ շատ-շատերը ազատագրվեցան և լցվելով նավերը, մեկնեցան դեպի Աթինը: Հայոց սուրբ Ստեփաննոս եկեղեցին շրջապատված էր տաճիկ զինվորներով, իսկ պարխուսներու մեջ հայ երիտասարդները զինված, դիրքավորված կուլում էին և սպասում դրսից օգնութեան: Իզմիրի հայ ազգային խորհուրդը մեկնած էր քաղաքից: Եվրոպացի բարձր աստիճանավոր հոգևորականների և դեսպանների միջոցով աղոթարարվեց, որ եկեղեցու պաշտպանները զենքերը վար դնեն, իրենք պիտի պաշտպանեն քրիստոնյա ժողովրդին և ազգապատկան հիմնարկութիւնները: Մինչդեռ ավելորդ հուսադրութիւն էր այդ: Սկզբում հայ մարտիկները չէին համաձայնում, բայց վերջ ի վերջո վստահանալով եվրոպացիների կեղծ խոստումներին, հանձնվեցին:

Վերջավորութիւնը եղավ խիստ ճակատագրական. ոմանց աքսորեցին անհայտ ուղղութեամբ, մնացյալներին էլ գնդակահարեցին: Մի խումբ հայ կտրիճներ որոշած էին չհանձնվել. մինչև վերջին փամփուշտը կոճում էին հերոսաբար և սարսափի մատնում տաճիկ զորքերին, ազատում հարյուրավոր կյանքեր: Հայ պատանիները և օրիորդները գնդակների տարափի տակ հասնում էին օգնութեան, վիրավորներին փոխադրում էին հիվանդանոց: Կրակի բոցերը տարածվել էին ամեն կողմ: Զարհուրելի տեսարան էր, իսկ անգութ անգլիացիները և ամերիկացիները իրենց մարտանավերով եկած էին թամաշայի, և օգտվելով առիթից, կիսոյի հատուկ պատկերներ էին վերցնում: Նրանք հրճվում էին և հեռագրիտակներով նայում, ուրախանում... Անսիրտ, չար ոգիներ. մարդկային ցավի ձայնը նրանց չէր ազդում. սաքսոնական վատասիրտ հրեշ-

ները սառնասրտութեամբ նայում էին այդ սոսկալի տեսա-
բանին, ներքնապես ուրախանում ուրիշներէ թշվառութեանը
տեսնելով, կարծես որոշ գոհունակութեան էին զգում: Այդ
օրը մի քանի ընկերներով փախուստի դիմեցինք և պատա-
պարկեցինք «Իզմիր» կոչվող թատրոնի վերնահարկում: Սար-
սափելի դրութեան մեջ սպասում էինք մեր ճակատագրի
որոշումին: Ես ունեի մի ուս արտիստ բարեկամ, որին կո-
չում էին Կոնստանտին Սեմյոնովիչ: Նա կապեր ուներ ուսա-
կան դեսպանատան հետ. նրա միջոցով տեղեկացրինք, որ
մի քանի ուսահայտակներ օգնութեան կկարոտեն, քաղցած,
անապահով դրութեան մեջ կգտնվեն: Դեսպանատան կողմից
ստացանք սնունդ և մի փոքր ապահովություն: Սակայն այդ
երկար շտեկեց, թուրքերը սկսեցին հետապնդել մեզ. վատ էր
մեր դրութեանը, կարող էինք ծուղակ ընկնել. մտածում էինք
մի էլք որոնել և չէինք կարողանում, ուզում էինք Իզմիրից
փախչել, հեռանալ, բայց ո՞ր և ինչպե՞ս, երբ քաղաքը շրգ-
թայի մեջ էր առնված: Հեռվից լսվում էին աղաղակի ձայներ
և երբեմն էլ պայթուցիկների ուժգին որոտ: Հույն զինվորները
բռնորովին բարոյալքված, թողնելով քաղաքը, հեռանում էին:
Քուրք հրեշները չէին խնայում ո՛չ ծերին, ո՛չ մանուկին, ան-
զբթորեն կոտորում էին ամենքին և թալանում ամեն ինչ: Երբ
մթնշաղը հասավ, երեք ընկերներով գուրս եկանք վերնահար-
կից և մխրճվեցանք ամրոխի մեջ, զգուշությամբ անցանք
քարափը, մի ակնթարթում նետվեցինք ծով: Նախընտրեցինք
ծովի ալիքներին հանձնվել, քան թե տաճիկ մարդակերներին:

Կյանքում փոքրիկ լուրորդներ էինք, բայց այդ գիշեր դար-
ձել էինք կատարյալ լուրորդներ: Ընդհանրով ծովի ալիքները,
գնդակների շոռաչունի տակ շարժվում էինք առաջ. Հան

կարծ հեռվում նկատեցինք ափից բավական հեռու կանգնած
մի նավ: Մեր փրկութեան խարխուլը այդ նավն է լինելու մը.
տածելով՝ ուժ տվինք մեր բազուկներին: Մեր հույն ընկերը,
որը ուղեցույց էր մեզ, վիրավորվեց ճանապարհին և մենք
սոսկալի դրութեան մեջ նետվեցինք նավը: Այն տեղից չէր
շարժվում. պատմում էին որ երկար տարիներ Իզմիրի քա-
րավում մնացել էր ծովի մեջ անշարժ: Երկու-երեք օր մնա-
ցինք նավի մեջ, հեռվից տեսնում էինք քաղաքը կրակի մեջ:
Ներեկը թաքնվում էինք նավի նկուղում, իսկ գիշերները գուրս
գալիս, ձայն տալիս անցնող նավերին, որ մեզ ազատեն:
Բայց գժբախտաբար մեր ձայնը լսող չկար: Վերջապես տե-
սանք մի անգլիական զրահանավ, որը մեզ շատ մոտ էր:
Նետվեցանք ծովը, մոտեցանք նավին և խնդրեցինք որ մեզ
ազատեն. անկարելի եղավ: Փոխանակ մարդասիրության,
տաք ջրով մեզ պատասխանեցին: Ստիպվեցանք կրկին վե-
րադառնալ մեր տեղը, բայց չգիտեմ ինչու ուրախ էինք: Կար-
ծես մի լավ բան էր սպասում մեզ: Այո, ազատված էինք
Իզմիրի հոռ ճարակից, ուրեմն իրավունք ունեինք ապրելու
Այդ հույսով մխթարվում էինք, երբ երևաց մի ուրիշ նավ՝
ամերիկյան դրոշակով: Ամերիկացիները մարդասերի անուն
են հանել. մտածում ենք՝ մեզ կօգնե՞ն: Չեղբով նշան արե-
ցինք, փրկութեան աղերսեցինք, բայց իզուր: Նրանք էլ, անգ-
լիացիների պես, մեզ երես դարձրին:

Դարձյալ նավի նկուղումն ենք, բայց հույսերս չկտրած:
Եվ հանկարծ հեռվից նկատեցինք մի փոքրիկ նավ՝ հունական
գրոշակով: Հույն ընկերս ուրախացած բացականչեց. «Հայրե-
նակիցներ՛ր, օգնեցե՛ք մեզ»: Նավը մոտեցավ, ընդունեց: Ուրա-
խութեանից փաթաթվեցանք նավաստիներին և համբուրեցինք

Իրանց, Սաստիկ ծարավ էինք և քաղցած: Նավաստիները
 մեզ հյուրասիրեցին, Վերջապես փրկված էինք և երախտա-
 պա՛րտ հուշն նավապետին, որը մանրամասնորեն հարցաքըն-
 նեց: Պատմեցինք նրան Իզմիրի անցուղարձի մասին: Կարծես
 մեր պատմությունը նրան շէր հետաքրքրում: Ես մնացել էի
 պարմացած: Կապիտանն ասաց. «Ի՛նչ կիրպ պիտի կարողա-
 նաք մեզ գոհացնել»: Ինչ որ ունեինք, արժեքավոր բաներ,
 հանձնեցինք նրան և խնդրեցինք, որ մեզ մի հարմար
 տեղ իջեցնի: Ափ իջանք Միտիլի կղզում, որտեղ մնացինք
 թշվառություն մեջ, փողոցում, քաղցած և անօգնական: Սա-
 կայն ուրախ էինք, որ ազատվեցանք Իզմիրի սպանդից: Մի
 քանի օր քնահատ թափառում էինք: Տեղական լեզվին բոլո-
 րովին անծանոթ, շփոտեցինք ի՛նչ անել: Ընկերոջս հույս տա-
 լով, ասացի. «Պետք է մի բան անել, այնպես չէ՛, մինչև ե՛րբ
 թափառել. թեկուզ որևիցե ծառայություն, ամոթ չէ: Չէ՛ որ
 մենք կարող ենք երգել»: «Այո, ճիշտ ես ասում, երաժշտու-
 թյունը համամարդկային է, ամեն աղբ կարող է մեզ լսել,
 երգե՛նք»:

Այս մտքերով պաշարված, մտանք սրճարան, ներկայա-
 ցանք սրճարանապետին, կես հունարենով պարզեցինք մեր
 նպատակը, նա սիրով համաձայնեց: Գտանք մի նվագա-
 գործիք, որի վրա ես բավականին վարժ էի, մի քանի զիշեր-
 ներ երգեցինք ու նվագեցինք: Սրճարանապետը և ներկա
 գտնվող ժողովուրդը մեզ սիրեց, և այդպիսով մի փոքրիկ գու-
 մար հավաքելով որոշեցինք անցնել Աթենք, որտեղ կային
 բավականաչափ հայեր Իզմիրի փախստականներից: Այդտեղ
 գտա ընկերոջս՝ Հայկ Օհանյանին, որին թողել էի Օդեսիշում:
 Երկու շաբաթ մնալուց հետո որոշեցի անցնել Եգիպտոս:



Էմմա և Հայկ Արծիվներ (կյանքում)



Հայկ Արծիվը Աշուղ Չարիբի զերում

Ընկերս մնաց Աթենքում, իսկ ես առանց տոմսակի մտա նավ՝ մեկնելու դեպի Ալեքսանդրիա: Տոմսակ գնելու բացարձակապես միջոցներ չունեի: Կային ինձ նման բախտակիցներ ևս: Բավական է, որ անցագրներս կատարյալ էին, վախ չունեինք:

Մտանք անգլիական նավը: Երեկոյան դեմ ուղևորվեցինք դեպի Ալեքսանդրիա: Մտածում էի. «Ու՛ր եմ զնում. անձանոթ չէյրեր: Արդյոք ի՞նչ է սպասում ինձ: Հայրենիքից հեռու, անտեր, անօգնական»:

Մեկ-երկու օր ճամփորդությունից հետո ծովը սկսում է աղմկել, սիրտս զգում էր ինչ-որ անախտօժ մի բան: Նավային պաշտոնեություն կարգադրությամբ բոլոր ճամփորդները ենթարկվեցին ստուգման: Հայտնաբերվեցին բավական թվով անտոմս բախտակիցներ: Մեր անցագրերը ձեռքներիցս վերցրին և խստորեն սպառնացին. «Պետք է տոմսերի փոխարժեքն անպայման վճարել, հակառակ դեպքում ձեզ ծովը կնետենք կամ ետ կվերադարձնենք»: Այս դեպքը խստորեն ազդեց ինձ վրա. շափազանց զղջացել էի անտոմս ճամփորդելուս համար: Տխուր էի և մտազրաղ: Նավում կային ինձ ծանոթ հարուստ հայեր, որոնք ներկա էին այդ տխուր տեսարանին, բայց նրանցից ոչ մեկը չհետաքրքրվեց իմ վիճակով, ես էլ զուսպ էի ու լռակյաց, սպասում էի արդյունքին: Այդ պահին մի անձանոթ երիտասարդ մոտեցավ ինձ, ֆրանսերենով բարևեց և ասաց, որ ինձ տեսել է Իզմիրում գտնված ժամանակս, երբ մենք Կորդոնի թատրոնում կենդակայացնեինք Օսկար Ուայլդի «Սալոմեն»: Միևնույն ժամանակ ասաց,

որ ինքը արտիստներին շատ է սիրում և չի ցանկանում նրանց ախուր տեսնել: «Եթե որևիցե մի դժվարություն կա, ասում է նա, խնդրեմ ինձ հայտնեցեք, թերևս մի բան կարողանամ անել, մի՛ քաշվեք»: Նա սկսում է ինձ հարցաքննել, ես լռությամբ պատասխանում եմ, որ ոչնչի կարիք չունեմ: «Ոչ, ոչ, այստեղ մի բան կա, դուք թաքցնում եք ինձանից», — ասելով, մտնում է նավային գրասենյակը և մի քանի րոպեից վերադառնում է անցագիրս ձեռքին. «Ննդրեմ, ստացեք ձեր անցագիրը, ամեն ինչ կարգադրված է: Այս փոքրիկ գումարն էլ ընդունեցեք, առաջիկային պետք կունենաք»: Փորձեցի մերժել, սակայն երիտասարդը ուժով գրսյանս գրեց, ձեռքս սեղմեց և ասաց. «Դարձյալ կհանդիպենք, ահա իմ հասցեն»: Երիտասարդը հույն էր, Ալեքսանդրիայում ծխախոտի գործարանատիրոջ որդի: Հասցեն պահեցի մոտս, որ կարողանամ պարտքս վերադարձնել:

Վերջապես հասանք Ալեքսանդրիա: Նոր երկիր, նոր միջավայր: Զարմացած նայում էի շորս կողմս: Մարդիկ երկար սպիտակ շապիկներ հագած շրջում էին փողոցներում, նրանց դիմագիծը կոշտ էր և թխաղեմ: Արաբերեն լեզուն չունեի այն ճկունությունը, որ գրավեր օտարականին, ամենամեղմ խոսակցությունն անգամ կոշտ էր թվում իմ ականջին: Արաբ Գարու ներքինը շատ ավելի գրավիչ է, քան նրա արտաքինը:

Նավամատուցից վերցրի մի կառք և հարցուփորձով ուղեվորվեցա դեպի Հայոց եկեղեցին: Առաջին առթիվ ծանոթացա Հայկազուն քահանա Ոսկերչյանի հետ, որը միևնույն ժամանակ ազգային վարժարանի տնօրենն էր և մի փոքր էլ երաժիշտ: Իմանալով արվեստագետի իմ հանգամանքը, ջերմորեն ընդունեց, խոստացավ օգտակար հանդիսանալ: Ինձ

չըջապատեցին նաև զպրոցի ուսուցիչները և հետաքրքրվեցան զլուխս եկած փորձանքներով: Իզմիրի աղետի մասին իմ տրված տեղեկությունները արձագանք գտան հայ թերթերում: Անտիճանաբար ծանոթացա թատերասեր երիտասարդության հետ և առաջին առթիվ ունեցա զեղարվեստական մի երեկույթ: Հետո ներկայացրի «Աշխարհի դատաստան» ողբերգությունը: Մի փոքր ժամանակից հետո որոշեցի անցնել Կահիրե: Որքան հիշում եմ՝ դա 1922 թվականն էր:

Կիրակի մի օր, առավոտյան դեմ, բնկերակցությամբ մի հայի, մտա հայկական ժողովրդասրահը, որտեղ ծանոթացա զերասան Մատթեոս Մանամյանի հետ. կրթված, պատրաստված մի անձնավորություն: Նրա մասնակցությամբ կազմեցինք թատերախումբ: Առաջին առթիվ ներկայացրինք «Վերադարձը», հետո՝ «Փարոսի պահապանները» և այլն... Այդ ժամանակներում Կահիրե ժամանեց մի թատերախումբ, որի ղեկավարն էր զերասան Անդրանիկը: Նրանք Մանամյանին և ինձ խնդրեցին, որ իրենց մի քանի ներկայացումներին մասնակցենք: Որոշած էին բեմադրել Շանթի «Հին աստվածներ»-ը: Անդրանիկի թատերախմբին կմասնակցեի նաև երիտասարդ զերասան Առն Հարութը, որ պիտի կատարեր Աբեղայի դերը: Մանամյանին վերապահված էր Իշխանի դերը, իսկ ինձ՝ ճրգենավորի և կույր վանականի զույգ դերերը: Վանահոր պատասխանատու դերը պիտի կատարեր զերասան Անդրանիկը, իսկ Իշխանուհու դերը՝ տիկին Ազնիվը: Սեղայի սիրային նուրբ երազներով օժտված դերը ստանձնած էր օրիորդ Պերճուհին (Անդրանիկի զուստրը), որն ամենից աչքի ընկնողն էր այդ խմբում: Ներկայացումը տեղի ունեցավ Կահիրեի մեծ թատրոնում: Ողբերգությունը սակայն փոխվեց կատակերգության,

երբ ֆրանսիական թատրոնի դերասան Լեոն Հարուֆը, ինչպես ինքը կ'ընդեր, հուզված բացականչեց. «Բայ գիրկդ, Սեդա, ահա գալիս եմ» և խելագարի նման նետվեց ծովային պատանու վրա, ամբողջությամբ պատռեց վարագույրը: Իրարանցում: Մենք մնացինք շփոթված դրուժյան մեջ: Վարագույրը իսկույն փակվեց:

Մի առժամանակ մնացի Կահիրեում: Ընկերներին անգործ վիճակը ինձ մտահոգում էր, նրանք գտնվում էին նյութական ծանր կացության մեջ: Ես իմ դժգույն նյութական միջոցներով Եղբայրաբար օգնում էի և դիմումներ կատարում այստեղայնտեղ՝ գործ գտնելու: Մի քանի հայրենակիցների խորհրդով պիտի դիմեի Հայոց Բարեգործական ընկերության վարիչ Վահան Մալեզյանին, որ ուներ մեծ կապեր հայ գործարանատերերի հետ: Ուղևորվեցինք զեպի Ընկերության գրասենյակը: Դռնապահը արգելեց մեզ ներս մտնել, պատճառաբանելով, որ օտար մարդկանց մուտքը արգելված է: «Այն հայերը, — ասում է դռնապահը, — որոնք անդամ չեն Հայոց Բարեգործական ընկերության, իրավունք չունեն գրասենյակը մտնելու»: Ընկերներիցս մեկը, որ ֆիզիկապես սոսկալի ուժեղ մեկն էր, անունն էլ Առջ-Պետրոս, ասաց «Տո, թե դուրը չբանաս, ե՛ս կրանամ»: Ես միջամտեցի և բացատրեցի այդ կոպիտ դռնապանին, որ մենք եկած ենք տեսնելու պարոն Մալեզյանին՝ իր ժամադրության համաձայն, բայց դռնապանը չուզեց լսել և կոպիտ կերպով պատասխանեց. «Մալեզյանը գրասենյակը չէ, հասկանո՞ւմ եք»: Վրդովված ընկերներս դուրը ուժով բացին և մենք ներս ընկանք: Գրասենյանի վրա դասավորված էին գրքեր, թերթեր, պատից կախված էր մի մեծ գորգ, վրան ասեղնազործված մեծ զորավար

Անդրանիկի դիմանկարը: Մենք հիացմունքով նայում էինք և սպասում պարոն Մալեզյանին: Հանկարծ ասես թնդանոթ պայթեց. ոմն դոկտոր Սերոբյան անակնկալ հարձակվեց մեզ վրա գոռոռալով. «Դուրս կորսվեցեք այստեղն, սրիկաներ»: Այդ խիստ անվայել վարմունքը մեր վրա ավելի ազդեց. Պետրոսը համբերությունից դուրս գալով, բռունցքի մի հարվածով նրան տապալեց գետին: Գրասենյակից դուրս թափվեցին մարդիկ: Սկսվեց աղմուկ, իրարանցում: Նրանց մեջ էր նաև Մալեզյանը, որը զարմացած հարցնում էր. «Ի՞նչ է պատահեց»: «Պատահածը պատահեց, սիրելի Մալեզյան. մի՞թե այսպես կժամադրվեն: Ներողամիտ գտնվեցեք, որ ձեր հանգիստը խոտվեցինք: Մնաք բարով»: «Սպասեցեք, սպասեցեք» — բացականչեց Մալեզյանը, — բայց մենք այնքան վիրավորված էինք, որ չուզեցինք նրա երեսն անգամ տեսնել և հեռացանք բարեգործականի գրասենյակից, տխուր տպավորության ներքո:

Կահիրեում մի օր պատահամբ հանդիպեցի հայտնի ողբերգու դերասան Կարապետ Գալֆայանին: Նա բարձրահասակ, նուրբ կազմվածքով, համակրելի մի անձնավորություն էր: Հանդիպման ընթացից Գալֆայանը զրավեց իմ ուշադրությունը. ինչ-որ խորհրդավոր մի բան կար թաքնված նրա մեջ: Ես նկատում էի, որ նա տառապում էր, մի մեծ վիշտ նրան հոգեպես ճնշած էր: Մի փոքր մտերմանալուց հետո ես կարեկցություն ցույց տվի նրան: Նա տեսնելով իմ անկեղծ վերաբերմունքը, ինձ բացեց իր ցավերի ծալքը և պատմեց զառաջան զրվագներ իր կյանքից: Նախ շեշտեց իր սիրային անհաջողությունների մասին, որ ինքը սիրել է մեկին և ուզել է ընտանիք կազմել, բայց շար մարդիկ տեղեկացրել են

աղջկա ծնողքին, որ «Գալֆայանը խննթ է, նրան պետք չէ աղջիկ տալ»: Այդ «միջնորդը» ըստ իր պատմածի, հայտնի մի գրող է եղած:

Գալֆայանը զրկվելով իր սիրուհուց, լքել է ամեն ինչ, դարձել ցնորված և խիստ մտադրադ: Երբ «Սիրեցի, յարիս տարան»-ը երգում էի, նա հոնքուր-հոնքուր լալիս էր: Կեկ էի նրա Համլետի մասին: Շեքսպիրյան այդ հուշակավոր գիրքը նա պահում էր իր ծոցում մասուճքի պես և ոչ ոքի չէր վստահում: Աչքի առջև կախված ուներ պատից Համլետի սուրը և իր զգեստները:

Մեկ օր հարցրի Գալֆայանին. «Ի՞նչ կհարձիքի եք Աղամյանի Համլետի մասին», նա պատասխանեց. «Աղամյանը ծնված էր Համլետի համար և Համլետն էլ զրկված է Աղամյանի համար»: Ընդհանրապես մեծ հիացմունքով և պատկառանքով էր խոսում Աղամյանի մասին: Երբեմն էլ ակնարկում էր իր Համլետը. «վատ չէր, ասում էր նա,— բայց շարագործներ, Յագոներ մտան իմ կյանքի խորքը և թունավորեցին էությունս. բայց պատմությունը մեկ օր պիտի հիշի ինձ»:

Մեկ-երկու օրից պիտի մեկնեի Ալեքսանդրիա: Գալֆայանն ինձ կանչեց. ասեց. «Դու գնում ես, ես որք եմ մնում այստեղ, աճելի լավ չէ՞ր լինի, եթե միասին մեկնեինք: Ես այնտեղ ծանոթներ ունեմ, կուզեի նրանց մոտ մնալ: Բայց և չեմ կարող հեռանալ այստեղից, առանց տանտիրոջ պարտքըս վճարելու, խնդրում եմ ինձ օգնեք: Վերցրեք այս պիտույքներս և տարեք ձեզ մոտ, որպես ձեր սեփականությունը: Այստեղ կմնա պլասարկս, վերարկուս և մի քանի թատերական գրքեր, որոնք առավոտյան կանուխ կվերցնեմ և կգամ ձեզ

մոտ: Տանտերս ոչինչ չի նկատի և այսպիսով կփակեմ հաշիվս:

Այսպիսի տխուր զեպրեր հաճախ են պատահում արտասահմանյան հայ արվեստագետների կյանքում, որոնք իրենց տխուր կացությունը փրկելու համար ստիպված են շեղվելու շանապարհից, շունենալով ոչ մի հենարան, պաշտպան: Մինչդեռ Սովետական Հայրենիքում արվեստագետները ապահովված են: Եթե ես ունենայի նյութական միջոցներ, չէի թողնիլ մեծ անցյալ ունեցող արվեստագետը այդ դրության մեջ մընար: Վերցրի նրա պիտույքները և մեկնեցա պանդոկ: Առավոտյան լուսաբացին եկավ Գալֆայանը ինձ մոտ: Թե՛յ լամեցինք և որոշեցինք մեկնիլ Ալեքսանդրիա:

Գալֆայանը պնդում էր, որ պետք է առաջին կարգով ճամփորդել, բայց ես ասում էի. «Սիրելիս, եթե ես եմ վճարելու տոմսակների արժեքը, պետք է անպայման երկրորդ կարգով ճամփորդենք, որովհետե նյութապես ի վիճակի չեմ այդ քայլը անելու»: Գալֆայանը շարունակում էր. «Մի՞թե հարմար է մեզ նման արտիստները երկրորդ կարգով ճամփորդենք»: «Այո, երբ դրամ չկա, շատ հարմար է,— պատասխանում եմ:— Պետք է այս ձևով ճամփորդել, սիրելի Գալֆայան»: Նա ընկղմված էր մտային հորիզոնների տակ: Կեսօրին բեռներս կապեցինք, անցանք կայարան: Վերցրի երկու առմս երկրորդ կարգի և շարունակեցինք մեր ճամփան:

Հասանք Ալեքսանդրիա: Իջևանեցինք մի հայկական պանդոկ: Գալֆայանը ուղեց առանձին մի սենյակ: Հինգ օրվա օրավարձը վճարեցի, կատարելով նրա ցանկությունը, և որոշեցի մեկնել Սիրիա: Գալֆայանը փաթաթվեց ինձ, համբուրեց, լացեց, որ այլևս չպիտի տեսնենք իրար: Եվ իրոք շտեսանք:

1923 թվականի աշնանը Ալեքսանդրիայից ծովային ճանապարհով մեկնեցի Բեյրութ: Անձանոթ երկիր, նոր միջավայր: «Քաղղաղ» հյուրանոցում տեղավորվելուց հետո անցա Աբարատյան ակումբը, որտեղ մի տոնական օրվա առթիվ հավաքված էին շատ հայեր:

Նրանց միջոցով ծանոթացա Լիբանանյան հայ թերթի խմբագիր Միհրան Աղազարյանի հետ, որն ինձ վրա լավ տպավորություն թողեց որպես մտավորական, հայրենասեր ու բանիմաց մարդ: Նրան հայտնեցի ինքնությունս, որպես երգիչ-դերասան և այցելությանս բուն նպատակը, որ եկած եմ հայ երգն ու թատերական արվեստը տարածելու սիրուռթի հայության մեջ: Նա ողջունեց իմ ցանկությունը: Ինձ շրջապատող հայրենակիցները նույնպես ուրախացան և առաջարկեցին նորակազմ Աբարատյան ակումբի վարչության հետ գործակցել: Հայ գաղթաշխարհը ծարավի էր մայրենի երգին:

Առանց ժամանակ կորցնելու, հավաքեցի մի խումբ տղաներ և աղջիկներ, կազմեցի թատերախումբ և սկսեցի փորձերը: Առաջին առթիվ «Քրիսթալ» թատրոնում ներկայացրի Ա. Զիվանու «Աշուղ Ղարիբը»: Հաղթանակը տարած էի: Հայ երգը տիրում էր տարագիր հայության սրտին. նրանց բնակարաններում, նույնիսկ փողոցներում լսում էին իմ երգերը: Ես բախտավոր էի և երջանիկ: Մեծ գոհունակությամբ ինձ դիմավորում էին հայրենակիցներ, հյուրասիրում, փաշտալում: Ես բաշխում էի նրանց ցույց տված մեծարանքից: Ինձ անլուս չէր հետաքրքրում ոչ մի բան, անցնում էին օրերս հաց ու պանիրով, տաք կերակուրի երես չէի տեսնում և ժամանակ

էլ շունեի այդ մասին մտածելու: Բեյրութի մեջ օրերս անցնում էին սպասածիցս ավելի լավ: Ուրախ էի, որ ներկայացումներս գրավել են հայ ժողովրդի ուշադրությունը: Ուր որ գնում էի, ուրախ զեմքով էին ինձ դիմավորում և շնորհավորում:

Որոշեցի մոտիկից ծանոթանալ զազութի կյանքին: Հայ գաղթաշխարհը առանց բացառության, անցած է արսորի սև ճանապարհից: 1915 թվականի մեծ աղետից շատերը մնացել էին թշվառության մեջ, մերկ, սոված, ծարավ, իրենց հարազատներին կորցրած: Նրանք անցել էին Տեր-Ջորի և Մեսաբաղամյան անապատները:

Ամեն հայ անհատ ունի իր սոսկալի մեծ պատմությունը, աստվածաշնչի գրքի շափ: Զուլումի ճանապարհներից անցած, սանջված հայ մարդը սակայն չի հուսահատվել, այսօր նա սպրում է...

Մի գեղեցիկ առավոտ որոշեցի անցնել ամերիկյան որբանոցը՝ մոտիկից տեսնելու աղղիս բեկորները: Երբ մոտեցա որբանոցին, դռան մոտ մի խումբ աղջնակներ հավաքված խաղում էին և կատակում: Նրանք ինձ տեսնելուն պես լրջացան: Մոտեցա և հարցրի. «Ձեր վերակացու մայրիկին կուզեմ տեսնել, կթև կարեւի է, իմաց տվեք նրան, որ մի նորեկ հայ ուզում է ձեզ տեսնել»: Բարի աղջնակը ինձ մոտեցավ, խոնարհությամբ ասաց. «Միրով, պարոն, գնամ և հայտնեմ ձեր մասին»: Մի բանի վաչրկյանից ինձ ներս կանչեցին: Իմ առջև կանգնած էր միջին տարիքով, շնորհալի և ժպտուն զեմքով մի կին, որ կկոչվեք Հայկանուշ մայրիկ: Ինձ առաջնորդեց իր գրասենյակը: Ինքնությունս հայտնեցի և հետաքրքրվեցա

որբանոցի կյանքով: Նա պատմեց որբուհիների կյանքից տը-
խուր գրվազներ: Ես կլանված լսում էի և չէի կարողանում
հուզմունքս զսպել: Աչքիս առջև կարծես պատկերանում էին
այդ բոլորը. սև ամպերի պես շարադեա դեպքերը հաջորդում
էին մեկը մյուսին, սիրտս ճմլվում էր: Մի քանի տխուր
պատմություններից հետո Հայկանուշ մայրիկը ուղեց ինձ
թեյով հյուրասիրել: Սակայն իմ աչքին ոչինչ չէր երևում, իմ
միակ ցանկությունն էր մոտիկից ծանոթանալ հայ որբուհի-
ների կյանքին, նրանց կենցաղին, ապրելակերպին: Մտածում
էի՝ արդյոք ի՞նչ կերպ կարող եմ օգտակար լինել նրանց:
Կուզեի իմանալ նաև ի՞նչ տաղանդներ, լավագույն ձիրքեր
թաքնված են այդ անմեղ մանուկների ներքնաշխարհում, ու-
սումնասիրել նրանց ունեցած բացառիկ ընդունակությունները,
մասնավորապես երգարվեստի շուրջ:

Վերակացու մայրիկը ըմբռնելով նպատակս, իր աղջկա
միջոցով կանչել տվեց որբուհիներից ամենասիրվածը, որը
կկոչվեր էլմաս Օջախյան: Միջահասակ էր նա, կլոր երեսով,
գրավիշ և խելացի աչքերով: Մայրիկը ինձ ծանոթացնելով
ասաց. «Ահա ձեզ կներկայացնեմ մի փոքրիկ երգչուհի, որն ու-
նի բացառիկ ընդունակություններ, անուշ և զգալուն ձայն, որ
կազդև շատերին: Մեր որբանոցի բոլոր հանդեսների զարդն
է: Աղոթքի ժամերին հրը էլմասը երգում է, շատ հեռուներից
լսվում է նրա ձայնը. անցորդները կանգ են առնում և հա-
փըշտակված լսում: Նրա ձայնի մեջ բողոք կա, վիշտ ու
ցավ»:

Շատ քիչ ձայներ կխոսեն մարդուս սրտին: Հայկանուշ
մայրիկի խնդրանք էլմասը երգեց «Իմ սիրելի զավակունք
կթափառին օտար աշխարհ» երգը: Ես ղեմարությունս էի

հուզմունքս զսպում, մտածում էի. ի՞նչ տաղանդներ, հան-
ճարներ սև թվականին կորան, անհետացան...

Մի փոքր մտերմական տեսակցությունից հետո խնդրեցի
մայրիկից, որ եթե կարելի է, արտոնեն օրիորդ էլմասին
մասնակցելու իմ առաջիկա ներկայացումին: Անկարելի է,
ասաց, պետք է արտոնություն ստանալ տնօրինությունից:
Եվ սակայն մի փոքր մտածելուց հետո ավելացրեց. «Իմ
պատասխանատվությամբ կարտոնեմ, այն պայմանով, որ
անունը ոչ մի տեղ չգրվի»: «Այդպես էլ կանենք» — պատաս-
խանեցի ես և շնորհակալություններս հայտնելով բարի մայ-
րիկին, խոր տպավորության ներքո մեկնեցա: Այդ ներկա-
յացումս լինելու էր Գ. Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի» օպե-
րետը: Հրավիրեցի որբանոցի մայրիկին և որբուհիներին: Նա-
ղիկի դերը հանձնած էի օրիորդ էլմաս Օջախյանին՝ առանց
ազգանունը հիշելու:

Ներկայացումը անցավ արտակարգ հաջողությամբ: Օրիորդ
էլմասը իր անուշ ձայնով և խաղաղություններ գրավեց հանդի-
սականների ուշադրությունը: Հայ մամուլը գնահատական
ջերմ տողերով շնորհավորեց փոքրիկ անծանոթ դերասանու-
հուն: Հաջորդաբար ներկայացրի «Մելիքի աղջիկը» կամ
«Վարանդաի հերոսուհին»՝ ի նպաստ ազգային վարժարանի:
Երաժշտությունը կղեկավարեր սիրված ջութակահար էդվարդ
Խնդամյանը: «Մելիքի աղջկա» հերոսական դերով օրիորդ
էլմաս Օջախյանը կրկին փայլեց և գրավեց թատերասեր հա-
սարակության անվերապահ ուշադրությունը և նրան կոչեցին
Շապին Գարահիսարի սոխակ, որովհետև ինքը էլմասը Շա-
պին Գարահիսարի Բյուրք գյուղից էր: Հաջորդական ներկա-
յացումներին հայտարարությունների վրա գրվեցավ օրիորդ

Սոխակյան անունը և առօրյա տխրությունը մոռացություն տրվեցավ՝ շնորհիվ իմ բեմադրած օպերետներին:

Մի փոքր ժամանակից հետո ես որոշեցի անցնել Հալեպ: Նախ քան մեկնումս, այցելեցի որբանոց, հրաժեշտ տվի Հայկանուշ մայրիկին, օրիորդ էլմաս Օչախյանին, որի հետ մտերմացած էի: Նորք նա լսեց մեկնումիս մասին, շատ տխրեց, բայց ես խրախուսեցի նրան, որ շմտածի, մեկ- երկու ամսից կրկին կվերադառնամ Բեյրութ և կվերսկսենք մեր ներկայացումները:

ԲԵՅՐՈՒԹԻՑ ՀԱԼԵՊ

1924 թվականի սկզբներին մեկնեցի Հալեպ, որտեղ նույնպես կար մի մեծ հայ գաղութ, նույն տարազիր ժողովուրդը: Ծանոթացա կարևոր անձերի հետ, կազմեցի թատերախումբս: Իմ ներկայացումները տեղի ունեցան «Սրբ-ուլ-Ֆարաշի» հրապարակի վրա գտնվող սինեմա «Օրիենտալ»-ում: Այս անգամ պետք է ներկայացնեի «Արշին-մալ-ալանի»-ը: Սակայն մեծ զժգոհությունների հանդիպեցա: Պատճառն այն էր, որ ամիսներ առաջ մի խումբ սիրողներ հիշյալ օպերետը ներկայացրել են շատ անվայել կերպով, տաճկական էթնազգին պարերով: Հայ ընտանիքներու համար խիստ անհաճելի է եղել այդ երևույթը: Գաղութը պառակտումի ենթարկված էր, բաժանված երկու մասի՝ հնչակյան և դաշնակցական. սկսվել էր տղեզ պայքար: Նվ ահա այդ տխուր օրերին ես ձեռնարկեցի այդ օպերետը: Թեև տոմսերը հրապարակ հանված էին և սպառված, սակայն մի քանի օր առաջ ինձ հայտնեցին, որ

այդ գործը պետք չէ ներկայացնել: Ամեն կերպ բացատրեցի, որ «Արշին-մալ-ալանի» նյութը առնված է Կովկասյան թատրական կյանքից, խիստ զվարթ թեմայով, որ ունի բարոյա... արժանիքներ: Բավականին դժվարություններից հետո ներկայացրի հիշյալ օպերետը և հաստատեցի, որ այն չէ, ինչ որ իրենք տեսել էին: Վերջապես հայ գաղութը իր գաղափարը փոխեց նյութի վերաբերյալ. կովկասյան պարերն ու երգերը գտած էին ժողովրդի անվերապահ համակրանքը: Իմ խմբադրած օպերետներուս հայտարարությանց զուխը տեղավորած էի հետևյալ խոսքերը: «Քեք անողին քեք չի պակսի, դարդ անողին՝ դարդ». այս խոսքերը ժողովրդի ուշադրությունը գրաված էին: Հաշորդ անգամ որոշեցի բեմադրել «Աշուղ Ղարիբը»:

Նախ քան ներկայացումս, հետաքրքրվեցա Աշուղ Ղարիբի անցյալով. մասնավորապես փնտրեցի և գտա այն սրճարանը, որտեղ Ղարիբը յոթը տարի շարունակ երգած է իր սիրային երգերը և հիացմունք պատճառած բեկերուն, փաշաներուն և ամբողջ ժողովրդին, և շատ անգամներ վեճի բռնված երկվիլի աշուղների հետ և հաղթական դուրս եկած: Սրճարանի տները սիրալիք կերպով ինձ ընդունեցին: Արաբ սրճարանապետը ինձ նվիրեց մի հնադարյան սաղ: Իրենց պատմածի համաձայն, այդ սաղը շատ նման էր Աշուղ Ղարիբի սաղին: Ես շնորհակալությամբ ընդունեցի և սկսեցի վարժվել նրա վրա:

Հալեպի հայ հասարակայնությունը լավ ընդունեց «Աշուղ Ղարիբի» բեմադրությունը:

Հրածեշտի առթիվ որոշեցի ներկայացնել Գեի «Տրիլրին»: Գերակատարները, թեև բոլորն էլ սիրողներ էին, բայց իրենց

գերերին շատ համապատասխան: Սվենգալիի դերը ինքս էի ստանձնել: Տրիլրիի դերը կատարում էր օրիորդ Մանուշակ-յանը, Տաֆիի դերը կատարեց Միհրան Գարրիելյանը, որն իր հստակ առողջանությամբ և բնական դերակատարությամբ հաջող էր: Բիլլիի դերով՝ էդուարդ Մուրադյանը իր գեղեցիկ արտաքինով և հաջող խաղարկությամբ աչքի ընկավ որպես սիրահար և նկարիչ: Մեծ խանդավառությամբ և ծափողջույն-ներով վերջացավ ներկայացումը: Ես ստացա զույգ ծաղկե-փնջեր զոկտոբրենր Մուշյանի և Ասլանյանի կողմից, որտեղ գրված էին հետևյալ խոսքերը. «Ծանոթ արվեստագետ տիար Հայկ-Արծիվին. Սվենգալիի, այդ երաժշտագետի հուժկու և հոգեբանական միտքը հարազատորեն պատկերացնելուն համար կշնորհավորենք և ջերմորեն կփափագինք նորանոր նվաճումներ ինչպես երգի, նույնպես էլ դրամատիկական ար-վեստի մեջ»:

Մինչև Բեյրութ գնալը ընթերցողին կուզեի պատմել մի բախտավոր մարդու մասին, որի անունն է Գևորգ Խոջա-Նալ-բանդյան—տաճկահայ երաժշտության գիտական նվագիչ: Զորավար Վեյլկանտը — ֆրանսիական զբաղման Միլիտայի և Լիբանանի զինվորական պետը — երբ այցելում է Հալեպ, հայ գաղութի վարչական կազմի հարգանս մեծ զինվորականին պատրաստում է մի շքեղ ճաշկերույթ, և միևնույն ժամանակ ուզում են պատվել հայկական երաժշտությամբ և մտածում են՝ թե ի՞նչ կերպ պատրաստել այդ երգչախումբը, քանի որ Հալեբում հայ երաժիշտ չկա: Վարչականներից մեկը առաջարկում է կանչել Գևորգ Խոջա Նալբանդյանին և այդ գործը հանձնել նրան: Գրանից մի քանի տարի առաջ Հայկում գտնված են եղել երաժշտագետներ՝ Հակոբ Ուվեզյան և Բ.

Կանաչյան, որոնք կազմած են եղել իրենց երգչախմբերը և համերգներ տված Հայկում ու մեկնած: Սակայն քաղաքում մնացել են նրանց աշակերտները: Եվ ահա այս առիթից օգտորվելով կանչում են նախկին երգչախմբի անդամներին, մոտ 50—60 աղջիկ-տղա, որոնք հավաքվում են Խոջա-Նալբանդյանի շուրջը: Մի մարդ, որն իր կյանքում ոչ երգչախումբ է ունեցել և ոչ էլ կոնկրետ դաղափար երաժշտության մասին, նա համարձակորեն անցնում է դործի: Ձայները առանձնացնելով, իր ձեռքի ձիպոտը շարժելով, ամեն ինչ կարգադրում է: Եվ ահա մեր Խոջան հարցաքննում է աղջիկներին ու տղաներին, թե ի՞նչ երգեր գիտեն: Նրանք ասում են, որ սովորել են Կոմիտասի «Ալազյազը», «Կուժն առա»-ն, «Սարերի վրով գնաց» և այլն: Խոջան բացականչում է. «Հրաշալի է»: Երգչախումբը երգում է իր զիտեցածի պես, իսկ նա շփո է տալիս և ոգևորված բացականչում. «Ծատ լավ է»: Այսպես է պատրաստվում երգչախումբը:

Բանկետի ժամանակ, երբ գեներալը հյուրասիրվում է, երգում է երգչախումբը հայ գեղջկական երգեր և հիացմունք պատճառում զինվորականին: Զորավարը կանչում է իր մոտ օրվա ասպետին և իր զբոսչկում նշում է նրա անունը: Անցնում են ժամանակներ և ահա մի օր մեր Նալբանդյանը ստանում է մի պատվո լիկայագիր, որպես անդամ ֆրանսիական ծրագրական ակադեմիայի: Այդ պատվին մինչև օրս ոչ մի հայ երաժիշտ չի արժանացած:

Հետո լսեցինք, որ Գևորգ Խոջային Հալեպից վտարել են և Հայոց բարեգործականի օգնությամբ նա անցել է Պաղեստին: Ծիշտ այդ ժամանակ Երուսաղեմում երաժիշտ-ջութակահար Լուի Օհանյանը պատրաստվում է իր նվագախմբով

Հարեչատան՝ Ադիս Աբեբա մեկնելու Սակայն Օհանյանին չի հաջողվում այդ գործը գլուխ բերել. նա ծանրապես հիվանդանում է և խուճր մնում է առանց ղեկավարի: Եվ ահա մեր ևոջայի բախտը դարձյալ ժպտում է: Ծանոթների միջոցով նա ստանձնում է նվագախմբի ղեկավարությունը և մեկնում Հարեչատան: Եթովպիայի կայսրը պարգևատրում է նրան շքանշանով:

1932 թվին Ադիս-Աբեբայում կրկին հանդիպեցանք այս բախտավոր մարդուն՝ Գևորգ ևոջա-Նալբանդյանին իր բնակարանում, տեսանք պատվո վկայագիրը շրջանակի մեջ, պատից կախված:



Հալիպից վերադարձա Բեյրութ. բարեկամների շրջանակում տեղի ունեցավ մեր ամուսնությունը օրինոր էլմաս Օջախյանի հետ: Եվ միասին մեկնեցինք Գամասկոս:

Էլմասը Շաբին-Գարահիսարի Բչուրք գյուղի բնակիչ Գրիգոր Օջախյանի ամենափոքր դուստրն էր: Նրա հայրը հողագործ էր և իր աշխատանքով պահում էր իր բազմամարդ ընտանիքը, միևնույն ժամանակ մտածում էր իր զավակների դաստիարակության մասին: Ուսման սերը նրան հանդիստ շէր տալիս, նա հասկացել էր նրա արժեքը և համոզված էր, որ մարդս կրթություն ստանալով՝ կարող է որոշ արժեք ներկայացնել, նույն օգտակար հանդիսանալ իր ընտանիքին, իր պատկանած աղդին և ապա մարդկությանը: Այդ վսեմ նպատակին հասնելու համար իր համեստ միջոցներով զավակներին ուղարկում էր ուսման: Գրիգորը գյուղում շատ սիր-

ված անձնավորություններից մեկն էր. նա հարգանք էր վայելում իր քաղցր բնավորության և մարդասեր վերաբերմունքի համար: Երբ որևիցէ պետական պաշտոնյա էր այցելում գյուղը, անպայման Օջախենց տունը կհյուրընկալվեր: Մի երեկո, երբ հյուրասենյակում հավաքված էին պետական պաշտոնյաներ, հանկարծ հայրը կանչում է էլմասին: Հյուրերից մեկը առաջարկում է նրան մի բան երգել: Աղջիկը հանկարծակիի է գալիս, բոլորովին շփոթվում այդ անակնկալ առաջարկից. մանկական անմեղ հայացքով նայում հոր երեսին, թե ի՞նչ է ասելու: Մի փոքր լուսթյունից հետո հայրն ասում է. «Աղջիկս, մի՛ քաշվիր, մի բան երգիր»: Նա ստիպված երգում է մի ինչ-որ ուղտապանի երգ՝ ծուռուժուռ թուրքերենով, ինչ որ տեղից սովորած. չէ՞ որ այդ գյուղում տաճկերեն ոչ ոք չէր խոսում, բոլորն էլ հայախոս էին: Հյուրերը երգը շատ են հավանում: Մի տաճիկ բեյ իր քսակը հանում և մի բուռ դրամ է առաջարկում աղջկան, որ վերցնի: Նա իհարկե մերժում է:

Վրա է հասնում 1915 թվականի մեծ եղեռնը: Այդ աղետի ժամանակ էլմասը 6—7 տարեկան է լինում: Նրա հորը, մեծ եղբորը, խնչպես և շատերին պարաններով կապկպում, ղեպի անհայտ հեռուներն են քշում, մյուս եղբայրներն էլ կորում են: Մայրն էլ նույն դժբախտ ճակատագրին է արժանանում, կիսամեռ մնում ցամաքած մի աղբյուրի մոտ:

... Քարավանը ուժասպառ, հուսահատ հասնում է մինչև Տիգրանանկերտ: Նրանց շրջապատում են մի քանի տաճիկ ընտանիքներ ու հայտարարում. «Ով ուզում է, որ իր զավակը ողջ մնա, թող մեղ հանձնե, մենք կորդեգրենք և կպահենք»: Քույրը զգալով գալիքը ճարահատ ասում է. «Էլմաս, արի քեզ

տամ այս մարդկանց մեկին, դնա աղատվիր, թերևս դու ողջ մնաս, միայն շմոռանաս այս մեր քաշածները: Երբ մի օր բախտ ունենաս լույս աշխարհ դուրս գալու, պատմիր բոլորին»: Եվ շարունակեց. «Նայիր, Սիմայիս էլ տալիս եմ մեկ ուրիշին. ես չգիտեմ, թե մեզ մինչև ո՞ւր պիտի քշեն և ի՞նչ է լինելու մեր վերջը»:

Այսպիսով էլ մասը բաժանվում է իր հարազատներից: Նրա խնամակալը տաճիկ մի զինվորական է լինում, կնոջ և երեխաների տեր: Այդ ընտանիքը մի քանի ամիս անց Տիգրանակերտից փոխադրվում է Հալեպ:

Մի օր տերերը էլ մասին ուղարկում են մոտակա աղբյուր՝ ջուր բերելու: Աղբյուրի մոտ նա հանդիպում է տարեց մի կնոջ, որը նրան հարցնում է. «Փոքրիկ աղջիկ, դու հա՞յ ես»: Էլ մասը զխուով ժխտական պատասխան է տալիս, վախենալով ինքնությունը հայտնել, բայց կինը ստիպում է, որ ճշմարտությունը խոստովանի: «Այո, մայրիկ ջան, հայ եմ, բայց վախենում եմ, մի՛ ասեք որևիցէ մեկին, տերերս տաճիկ են, կարող են իմանալ և...»—ի վերջո խոստովանում է էլ մասը: Բարի մայրիկը հուսադրում է, խրատում և խոստանում գաղտնիքը պահել: Հետո ավելացնում է. «Աղջիկս, եթե վաղը այս նույն ժամին դու այստեղ գաս, ես քեզ կտանեմ շատ հայ աղջիկների ու տղաների քով, դու այնտեղ ուրախ կլինես»: Հաջորդ օրը այդ կինը առանց ժամանակ կորցնելու էլ մասին տանում է միս Քուշմանի ամերիկյան որբանոցը, նրա բախտակիցների մոտ:

1922 թվականին որբանոցը փոխադրվեց Բեյրութ: Աչքի ընկնող ձայնի և բեմական հատկության շնորհիվ էլ մասը

շարունակաբար մասնակցում է դպրոցական բոլոր հանդեսներին: Այստեղ էլ մենք 1923 թվականին ծանոթացանք և ամուսնացանք:

ԴԱՄԱՍԿՈՍԻՄ

Այս հայ զաղութը նույն պատկերն ունի, ինչ որ Բեյրութն ու Հալեպը:

Մի անձրևոտ օր տանը նստած մտածում էի առաջիկա մեր անկիթների մասին. հանկարծ դուրը զարկին: «Ո՞վ է»: Տեսնեմ մի քանի հայ երիտասարդներ: «Մտեք ներս: Ի՞նչ եք ուզում, տղաներ»: «Ձեզ հետ կարևոր խոսելիք ունենք»: «Խնդրեմ ասացեք, ի՞նչ է ձեր փափագը»: «Մենք Հաճնո նորակազմ «Կայծակ» մարմնամարզական միության վարչությունն ենք, ուզում ենք, որ դուք մեզ համար մի ներկայացում տաք. «Վարդանանց պատերազմը»: Մտածեցի, մի խրթին գործ, ամեն դժվարություններ, բեմական անհարմարություններ, դերակատարների մեծ կազմ, զգեստների խնդիր, և այլն, և այլն: Արդյոք պիտի կարողանա՞նք զուգու հանել: Պատասխանեցի. «Ինչո՞ւ չէ, բայց գիտե՞ք որ երկար ժամանակ է պետք, թատրոնը պետք եղած ղեկորներ շունի, դերակատարների համար պատշաճ զգեստներ չկան»: Նրանց գլխավորը պատասխանեց. «Մենք ամեն աշխատանք կտանենք, տոմսերը կվաճառենք, ինչ վերաբերում է վարձատրության, ապա ներկայացման հասույթը ձերը կլինի, իսկ անունը՝ մերը: Չէ՞ որ մենք նորակազմ միություն ենք, ուզում ենք, որ հայ զաղութը մեր անունը լսե և ճանաչե»: «Այո, այո, մենք ուզում ենք,

որ «Կայծակ» մարմնամարդական միության անունը լսվի դա-
ղութի մեջ և դրա համար էլ այս առաջարկը բերում ենք ձեզ»
վրա բերեց մյուսը: Հինգ-վեց հոգի երիտասարդներ... մտածեցի
«եթև մեկը շար լինի, թերևս մյուսները բարի կլինեն» և հա-
մաձայնեցինք: Անցանք աշխատանքի:

Վեց ամիս շարունակ ծունկերս մաշեցի, դեկորներ նկարե-
ցի, թեև նկարիչ չեմ: Վերջապես զարդարեցի «Կասր Բելլոր»-ի
ընդարձակ սրահը: Գիշերները անվերջ փորձեր ունենալով՝
ճիշտ վարդանանց օրը բեմադրեցինք «Վարդանանց պատե-
րազմը»: Ներկա էր բովանդակ հայ զաղութը. Վարդան Մամի-
կոնյանի դերը ստանձնած էի ինքս, տիկին Արծիվ հանդես
կուզար Վարդանի աղջկա՝ Շուշանիկի դերով. նրա երգած
«Լոեց. ամպերը» Վարդանի մահվան սուգը մեծ հուզում պատ-
ճառեց ներկաներին:

Իսկ հասույթը... հասույթը զրպանեց Վասակի ղերակա-
տարը, «Կայծակ» մարմնամարդական միության տխրահռչակ
նախագահ Խ. Փալասյանը ու փախավ»:

Բեյբուրում բախտի բերումով գտանք մեր հին սենյակը
ազատ և փոխադրվեցինք այնտեղ: Տեսարանը զեղեցիկ էր.
նայում էինք դեպի ծովը, ամեն առավոտ լսվում էր եկող-
մեկնող նավերի սուլոցը, որոնք կարծես լուր էին բերում հայ-
րենիքից: Մերթ ուրախանում էի, մերթ հուզվում, արտասվում,
պանդխտության դաժնությունը ճնշում էր հոգիս: Անվերջ
երազում էի՝ արդյոք ե՞րբ է լինելու այն երջանիկ օրը, որ
պիտի կարողանանք վերադառնալ հայրենիք: Օրերս անց-
նում էին տաղտկալի, բնությունն էլ վատթարանում էր, տիրող
խոնավությունը անցնում էր մարդուս մինչև ոսկորները:

«Արարատյան» ակումբի վարչության հրավերով ներկա

գտնվեցինք հայրենասիրական մի մեծ հանդեսի: Օրվա բա-
նախոսն էր Միհրան Աղազարյանը՝ Լիբանանյան հայ թերթի
խմբագիրը: Նյութն էր՝ «Սովետական Հայաստանի առաջա-
դիմությունը»: Բոլոր ներկաները ողևորված էին. բուն ծա-
փահարություններով ողջունեցին հայրենասեր հետտորը: Այդ
տաք միևնույրտի մեջ տեղի ունեցան արտասանություններ
Ավետիք Իսահակյանից, Հովհաննես Թումանյանից և ուրիշնե-
րից, ինչպես նաև մեներգներ և զուգերգներ Կոմիտասից,
Սյունիից և Ռոմանոս Մելիքյանից: Այդ զեղարվեստական
ասուլիսները մի տեսակ երազային բնույթ էին կրում և սա-
կայն մեծ հույս ներշնչելով մեզ տանում էին դեպի իրականու-
թյունը՝ տեսնելու մեր Սովետական Հայրենիքը, ալեհեր
Մասիսն ու Արագածը, մայր Արաքսը, ողջունելու զեղածիծաղ
նոր Երևանը:

Մի բանի շարաթ անընդհատ միտքս նման էր ճախրող
թռչուններին, որ սլանում են դեպի վեր, դեպի հեռուներ,
աչքիս առաջ պատկերանում էր հայրենիքս, հուզվում էի,
տխրություններ մոռացություն տալու համար, ընկերներիս
մասնակցությունը ուրախ պատմություններ էինք պատմում:
Մեղ այցելության եկավ երաժիշտ ջութակահար Հակոբ Ուլեղ-
յանը, զաղութի սիրված արվեստագետներից մեկը: Նրա հետ
մտերմացած էինք, մարդկային հոգիին ամենաազգեցիկը
երգն է և երաժշտությունը: Հայկական զեղչկական երգերը
մենք տարածում էինք ամեն տեղ, ամեն շրջան և միևնույն
ժամանակ զեղարվեստի միջոցով կապեր հաստատում մեր
հայրենիքի հետ:

1926 թվականին Բելյուսթից թղթակցության մեջ էինք
 Երվանդ Օտյանի հետ: Նա իր նամակներից մեկում ինձ գրում
 էր. «Սիրելի Արծիվներ, Գուք այդտեղ ամենքին կուրախացնեք
 ձեր երգերով ու ներկայացումներով, իսկ մենք հոս կղզիա-
 ցած, զրկված ենք բոլոր հաճույքներէն, ծարավ ենք հայ եր-
 գին ու զեղարվեստին, անգամ մ'ալ եկեք մեզ մոտ, ուրախա-
 ցուցեք ձեր արվեստով»: Այդ նամակից հետո այր և կին որո-
 շեցինք անսպասան այցելել մեր սիրելի Երվանդ Օտյանին:
 Վարձեցինք մի ավտոմեքենա և առավոտյան դեմ ուղևորվե-
 ցինք զեպի Տրիպոլիս: Նախ քան մեր մեկնումը տեղեկացրած
 էինք Օտյանին և նա մեզ ուղարկել էր մի հայ զեղագործի
 հասցեն, որտեղ պետք է իջեաննինք:

Առաջին անգամ, երբ Օտյանը մեզ այցելեց իր զեղագործ
 բարեկամի հետ. ձեռքերին բռնած ունեին մի-մի աթոռ:

— Մենք եկել ենք սեփական աթոռներով, — ասաց տան
 տերը:

Օտյանը ապրում էր մեն-մենակ այդ փոքրիկ ծովափնյա
 բաղաբում, որտեղ փոքրաթիվ հայություն կար: Օտյանը մեզ
 տեսնելուն պես իր խուզարկու հայացքով մոտեցավ ինձ և իս-
 կույն ճանաչեց: 1921 թվի սկզբները Պոլսում ես ծանոթացել
 էի մեծ երգիծաբանի հետ «Վերջին լուր». թերթի խմբագրա-
 պետ Վահան Թոշիկյանի մոտ, որի կինը՝ նշանավոր Հայկա-
 նուշ Մառքը, առաջին հայուհին էր, որ խմբագրում էր «Հայ
 կին» գրական ամսաթերթը, որը իր տեսակի մեջ եղակի էր:

Գժբախտաբար տիկնոջ ականջները լավ չէին լսում:
 Միջանկյալ հիշեմ մի զեպք. երեք ընկերներով գտնվում էինք

Հայկանուշ Մառքի բնակարանում և խոսում արվեստի շուրջ,
 հանկարծ դուռը բացվեց և ներս մտավ «Թեոդիկ» տարեցույ-
 ցի կողմից մեկը և առաջարկեց, որ մենք մեր լուսանկարները,
 փոքրիկ կենսագրականով հանձնենք հրատարակության հա-
 մար. մեր ընկերներից դաշնակահար Լ. Տ. Օհանյանը մերժեց,
 ասելով՝ «քանի որ ձկնունիներ և մկնունիներ տեղ են դրա-
 վել այդ տարեցույցում, մենք այդտեղ գործ չունենք»:

Երվանդ Օտյանի տրամադրությունը գերազանց էր: Օտ-
 յանը առաջարկեց տիկնոջս, որ իրեն համար երգի Կոմիտասի
 « Հայաստան»-ը: Իհարկե նրան չէր կարելի մերժել, տիկինս
 երգեց, և այդ հոգնած, մտքերով բռնավորված մեծ երգի-
 ծարանը ավելի թարմացավ, շնորհակալություն հայտնեց,
 ասելով. «Տիկին Արծիվ, Պոլսո մեջ շատ երգչուհիներ լսած եմ
 և սիրած, բայց դուք գերազանցեցիք բոլորին. ձեր զեղզեղուն,
 շքեղ ձայնով զրավեցիք իմ սիրտը, որ երբեք չեմ մոռանալու»:
 Նորից առաջարկեց, որ երգենք Կոմիտասից զուգերգներ:

Ի պատիվ Եր. Օտյանի և մի քանի հայրենակիցների տվինք
 համերգ, զգում էինք, որ այդ հայրենակարոտ, հայ երգի ծա-
 րավ հայրենակիցներու հանդեպ բարոյական պարտք ունենք:

Մեր սիրելի Եր. Օտյանի և իր մտերիմ ընկերների հետ
 անցկացրինք ուրախ ժամանակ և երկրորդ օրը հրաժեշտ
 տալով նրանց՝ վերադարձանք Բելյուսթ:

Կարևոր Հայրենակցական միության առաջարկի համաձայն,
 որոշեցինք կրկին ներկայացնել «Աշուղ Ղարիբը»: Ներկա-
 ցացման երկրորդ արարվածին զերակատարներից մեկը ինձ
 հայտնեց, որ հռչակավոր երգիչ Արմենակ Շահ-Մուրադյանը
 եկած է թատրոն: «Շատ ուրախ եմ, իմաց տվեք հանձնա-
 խմբին, որ կենտրոնական օբյեկտներից մեկը տրամադրեն

նրան»։ Կանչեցի Երվանդ Սաթղյանին, որը կատարում էր Գիժ Մանուկի դերը և ասացի, — երբ կենաց խմելու ժամանակը դա, շնորհաբար հայտարարելու, որ այս բաժակը խմում եմ հայ ազգի մեծ հրգիչ Ա. Շահ-Մուրադյանի կենացը, որը ներկա է թատերասրահում։ Այսպես հայտարարվեց։ Բոլոր ներկաները անակնկալի եկան և հոտնկայա ծափողջույններով դիմավորեցին Շահ-Մուրադյանին, որը ոտքի կանգնելով, խոնարհվեց և բարևեց ժողովրդին։ Եվ այսպիսով, առանց թերթերի հայտարարությանց, բովանդակ հայ գաղտնիք արդեն տեղյակ էր Շահ-Մուրադյանի ժամանման մասին։ Իսկ ներկայացումը շարունակվում էր մեծ եռանդով. բոլոր գերակատարները ոգևորված էին, կարծես դարձել էին մի-մի կատարյալ դերասան։ Արահը թնդում էր ծափերի մեջ։

Ներկայացումից հետո Շահ-Մուրադյանը անձամբ եկավ տիկնոջս և ինձ շնորհավորելու և բոլորի ներկայությամբ ասաց. «Դուք ունեք հոյակապ ձայներ և գերազանց խաղարկություն, ես խորհուրդ կտայի, որ անցնեիք ամեն տեղ, ուր հայություն կա և հայ երգը տարածելիք։ Սփյուռքը կարոտ է հայ երգիչներու»։

Շահ-Մուրադյանի խորհուրդը ճակատադրական նշանակություն ունեցավ մեզ համար։ Մայր հայրենիք վերադառնալու հնարավորություն տակավին չկար և որոշեցինք մի առժամանակ անցնել հեռավոր, օտար հորիզոններ։

Հաջորդ շաբաթ Բեյրութում տեղի ունեցավ Շահ-Մուրադյանի համերգը։ Մեծ արվեստագետը իր դրամատիկական տենորի հիասքանչ ձայնով անջնջելի տպավորություն թողեց ներկաներու վրա։ Գեո ականջումս են նրա աննման «Հայաստան»-ը, «Սիրուհիս», «Մայր Արաբսի ավերով» և այլն։

Համերգի վերջում ներկայացանք վարպետին և հայտնեցինք մեր հիացմունքը։ Շահ-Մուրադյանը գոհ սրտով դիմավորեց մեզ և առաջարկեց, որ իր երկրորդ համերգին տիկին Արծիվը մասնակցի մեկ երգով, Կոմիտասի «Գարուն ա, ձյուն ա արել»։ Տիկինս քաշվելով պատասխանեց. «Պարոն Շահ-Մուրադյան, ես չեմ համարձակվում ձեզ հետ բեմ դուրս գալ»։ «Ինչո՞ւ», — պատասխանեց Շահ-Մուրադյանը, — ամեն ծաղիկ իր հոտն ունի, աղջիկս, մի՛ քաշվիր, երգիր, քո ձայնը բողոքի ձայն է։ Այդպես անարատ և զիջյուն ձայներ ես շատ եմ սիրում»։ Տիկին Արծիվը մասնակցելով Շահ-Մուրադյանի երկրորդ համերգին, երգեց ի պատիվ մեծ հրգիչի։

Անցել են այն քաղցր ու դառն օրերը։ Շահ-Մուրադյանը համերգից հետո մեկնեց Հալեպ, իսկ մենք ամառվա տաքերի պատճառով անցանք Զահլե՝ օդափոխություն։

Մեկ-քանի ամիս հետո ունեցանք մի աղջնակ, որի անունն էր Սիրվարդ։ Նա հաղիվ հինգ-վեց ամսական էր, որոշեցինք մեկնել Երուսաղեմ։ Սակայն նանսենյան անցագիր ունենալուս պատճառով անգլիական դեսպանատունը վիզա չտվեց։ Մի քանի հայ բարեկամներ խորհուրդ տվին առանց վիզայի անցնել Երուսաղեմ, բայց մենք դժվարանում էինք այդ հանդուգն քայլը անելու։ Բանիմաց ծանոթ անձնավորություններ ես քաջալերեցին և մենք ակամա համաձայնեցինք. երկուքս էլ անփորձ, միամիտ երիտասարդներ։ Կյանքիս մեջ առաջին անգամ լինելով ունեցա մի անկանոն ճամփորդություն։ Տիկինս գրկում ուներ փոքրիկ Սիրվարդը, իսկ ես բռնավորված իրերով, գնում էինք հետիտան, զիզզազ ճանապարհներով, զեպի Պաղեստին։ Մեզ ընկերացողները հայեր էին։ Քաղցր լեզու թափելով հասցրին մի բլրի գլուխ, որտեղ

սպասում էին իրենց մյուս ընկերները: Նրանք իրար հետ գաղտնի խորհրդակցելուց հետո, հեռացան: Մենք հանձնվեցինք նոր մարդկանց և շարունակեցինք մեր ճանապարհը դեպի պաղեստինյան հողը:

Կիսաճամփին մեզ ընկերակցողները կրկին պահանջեցին հարյուրական սիրիական թղթադրամ: Ճար չունեինք, ինչ որ ունեինք, վճարեցինք: Անոթի, ծարավ, սարեր, ձորեր անցնելով, վերջապես հասանք մի տեղ: Մեզ ընկերացողները հայտնեցին, որ վտանգը անցած է և մենք գտնվում ենք պաղեստինյան հողում: Հոգնած, տառապած, փորքիկ Սիրվարդը անոթի, առանց սննդի լաց էր լինում և մեզ հետ տանջվում: Ծարունակեցինք մեր ճամփան. հասանք մի ուղտապանի տուն, նրա մոտ զիշերեցինք: Ամբողջ զիշերը հանդիստ չունեցանք: Երեսան անընդհատ լաց էր լինում, անոթի էր և անհանգիստ: Մնացել էինք մոլորված: Առավոտյան ղեմ բարի ուղտապանը մի քիչ կաթ գտավ և խեղճ մանկիկին կերակրեցինք: Նա աշուկները բացեց, ժպտաց: Մանկական ժպտը մեզ կենդանություն ներշնչեց: Ուղտապանը տեսնելով մեր հոգնած վիճակը, սիրահոժար իր ավանակը տրամադրեց, որի վրա նստան տիկինս և երեխաս, ևս էլ ոտքով, շարունակեցինք մեր ճամփան դեպի Երուսաղեմ:

Կեսօրվա մոտ հասանք մի փոքրիկ գյուղ: Ուղտապանը մեզ առաջնորդեց իր ծանոթ ընտանիքի մոտ, որ մարդասեր, արարք քրիստոնյաներ էին և տեսնելով մեր տանջված վիճակը, մանավանդ երեխային խղճահարվելով, ընդունեցին իրենց բնակարանը:

Վերջապես հասանք Երուսաղեմ: Առաջին հերթին այցելեցինք Ս. Հակոբա վանքը և թարգման վարդապետի միջո-

ցով ծանոթացանք պատրիարքական փոխանորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանի հետ, որը սիրալիլ ընդունեց մեզ: Պարզեցինք մեր այցելության նպատակը: Սրբազանը պետք եղած խորհուրդներ տվեց և ես անցա աշխատանքի, կազմակերպելով թատերախումբս: Արքեպիսկոպոս Նշանյանի միջոցով բախտ ունեցանք տեսակցելու բարեհիշատակ Եղիշե Դուրջան պատրիարքի հետ, որը, գժբախտաբար, այդ ժամանակներում անկողնին կժառայեց: Համբուրեցինք նրա աջը և հայտնեցինք մեր ինքնությունը, որպես հայ մշակույթին նվիրվածներ:

Իմաստուն ծերունին իր հոգատար հայացքը կենտրոնացնելով մեզ վրա, ասաց. «Օրհնում եմ Ձեզ, լինեք հաջողակ և հարատև ձեր ընդգրկած դժվարին ասպարեզին մեջ, որ լի է խոշընդոտներով»: Նշանյան սրբազանի ընկերակցությամբ այցելեցինք վանքի խոշորագույն տպարանը, որտեղ իր խմբագրությամբ պատրաստվում էր լույս տեսնելու Օրմանյան պատրիարքի «Հազկապատում» մեծածավալ մի գիրք: Մեզ տրամադրվեց վանքի թարգման վարդապետը և նրա հետ այցելեցինք վանքի շրջափակի մեջ ապրող ընտանիքների բնակարանները: Առանց ազգային կրոնական խտրությունաց, վանքի շրջափակում ապրում էին շատ ընտանիքներ, մեծ մասամբ տարագիր հայեր, որ եկած էին աշխարհի շորս կողմերից: Բոլոր ապրողները ենթարկվում էին վանքի ներքին կանոններին: Երեկոյան ժամը 9-ից հետո արդելված էր դուրս գալ փողոց. և՛ թե որևիցե բացառիկ դեպք պատահեր, օրինակ, հարսանիք, հայկական ներկայացում, — պետք էր մասնավոր արտոնություն ստանալ:

Երուսաղեմի Բարեսիրական Միության օժանդակությամբ

կազմեցինք մեր թատերախումբը և առաջին անգամը մի համերգ, հետո ներկայացրինք հայկական օպերետներ և դրամաներ. թատերասեր հասարակությունը արտակարգորեն խանդավառված էր: Մի փոքր դադարից հետո պատրաստվում էինք մի ուրիշ ձեռնարկ ունենալու, ի նպաստ բարեսիրական միություն, երբ մեր բնակարանը այցելեց մի անծանոթ և սկսեց հարցաքննել, թե ինչ ճանապարհներով ենք եկած Երուսաղեմ, «Վիզե ունի՞ք» — հարցրեց: Ես խոստովանեցա, որ խարված եմ: Նա ինձ առաջարկեց հետևել իրեն: Երկու օր արգելատան մեջ մնացի, տունը թողնելով մանկիկս և տիկինս՝ արցունքների մեջ: Վերջապես գտնվեցան բարի մարդիկ, որոնց երաշխավորությունը ես ազատվեցա: Գոկտոր Գալբակյանն էր այդ բարի անձնավորությունը, որը Երուսաղեմի անգլիական կառավարչի անձնական բժիշկն էր և Բելյուսից մեզ լավ գիտեր:

Մի քանի խոսք Ս. Հակոբա Գլխադիրի մասին, որ բերնե բերան խոսվում էր բովանդակ Երուսաղեմում: Գլխադիրը ղեկավարված է մի թանկարժեք տուփի մեջ և պահվում է մասնավոր խորանում՝ մարմարյա քարերի տակ: Կաթոլիկ համայնքը հիշյալ սուրբին մեծ հավատքով է վերաբերվում և դրա համար էլ տարին մեկ անգամ Հայոց եկեղեցում այդ սուրբի խորանին վրա հանդիսավոր պատարագ են մատուցում: Այս դուր չի գալիս կաթոլիկ մեծավորին: Նա մտածում է՝ «մինչև ե՞րբ հայերի առջև փոքրանանք՝ գնալ նրանց եկեղեցում աղոթելու, ավելի լավ չէ՞ր լինի, եթե սուրբ Հակոբա Գլխադիրը մի կերպ մեր ձեռքը անցներ»: Եվ ահա այս ուղղությամբ նա կարգադրություններ է անում՝ երգհոնի մեջ տեղավորելով փոքրիկ մարմնով մի մարդ, ուղարկում է հայոց վանքը, որ-

պեսզի հաջորդ օրը գնան պատարագելու: Կես գիշերին թաքստոցից դուրս է գալիս մարդը, սկսում է փշրել մարմարյա քարերը: Գիշերապահ ներքինին լսում է շխտկոցը և զարմացած նայում իր շորս կողմը. «Այս ի՞նչ ձայն է, տեր աստված. չէ՞ որ նախ քան քնանալս վանքի դռները ես պինդ փակեցի»: Մի փոքր մտածելուց հետո. «Ո՞վ կարող է ներս մտնել»: Ականջ է դնում, դարձյալ լսվում է շխտկոց: «Այս ի՞նչ բան է»: Մտմտալով իսկույն բարձրանում է պատրիարքի ննջասենյակը, որը նույնպես աչքերը բաց տարուերվում էր մտքերով: Եվ երբ պահակը ներկայանում է սրբազանին, նա զարմացած հարցնում է. «Ի՞նչ է պատահեր, տղաս»: Պահակը հայտնում է, որ վանքի ներսից ձայներ է լսել, ինչ-որ շրխտկոց: Սրբազանը ասում է. «Այո զավակս, ես էլ եմ զգում, որ Գլխադիրը տեղից շարժվում է»:

Պահակը՝ Սասունցի Պետոն, մոլեռանդ քրիստոնյան, որն իր ամբողջ կյանքում ծառայել է վանքին, առաջին անգամն է լսում այդպիսի շխտկոց: Խնդրում է սրբազանից արտոնություն՝ որ գնա իր ձեռքով մարքի հաշիվը: Սրբազանը օրհնում է Պետոյին, ասելով՝ «Գնա, զավակս, աստծու հրամանով ուղածիդ պես կարգադրիր»:

Սասունցին վերցնելով իր հնադարյան ժանգոտ թուրը, որ երեսուն տարի իր սպառանից դուրս չէր եկած, զգուշությամբ բանալով վանքի դուռը, բոբիկ ոտքերով առաջանում է դեպի ձայնը և նկատում է, որ մոմի աղոտ լույսի տակ մեկը նստած փշրում է մարմարյա քարերը: Դժբախտ մարդը իր գերեզմանն էր փորում: Չրխկ-չրխկ... Հանկարծ մի սոսկալի հարված է իջնում նրա գլխին: Սասունցին կտոր-կտոր անելով նրա մարմինը, տեղավորում է երգհոնի մեջ, և հավա-

քելով մարմարյա կտորները, մաքրելով նրա արյան հետքերը, բարձրանում է սրբազանի մոտ, պարզում իրականությունը:

Սրբազան հայրը գնահատում է նրա գործիակերպը՝ «Օրհնյալ լինիս, զավակս» — ասելով, և հանդիստ իր քունը շարունակում:

Առավոտվա դեմ, ժամանակից առաջ, եկած էին կաթոլիկ համայնքից ոմանք, հայտնելով որ պատարագը տեղի չպիտի ունենա, որովհետև իրենց հոգևոր պետը անհանգիստ է, հիվանդ է, և այս պատրվակով պետք է երգեհոնը հտ տանեն: Ուրախ-ուրախ երգեհոնը տանում են: Երբ բաց են անում, ի՞նչ տեսնեն... փոխանակ Գլխադիրի, իրենց ուղարկած մարդուկը կտոր-կտոր եղած:

Այս դեպքը խիստ ազդում է նրանց վրա, սակայն գաղտնի են պահում, որպեսզի չխայտառակվեն: Իսկ Հայոց պատրիարքարանը խստիվ արգելում է նրանց մուտքը Հայոց վանքը:

Դոկտոր Գալբակյանի միջոցով անցազրային խնդիրներս կարգադրելուց հետո վերադարձանք Բելյուրի: Այդ ժամանակներում Բելյուրի կղզու վեր Սոցիալ-Դեմոկրատ հնչակյան լիդեր Մ. Դամադյանը, որը պետք է բունախոսեր հայ ազատագրության մեծագույն հերոս զորավար Անդրանիկի մասին: Մեզ խնդրեցին կազմել գեղարվեստական հայտագիրը: Քուրսալ թատրոնի ընդարձակ թատերասրահը լի էր հոծ բազմություններ. Դամադյանը մանրամասնորեն ներկայացրեց զորավար Անդրանիկի կյանքը և գործունեությունը, որպես ազատագրության համար պայքարողի:

Հաջորդաբար սկսվեց գեղարվեստական բաժինը. տեղի

ունեցան արտասանություններ, մեներգ և զուգերգ իմ և տիկնոջս կողմից, ժողովրդի խնդրանքի վրա տիկ. Արծիվ երգեց «Ի՞րեւ արծիվ...» ներբողական երգը ձոնված Անդրանիկին:

Ներկաների ոգևորությունն արտակարգ էր: Սրահը թնդում էր ծափերի տակ:

Երուսաղեմի մեր տանջալի ճամփորդության պատճառով երեխայի առողջությունը քայքայվել էր, և ահա օր-օրի ծանրացավ, և մենք ընկանք մտատանջության մեջ, այլևս չէինք կարող որևիցե ձեռնարկ ունենալ:

Մեկ ու կես ամսից հետո մեր մանկիկը, անուշիկ Սիրվարդը փակեց աչուկները, մեզ թողնելով մեծ սուգի մեջ: Մեր առաջին և վերջին սիրո ծաղիկը թառամեց ընդմիշտ: Մեզ հասած դժբախտությունից հետո, որոշեցինք հեռանալ Բելյուրից: Ուղևորվեցանք դեպի Բաղդադ, անցնելով Մեսաբադամյան անապատից, որն անվանի է իր տեսած հրեշալին ո՞րքաներով: Այդ անապատից անցել ենք շորս-հինգ անգամ անվնաս, մինչդեռ երբեմն անցնող բեռնատար ավտոները վրա հարձակված են բեղվիներին ավազակային խմբեր, կողոպտել և սպանել են խեղճ ճամփորդներին:

Վերջապես հասանք Բաղդադ — արեւելյան մի հնադարյան քաղաք:

Բաղդադի հայությունը համար բացարձակապես նորություն էր մեր «Աշուղ Ղարիբ»-ի ներկայացումը:

Մեկ ու կես ամիս մնացինք Բաղդադում, ունեցանք ներկայացումներ, բեմադրեցինք էմին Տեր-Գրիգորյանի «Դամոկլյան սուրը»: Արաբական թերթերը մեծ գովեստով արտահայտվեցին մեր ներկայացումների մասին: Հետո շարունակեցինք մեր ճամփան դեպի Բասրա, որտեղ մնացինք մոտ եր-

կու շարաթ, ունեցանք երեկույթ ի նպաստ ազգային վարժարանի և հոգաբարձութիան կողմից ստացանք շնորհակալութիան նամակ: Բասրայում շփում ունեցանք հայտնի փաստաբան Իսկենդեր Մանսուրյանի հետ, որը սիրված էր հայ և արաբ ժողովրդի կողմից: Հայտնեցինք նրան, որ փափագում ենք անցնել Հնդկաստան՝ հանդեսներ տալու նպատակով, բայց անցագրի խնդրո շուրջը դժվարություններ կան: Հայ փաստաբանը ապահովեց, որ այդ խնդիրը ինքը կկարգադրե, միայն պետք է մի փոքր սպասել, որովհետև այդ խնդրով զբաղվող անգլիացի իր բարեկամը բաղաբից բացակայում էր: Մանսուրյանի երաշխավորությամբ ստացանք անցագիր և մեկնեցինք Բոմբեյ:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Անգլիական նավը իր ընթացքն առած՝ անցնում էր Հրնդկական մեծ օվկիանոսով: 1928 թվականի աշնանն էր:

Մի քանի օրից հետո հասանք Կարաչի կոչված ծովափնյա քաղաքը: Նոր աշխարհ: Շուտով մեր նավը ուղևորվեց զեպի Բոմբեյ, Հնդկաստանի զլխավոր նավահանգիստը: Ահա և նավամատույցը: Մի քանի ոստիկաններ, վերաբնիշներու հետ, մտան նավը և սկսեցին հարցաքննել: Իմ երկար մազերս նրանց ուշադրությունը գրավել էին. ամենից առաջ ինձ մոտեցան և հարցաքննեցին, թե ո՞րտեղից ենք գալիս, ի՞նչ նպատակով և ո՞ւր պիտի երթանք: Հայտնեցինք որ մենք հայ արտիստներ ենք, եկած ենք թատերական դաստրոլներով, մեկնելու ենք Կալկաթա, որտեղ ունենք մի մեծ հայ գաղութ,



Հայկ Արծիվը Մարտի դերում («Անուշ»)



Էմմա Արծիվ՝ Անուշի դերում (խելագործության տեսարանը)

իսկ Բոմբեյի մեր ներկա հասցեն լինելու է Մեղով Ստրիտ, 21, որտեղ պիտի սպասենք մի փոքր ժամանակ:

Հետագայում տեղավորվեցինք մի ռուսական պանսիոնում, որի տերն էր մադամ Ուլյանովան. նա շատ բարի անձնավորություն էր, մեզ դիմավորեց հարազատի պես: Իմացանք, որ խեղճ կինը կորցրել է իր ամուսինը, որը ժամանակին եղած է հայտնի ջուժակահար և ներկայիս կհանգչի Բոմբեյի հայոց գերեզմանոցում: Ռուսները այդ քաղաքում ոչ եկեղեցի ունեն, և ոչ էլ գերեզմանատուն, օգտվում են հայկականից: Տիկին Ուլյանովան ամեն օր զնում էր գերեզմանոցը և ողբում իր ամուսնու կորուստը: Հայ պահակը տեսնելով խեղճ կնոջը, խղճահարվելով, հայտնում է եկեղեցու հոգաբարձուիցանը և նրանք արգելում են տիկին Ուլյանովային, որպեսզի ամեն օր շքնա գերեզմանատուն: Մենք էլ մխիթարական խոսքերով հանգստացնում էինք նրան: Նա մեզանից շատ զոհ մնաց:

Դիմեցինք Բոմբեյի ռադիոկայանին և համաձայնեցինք մի քանի անգամներ երգելու: Մեր հայտազրի զլուխը կազմած էինք հայ գեղջկական կոմիտասյան երգերից, նույնպես իտալական, ռուսական ռոմանսներ, և այդ միջոցով ծանոթացանք հայ փոքրաթիվ գաղութի հետ, որի զլուխը կգտնվեին մի քանի նոր-ջուղայեցի հայեր: Վարչական կազմին կմասնակցեին նաև պոլսահայ ոսկերիչներ:

Այնտեղ ծանոթացանք «Հիզ Մաստերս Վոյս» գրամոֆոնի ընկերության տնօրինության հետ, և ի հաշիվ ընկերության, ձայնադրեցինք մի քանի երգապնակներ:

Մի երեկո մեր սենյակում փորձեր էինք անում: Դիմացի մեծ շենքում ապրում էր մի ֆարսի ընտանիք. նրանք լսելով

մեր երգի ձայնը, իրենց պաշտոնյայի միջոցով հայտնած էին փափագ, որ ուզում են մեզ հետ ծանոթանալ, և այդ առթիվ մեզ հրավիրեցին թեյի: Ընդունելով նրանց հրավերը, ներկայացանք: Ֆարսի տիկնոջ առաջին հարցումը եղավ. «Դուք երբեք երգած եք ռադիոյից»: «Այո» — պատասխանեցինք: «Որովհետև երբ դուք ձեր բնակարանում երգում էիք, ես ասացի այս ձայները ինձ ծանոթ են, քանիցս անգամներ լսած եմ ռադիոյից, ուրեմն շեմ սխալված: Ուստի շնորհավորում եմ ձեր գեղեցիկ երաժշտությունը և հրաշալի ձայները: Ես էլ դաշնակահարուհի եմ եղած, սիրում եմ երաժշտությունը և դրա համար էլ մոտիկից ուղեցի ծանոթանալ ձեզ հետ և շատ ուրախ եմ: Ներեցեք, դուք ի՞նչ ազդի կպատկանիք» — հարցրեց նա: Պատասխանեցինք. որ «Հայ ենք»: «Օ, շատ ուրախ եմ, ես հայ բարեկամներ, դպրոցական ընկերներ շատ եմ ունեցել Լոնդոնում, երբ Քեմբրիջի համալսարանում ուսանող էի: Դուք աչքի ընկնող ցեղի կպատկանիք: Հիշում եմ անգլիացի մեծ գրագետ Մայքլ Այրլենին (Տիգրան Գույումճյան), որը նույնպես հայկական ծագում ունի:

Մեր խոսակցությունը փոխվեց ավելի մտերմականի: Ֆարսի տիկինը առաջարկեց, որ առաջիկա շաբաթ անպայման իրենց մոտ անցնենք ճաշելու: Մենք շնորհակալություն հայտնեցինք ստելով. «Նայած հարմարություններին»:

Մի փոքրիկ լուսաբանություն. մենք լսել էինք, որ Ֆարսերը իրենց կերակուրների մեջ կովի մեղ են խառնում, և տատանումների մեջ էինք հրավերը ընդունել թե ոչ: Ֆարսի կինը հասկացավ մեր անորոշ պատասխանի իմաստը և սկսեց ծիծաղել. «Այո, հասկանում եմ, բայց դա սխալ է. երբ մենք ստար հյուրեր ենք ունենում, այդ ձեր լսածը շեք գործա-

դրում, ապահով եղեք, և եթե կարելի է, մի՛ մերժեք»: Մի փոքր տեսակցելուց հետո, վերադարձանք տուն, որտեղ տիկին Ուլյանովան ինքնահոը պատրաստած մեղ էր սպասում: Նրան հայտնեցինք այդ հրավերի մասին: Խորհուրդ տվեց շմերժել:

Ըստ մեր ժամադրության ներկա գտնվեցինք Ֆարսի շքեղ բնակարանը, որտեղ պատրաստված էր մի հույակապ սեղան: Մեր խոսակցությունը դարձավ ավելի մտերմական: Ֆարսի տիկինը կնոջս նվիրեց իր ազգային տարազներից լավագույնը իբրև հիշատակ, որը պահում ենք մինչև այսօր:

Բոմբեյի հայ զաղութի մի քանի աչքի ընկնող ընտանիքներ որոշած էին ի պատիվ մեզ կազմակերպել մի ուրախ երեկո, որտեղ բացի ջուղայեցի հայերից, կային նաև արևմրտահայեր՝ Սանոսյան, Լիմոնջյան, Հայկ, Արտաշես, Հակոբյան և Մերունյան ոսկերիչներ: Վերջինս հաստատփոր, կատակախոս, կնամեծար մի անձնավորություն էր. նա սիրում էր պատմել իր կյանքից ընդհանրապես զվարթ բաներ: Մերունյանը պատմում է. «Մեկ օր Բոմբեյի գլխավոր փողոցից անցնում էի, ի՞նչ տեսնեմ... մեծ խանութի առջև կանգնեց մի շքեղ ինքնաշարժ, որի մեջ նստած էր մի շքեղ գեղեցկուհի, իսկ կողքին կար մի անարժան մարդ: Մտածեցի. «Երանի նրա տեղը ես լինեի»: Մարդը իջավ և մտավ խանութ: Այդ առիթից օգտվելով ես մոտեցա ինքնաշարժին և ուղեցի տիկնոջ ուշադրությունը գրավել՝ անընդհատ աչք անելով: Վերջապես հաջողեցա: Մակայն կինը փոխանակ ժպտալու, դեմքը խոժոռեց, և ես քայլերս արագացրի: Այդ վայրկյանին կնոջ ընկերացող մարդը մտավ ինքնաշարժը: Նրանք ինչ-որ փրսփբսացին և հետևեցին ինձ: Չեղբերս, ոտքերս դողում էին:

Նրանք մոտեցան ինձ, ինքնաշարժը կանգնեցրին ճիշտ առջևս: Ես անմիջապես սկսեցի մարդուն աչքով անել: Նրանք լրջացան և չհամարձակվեցին այլևս ինձ դիտողութուն անել, միայն լսեցի, որ մարդը կնոջը ասում է. «Ձե՞ս տեսնում, որ ինձ էլ աչքով արեց, երևի նրա աչքերը ցավում են»: Այդպես խոսելով շարունակեցին իրենց ճամփան: Ես մեծ շունչ քաշեցի: Աղատված էի այդ փորձանքից»:

Մի պնդամ երգում էինք «Քոռնակլիո»-ում, ներկա էր նաև Մերունյանը, որը շափաղանց գոհ էր մեր երգերից: Նա տեսնելով, որ օտարները մեզ շատ են զնահատում, համերգի երկրորդ մասում, Մերունյանի խնդրանքի վրա, տիկինս երգեց «Մաղամ Բատերֆլայ» օպերայից, և ստացավ մի մեծ ծաղկեփունջ Մերունյանի կողմից: Հաջորդ օրը այցելեցինք իր բնակարանը: Մեզ ներս ընդունեց մի սևամորթ կին, մեծ աչքերով. դուրս եկավ նաև ինքը Մերունյանը, բարեկեց և ծանոթացրեց այդ կնոջ հետ, ասելով. «Ձեզ կներկայացնեմ տիկինս՝ Քիթին»: Մեզ էլ ներկայացրեց որպես իր հայրենակիցները: Քիթին ժպտազեմ բարեկեց «Հաո՞ւ դու չու դու» ասելով:

Մի փոքր զրույցից հետո ես հարցրի Մերունյանին. «Քիթին շատ երիտասարդ է, իսկ դուք բավականին տարիքոտ: Մի՞թե նոր եք ամուսնացել»: Նա հարցերիս շպտասխանեց, լուռությամբ անցավ և խոսքը փոխելով սկսեց կատակներով ծածկել առեղծվածք և գոչեց. «էյ Քիթի, շուտ վիսկի բեր, հյուրասիրութուն արա, նրանք անվանի երգիչներ են և արժանի են ամեն զնահատանքի»: Քիթին պատասխանեց. «Այ եմ վերի գլադ» (Ես շատ ուրախ եմ) ասելով հյուրասիրեց մեզ:

Մեկ-երկու բաժակ խմելուց հետո մեր հրաժեշտը տվինք Մերունյանին և իր Քիթին:

Հետևյալ օրը հայերը լուր ունեին մեր այցելության մասին և պատմեցին Մերունյանի ամբարտաձևության մասին, որ նա ամուսնացած է եղել և բաժանված իր կնոջից, ունեցել է նաև զավակներ. ինքն այդպես շվայտ կյանք վարելով անցկացնում է իր օրերը:

Բոմբեյում ծանոթացանք հայտնի երգիծարան Երվանդ Օտյանի մեծ եղբոր՝ Հրանտ Օտյանի հետ, որի կինը Ֆրանսուզի էր: Նա զբաղված էր առևտրական գործերով: Մեկ օր տիար Օտյանը ռադիոյից լսելով մեր երգը, փափազում էր մեզ հետ ծանոթանալ: Այդ առթիվ գտնվեցինք իր բնակարանում և հայտնեցինք, որ անձնապես ծանոթ ենք իր եղբոր՝ Երվանդ Օտյանի հետ, երբ նա Տրիպոլսում կգտնվեր:

Հրանտ Օտյանը ջերմ խոսքերով զնահատեց մեր գործունեությունը և ասաց. «Հայ երգը իր բարերար ազդեցությունը կթողնու սփյուռքի հայության վրա և միևնույն ժամանակ դուք մեծ քաջությամբ և զոհողությամբ զայն կծանոթացնեք լուրջ միջավայրին: Դա հայերուս համար ուրախութուն է, ուստի կմաղթեմ ձեզ անսպառ ուժ և կարողություն»:

Բոմբեյում ծանոթացանք նաև լեզվագետ, հայտնի հրատարակախոս Սարգիս Մկրյանի հետ, որն այդ ժամանակ խմբագրում էր անգլերեն լեզվով մի ինչ-որ ժողովրդական թերթ. միևնույն ժամանակ, նույն Մկրյանը թարգմանած էր Օմար Խայամը անգլերեն լեզվով: Մկրյանն օժտված էր ընկերվարական բարձր գաղափարներով և սիրված էր աշխատավոր զանգվածներից: Նա ուներ մտերմական կապեր հնդիկ մեծ գիտնականների հետ և անձնապես բարեկամ էր բա-

նաստեղծ Ռարինդրանատ Տագորի հետ: Նա ժամում էր թըշվառ հնդիկներու բնակարանները, խոսում էր նրանց հետ հնդկերեն, ուսումնասիրում նրանց կյանքը և հուսադրում, որ մոտ է հնդիկ ժողովրդի համար ազատության արշալույսը:

Մկրյանը հակաանգլիական ցույցեր էր կազմակերպում, հանդուգն էր բառի բուն իմաստով: Բոմբեյում ամենահասարակ հնդիկն անգամ ծանոթ էր Մկրյան անվանը: Սարգիս Մկրյանը շատ էր սիրում երգ-երաժշտություն, ինքն էլ էր մի փոքր երգում իտալերեն ոտմանաներ: Մկրյանի հետ շատ հաճելի էր բարեկամություն անել: Պոմբեյից հետո անցանք բովանդակ պշխարհ. մեկ էլ հանկարծ, 1937 թվականին Լոնդոնի հայոց եկեղեցու շրջապատում կրկին տեսնվեցինք մեր սիրելի Մկրյանի հետ: Նույն զվարթ, եռանդուն, ըմբոստ, մարդասեր անձնավորությունն էր մնացել. եկած էր Անգլիա՝ իրեն հատուկ գործերով: Վերջին տարիները, երբ կգտնվեինք Բուենոս-Այրեսում, հետաքրքրվեցինք Մկրյանի հարազատների մասին. լսեցինք որ Սարգիս Մկրյանը գտնվում է Իտալիայում, համայնավար շարքերում և բանտարկվել է: Շատ ցավեցինք նրա համար:

ԴԵՊԻ ԿԱԼԿԱԹԱ

Հնդկաստանի մեծ և զեղեցիկ քաղաքներից մեկն է Կալկաթան, նրան կարելի է բաղդատել եվրոպական մեծ քաղաքների հետ: Կյանքը վայելում էին գաղութատերերը, իսկ երկրացիները ապրում էին թշվառության մեջ:

Մենք հաճախ էինք հետաքրքրվում հնդիկների կյանքով

և շատ անգամ լսում նրանց գանգատները. «Մենք անգլիացիների ստրուկներն ենք և զրկված ենք մեր երկրի բարիքներից»: Հույս էինք տալիս նրանց և մխիթարում, որ կգա ժամանակ, դուք էլ կգտնեք ձեր ազատությունը»:

Հնդիկները հայերի նկատմամբ բարեկամաբար էին տրամադրված:

Կալկաթայում այն ժամանակ կար բազմամարդ մի հայ գաղութ, շատերը Պարսկաստանի՝ Նոր-Ջուղայից եկածներն էին, ունեին իրենց կրթական հիմնարկությունները, որոնցից աչքի էր ընկնում «Սարգասիրական ճեմարանը». ունեին նաև թատերասրահ, գրադարան և սպորտային դաշտ: Գաղութն ուներ մի փառավոր եկեղեցի, որ հանգուցյալ բարերարների թողած կտակներով և հասութաբեք աղբյուրներով կարելի էր համարել բովանդակ հայության ամենահարուստ եկեղեցին, որին կից գտնվում էր «Բարիքի տունը», որ իրենք կոչում էին «Խեյրաթխանա»: Այստեղ պատսպարվում են ծերեր, զուրամյալներ, հիվանդներ, որոնք ստանում են թոշակ՝ եկեղեցու վարչությունից: Գաղութի կենտրոնական դեմքն էր Հովհաննես Գալստյանը, — մեծահամբավ մի անձնավորություն: Նա իր բացառիկ արժանիքների շնորհիվ պարզևատրված էր անգլիական կառավարությունից՝ բարձր աստիճանով: Երբ Անգլիո թագաժպտանգ էզվարդ Հինգերորդը կայցելեր Կալկաթա, կիջեաններ հայ Գալստյանի ապարանքը՝ անգլիացիների նախանձը կզրգոներ: Գալստյանն իր հեզ ու խոնարհ բնավորությամբ սիրված էր իր շրջապատից. նրա նյութական մեծությունը իր համեստ և խոնարհ բնավորության վրա երբեք չէր ազդում: Նա որքան մեծահարուստ էր, այնքան էլ համեստ էր իր բնավորությամբ: Ամենապարզ մարդը՝ պանդուխտ մշեցին

կամ վանեցին նրա համար միևնույն էին, նրանց հետ միասին
սեղան էր նստում և իր ձեռքով հյուրասիրում նրանց, շատերի
կարիքներին հասնում. ազգային արժանապատվության գի-
տակից, նախանձախնդիր այս լուրջ մարդը ասում էր. «Մեր
ձեմարանը, մեծ օջախը վառ պահենք, ամեն կերպ օժանդա-
կենք, որ նա հասունացնի քաղցր պտուղներ»:

Ազգային գծից դուրս նա մրցում էր անգլիացի և օտար
վաճառականների հետ և ընդհանրապես իր սկզբունքն էր շեն-
քեր կառուցել ժողովրդի համար: Կալկաթայի կարևոր փողոց-
ներից մեկի վրա կանգնած է «Գալստյան մենջըն» հոյակապ
մի շենք, որտեղ ապրում են հազարավոր ընտանիքներ:
Գալստյանը միևնույն ժամանակ սիրում էր ձիարշավներին
մասնակցել, նա ուներ արագավազ և ընտրյալ ձիեր, որոնք
խնամքով պահում էր և մասնակցում միջազգային մեծ մր-
ցումներին: Զիարշավային ընկերությունն ուներ իր մասնա-
վոր ակումբը, որ կկոչվեր «Ջոկի կլուբ», որին կանդամակցեին
անգլիացի մեծ դրամատերեր, հնդիկ Աղախանը և ինքը Հով-
հանես Գալստյանը:

Զիարշավի մրցման առթիվ կուզեի մի ղեպը հիշել: Մի օր,
Կալկաթայի ընդարձակ ձիարշավարանում տեղի ունեցավ ար-
տակարգ արշավ, որտեղ մասնակցում էր նաև Հովհանես
Գալստյանի ձիավարը: Գալստյանը իր ձիավարի ընթացքից
նկատեց, որ նա կաշառված է հակառակորդների կողմից: Ար-
շավն սկսվելուց առաջ նա ինքն է թռչում ձիու վրա: Վաթ-
սուն-վաթսունհինգ տարեկան այդ մարդը ուսանների տարա-
փի տակ, առաջնություն շահեց և այդպես պատժեց իր հա-
կառակորդներին:

Այդ հանդուգն հայ մարդը Կալկաթայում կառուցել էր մոտ

երկու հարյուրից ավելի շենքեր և մեծ ծառայություն մատու-
ցել հնդիկ ժողովրդին: Դժբախտաբար ձիարշավային խաղը
հետագայում նրան մեծ վնասներ պատճառեց:

Կալկաթայի «Մարդասիրական ձեմարանը» և հայոց եկե-
ղեցին գտնվում էին Գավիթ Գավթյանի ղեկավարության ներ-
քո: Այս բարի զգացումներով օժտված մարդը իր ամբողջ
կյանքում տանջվել, շարշարվել, աշխատել էր ու վերջապես
հասել որոշ բարձրության: Գավիթ Գավթյանը—նախկին
չուղայեցին, թողնելով իր ծննդավայրը, գալիս է Հնդկաս-
տան, այն մեծ հույսով, որ ուսում ստանա, արժանավոր
մարդ դառնա: Նա դիմում է կրթական հաստատություններին,
որպեսզի ընդունեն իրեն, բայց չի հաջողվում, նյութական
միջոցներից նա զուրկ էր: Այս տխուր ղեպը խորապես
վզդում է պատանի Գավթյանի վրա, և թողնելով Կալկաթա
քաղաքը, մեկնում է Գելի, գործ փնտրելու: Մտնում է աշխա-
տանքի երկաթուղային մի ընկերության մեջ: Երկար տարի-
ներ ծանր աշխատանքի լծվելով, նա իր ուշիմության և բնա-
ծին հատկությանց շնորհիվ պաշտոնով բարձրանում է, սիր-
վում և գնահատվում շրջապատից, և ձեռք բերում բարձր
գլխի: Տարիներ հետո կրկին վերադառնում է Կալկաթա և որո-
շում իր մտածած ծրագրերը իրագործել: Նյութական իր բոլոր
խնայողությունները հատկացնում է ուսումնածարավ, միջոց-
ներից զուրկ մանուկներին և բաց է անում աղջիկների վար-
ժարան՝ իր անունով, որտեղ հաճախում են ոչ միայն հայեր,
այլև օտարներ: Գավթյանի խորհրդանիշն էր՝ կրթել իգական
սեռը, որպեսզի ապագայի համար լավ մայրեր լինեն: Նա
բաց է անում մի դպրոց ևս Թեհրանում: Այս առթիվ իր անու-
նը անմոռանալի կամա սփյուռքահայության մեջ:

Կալիաթայում ծանոթացանք Պետրոս Գրեղյանի հետ, — նույնպես պատկառելի մի անձնավորություն: Նա իր նյութական միջոցները հատկացրել էր հրատարակչական գործերի, նպաստելով Մխիթարյանների՝ Վենետիկ և Վիեննա:

Կալիաթայում պատահական հայ անցորդներ հյուրընկալվում են «Կոնտինենտալ» օթելի տերերի՝ ղույզ եղբայրներ Մեկ-Ջոն (Մկրտիչ և Զերեթիա) Հովհաննիսյանների կողմից, որոնք հայտնի էին իրենց հայրենասիրությամբ: Զի պատահել, որ մի թափառաշրջիկ պանդուխտ հայ չհյուրընկալվի այդ հարկի տակ: Մենք ևս առաջին այցը Կալիաթայում կատարեցինք Հովհաննիսյանների հյուրանոցում: Նրանց մոտ հյուրընկալված են հայտնի երգիչ Արմենակ Շահ-Մուրադյանը, բժշկապետ Հրաչ Մուրադյանը և Պարսկահնդկաստանի թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (մապիստրոս): Հիշյալ հոգևորականին տրված հարգանքի սեղանին մենք էլ հրավիրված էինք: Մազիստրոսի առաջարկի վրա տիկին Արծիվ երգեց Կոմիտասի «Հայաստան»-ը: Նրա աչքերում արցունքի շիթեր երևացին: Մենք էլ հուզվեցինք, որպես հայրենակարոտներ: Երգի վերջավորության, մի քանի ջերմ խոսքերով մազիստրոսը զնահատեց, ասելով. «Ծառայել հայ գեղարվեստին՝ նշանակում է ծառայել հայ ժողովրդին»:

Կալիաթայի կենտրոնական Զորենգի (Լայն) փողոցի վրա գտնվում էր «Գրանդ օթելը», — ամենամեծ հյուրանոցը քաղաքի, որը պատկանում էր Ստիֆենին (Ստեփանյան): Ծարպիկ հայ վաճառական էր նա, ուներ նաև մի հյուրանոց «Մոնտ էվերեսթ» անունով, Գարջինգ քաղաքում:

Մի հետաքրքիր դեպք Ստեփանյանի կյանքից:

Կալիաթայում բոլոր աչքի ընկնող վաճառականները հայ-

վաքվում են իրենց հատուկ ախուճում: Օրվա նյութի շուրջ տեղի են ունենում վիճաբանություններ: Ահա այդ ժամանակ անգլիացի մի վաճառական հարձակվում է Ստեփանյանի վրա անվայել խոսքերով. «Տո Ստիֆին, ի՞նչ գործ ունիք Հնդկաստանում, չգնա՞ք ձեր Հայաստանը»: Ստեփանյանը չի պատասխանում: Անգլիացին շարունակում է իր ավելորդաբանությունները. «Դուք եկել եք այստեղ և ամեն տեղ տներ եք շինում, ի՞նչ է ձեր նպատակը, երևի ուզում եք Հնդկաստանը Հայաստան՞ դարձնել»: Ստեփանյանը համբերությունը հատած պատասխանում է. «Դուք անգլիացիներդ ազահ եք, որքան ուտե՞ չեք կշտանա, և հետո կույր կձեռնաք ձեր շորս կողմը տեսնելու համար այն բարիքները, որ ուրիշներն են ստեղծում այս երկրի վրա: Դուք փոխանակ շնորհակալություն, որ մենք տներ ենք շինում ձեզ նմաններին հյուրընկալելու, ընդհակառակը, ամարդի կերպով մեզ վիրավորում եք: Եթե մենք չկառուցեինք այս գեղեցիկ շենքերը, դուք ո՞րտեղ պիտի իջեանեիք, — հնդիկների առանձնահատուկ բնակարաններո՞ւմ: Ուրեմն բարի եղեք ձեր խոսքերը ետ վերցնել և ներողություն խնդրել: Անգլիացին կրկին հարձակվում է Ստեփանյանի վրա: Այս անգամ վիրավորում նրա արժանապատվությունը: «Տո՛, Ստիֆին, դու լավ գիտցիր, որ ես քեզ կարող եմ կուլ տալ»: Ստեփանյանը պատասխանում է. «Սյո, կուլ կտա՛ս, բայց կոկորդումդ կմնամ, կխեղդվես»: Պարզ խոսակցությունը հետզհետե փոխվում է կռվի: Անգլիացին այս անգամ վիրավորում է Ստեփանյանի ազգային զգացմունքները: Ստեփանյանը համբերությունը կտրած, ձեռքի սոսկալի հարվածով գցում է նրան գետին: Ժողովը ժխորի է վերածվում: Ստեփանյանը վերադառնում է իր հյուրանոցը և

պատվիրում մի մեծ սեղան, հայտարարելով, որ այսօր ուրախութեան օր է, հաղթանակի օր, — հային անպատվել և առանց պատժի մնալ՝ անկարելի է: «Կեցցե Հայաստանը»: Ուրախութունը տևում է մինչև լույս: Ստեփանյանի համար մի քանի հազար վճարել և անգլիացի ծեծելը ամենահեշտ բանն էր:

Հնդիկ մեծ անձնավորութիւնները լսելով այս դեպքը, եկած էին Ստեփանյանին շնորհավորած:

Մի-երկու շաբաթից հետո կազմակերպեցինք մեր առաջին նրգահանգեսը, որը տեղի ունեցավ Հայոց մարդասիրական ճեմարանի թատերասրահում: Կալկաթայի հայութունը ողբվորված էր արտակարգորեն, իր մեջ ունենալով երգիչ-գերասանների ներկայութունը: Գաղութի սիրված ղեմքերից Գալստյանի առաջարկի վրա ունեցանք Յ-րդ համերգը՝ քաղաքի մեծ սրահներից մեկում, մասնավորապես հայ երգը օտարներին ծանոթացնելու համար:

Մեր հայտագիրը կազմած էինք հայ գեղջկական և դասական գոհարներից, ինչպես և ռուսական սիրված ռոմանսներին, իտալական աշխարհահռչակ հեղինակների գործերից: Մեր երգերը գրված էին օտարների ուշադրութունը, որոնց մեջ կգտնվէր հնդկական ռադիոյի տնօրեն միստր Ջեյնսոնը, սրի առաջարկի վրա պայմանավորվեցինք մի քանի անգամներ էրգել ռադիոկայանից: Այդ առթիվ մեր լուսանկարները հրատարակվեցին ռադիոժուռնալների մեջ, որ պահում ենք մինչև այսօր: Մի անգամ, երբ երգում էինք ռադիոյից, տնօրենութեան և ունկնդրող հասարակութեան փափագով մենք ստիպվեցինք կրկնել հայ գեղջկական երգերը, որը մի բացառիկ երևույթ դարձավ: Ներկայացումից հետո Հովհաննես Գալստ-

յանը մեզ իր տունը հրավիրեց, իր հիացմունքը հայտնեց հետևյալ բառերով. «Միրելի Արծիւններ, դուք հայութեան անշահահնդիր բարեկամներն եք, գոհելով ձեր երիտասարդութիւնը, ընկած եք երկրի երկիր հայ երգը և մայրենի լեզուն տարածելու համար: Ձեր թափած ջանքերը զնահատելի են, միևնույն ժամանակ դուք հանդիսանում եք մեծ օղակ արտասահմանի հայութունը կապելու մայր երկրին: Հայաստանը բոլոր հայերիս կապտկանի, մենք պետք է ամեն կերպ նպաստենք նրա հառաջադիմութեանը և դարգացնենք: Ներկա Հայաստանը շատ ուրախալի է որ մաս կկազմե Սովետական Մեծ ընտանիքին, ռուս ազգը մենք սիրած ենք շատ վաղուց՝ իր անկեղծ և բարի դրացիութեան համար: Մեր պապերն էլ ժամանակին ասում էին. պիտի գա մի օր, որ Մոսկով պապան մեզ պիտի ազատե պարսիկ—թուրք բռնապետներից: Եվ ահա եկավ այդ օրը, իրականացան մեր երազները»:

Կալկաթայից մի քանի մղոն հեռավորութեան վրա գտնվում է Ասանսոր կոչված փոքրիկ քաղաքը, որտեղ կար փոքրաթիվ հայութուն: Մաղաթյան եղբայրները մեզ հրավիրեցին այնտեղ, որ մի համերգ տանք. այդ հրավերը ընդունելով անցանք Ասանսոր: Մեր համերգին ներկա էր բովանդակ հայ գաղութը, ինչպես նաև անգլիացիներ, հնդիկներ, որոնք ողբվորված էին: Հայտագիրը համարյա կրկնվեց: Ներկայացրինք նաև «Աղամ և Եվա» օպերետը:

Այդ շրջանում գտնվող հայերը, դժբախտաբար, իրենց ազգութունից հրաժարվում էին. այդ տխուր երևույթի հանդեպ ուրախալի էր Մաղաթյան եղբայրների բռնած դիրքը: Նրանք ուղղակի պայքարում էին ալլասերման դեմ և հպարտութեամբ էին հայտնում իրենց հայ կոչումը: Մեր երգահանգեսը նույն-

պէս իր ազգօգուտ դերը կատարեց այդ շրջանում և մենք ուրախ սրտով վերադարձանք Կալկաթա:

ԱՐՄԵՆԱԿ ԵԱՀ-ՄՈՒՐԱՂՅԱՆԻ ՀԵՏ

Նա բարձրահասակ, առնական դիմագծերով, լայն թիկունքով մի տղամարդ էր, ուներ խոժոռ նայվածք, փարթամ մազեր, աչքի էր ընկնում նամանավանդ իր մեծ քթով: Հաղնվում էր շատ կոկիկ: Երգարվեստի նկատմամբ շատ խիստ էր և պահանջկոտ: Գեղարվեստի այդ փշոտ ճանապարհը նա անցել էր խիզախորեն, մեն-մենակ: Առաջին հանդիպողի վրա նա թողնում էր խիստ տպավորութուն, բայց իրականութունը բոլորովին այլ էր. ուներ մանկական սիրտ և արտակարգ գոհարերող հոգի: Միևնույն ժամանակ նա մեծ հայրենասեր էր բառիս լայն իմաստով, սիրում էր և հարգում տաղանդավոր, ուղղամիտ մարդկանց: Ե՛հ-Մուրաղյանն իր կյանքում քիչ բարեկամներ ուներ, խուսափում էր շատերից և մեկուսացած կյանք վարում: Հիշում էր մի ասացվածք, որ մշեցիները հաճախ են գործածում. «Ծթե մենք մեկին սիրենք, սրտով կսիրենք, ոչ թե խոսքով»: Արմենակ Ե՛հ-Մուրաղյանն էլ այդպես էր: Երբ նա բեմ էր բարձրանում, երգում էր իր ջինջ ու մաքուր դրամատիկ ձայնով, նրա դեմքի վրայի նշմարելիք պակասութիւնները անհայտանում էին: «Տարոնի Սոխակ»-ը, ինչպես կոչում էին նրան, իր հարազատ երգեցողությամբ հիացում էր պատճառում բոլոր ունկնդիրներին, կյանք ներշնչելով սփյուռքահայ բովանդակ հայրենակարտ ժողովրդին:

Ե՛հ-Մուրաղյանին հանդիպել եմ երեք անգամ. առաջինը 1921 թվականին էր, Իզմիր քաղաքում: Նույն ժամանակ Իզմիրումն էր գտնվում նաև դերասանապետ Հովհ. Արելյանը, — էրեք բարեկամներ էինք, հաճախ էինք հանդիպում հայկական շրջաններում և միշտ կատակներով անցկացնում մեր ժամանակը: Ե՛հ-Մուրաղյանը իր ստորագրությամբ լուսանկարը նվիրեց ինձ, պահում եմ որպէս լավագույն հիշատակ:

Երկրորդ անգամ Ա. Ե՛հ-Մուրաղյանի հետ տեսնվել ենք Բեյրութում, մոտավորապես 1925 թվին: Վերջին անգամ Ե՛հ-Մուրաղյանին հանդիպեցինք Կալկաթայում, մենք վերագառնում էինք Ճավայից, իսկ նա ուզում էր մեկնել Ռանգուն, այնտեղից էլ Ճավա: Նրան հանձնեցինք երգասեր մեր ծանոթների հասցեները, որպեսզի բարոյապես և նյութապես օժանդակեն մեծ երգչին: Նախ քան մեր բաժանումը, երբ գտնվում էինք էլիս Կարապետյանների բնակարանում, խընդրեցինք Ե՛հ-Մուրաղյանին, որ պատմի իր կյանքից հետաքրքիր դրվագներ: Նա պատմեց, թե ի՛նչպես ինքը գտնված է հանրածանոթ Նուպար փաշայի ապարանքում՝ Փարիզ եղած ժամանակը: Նուպար փաշան կազմակերպած է եղել մի բացառիկ երեկույթ ի պատիվ Ֆրանսիացի բարձր անձնավորությանց, ուր ներկա գտնված են նաև հայ երեսիլիներ. նույն երեկույթին հրավիրված է եղել նաև ինքը՝ Ա. Ե՛հ-Մուրաղյանը: Խրախճանքի ժամանակ, ջերմ մթնոլորտում, փաշան առանձնանալով Ե՛հ-Մուրաղյանի հետ, առաջարկում է ներան, որ երգի իր նախընտրած կտորներից, Ե՛հ-Մուրաղյանը ճերժում է, ասելով որ առաջիկային իր համերգին փաշան և իր հյուրերը կարող են թատերասրահ գալ և լսել իր երգը: «Նղբայր, — ասում էր Ե՛հ-Մուրաղյանը, — մեր հայերը

իրենց բոլոր առավելութունների շարքին, ունեն նաև վատ սովորութիւններ. հրավիրում են իրենց բնակարանը հյուրասիրութեան, շէս մերժում, ընդունում են այդ հրավերը և հազիվ սեղան են նստում մի բան ուտելու, անմիջապէս տանտերը գլխիդ վերև կանգնում և ասում է՝ «Արմենակ ջան, կեր, անուշ արա, դու այսպիսի համեղ կերակուրներ շէս կերած, կեր, որ պիտի երգես»... Դա ինձ համար անտանելի է, մերժում եմ արդարացիորեն և պարզում խնդիրը, որ արվեստագետին պետք է լսել միայն թատրոնում: Տանտերը կատարյալ կերպով նեղանում է ինձանից և ես զլխարկս վերցնելով հեռանում եմ և որոշում այլևս այդպիսի հրավերներ չընդունել»:

Հայտնի է, որ Շահ-Մուրադյանը Փարիզի կոնսերվատորիան փայլուն կերպով ավարտելով բավական ժամանակ աշխատել է Փարիզի ազգային մեծ օպերայում և ստանձնել առաջնակարգ դերեր:

Մի երեկո Ա. Շահ-Մուրադյանը պիտի կատարեր Ֆաուստի դերը: Նախքան ներկայացումը, Փարիզի զլխավոր փողոցներից անցնելու ժամանակ, նա տեսնում է, պատերին փակցրված օպերայի մեծ աֆիշները, որտեղ գրված է՝ «Ֆաուստի դերը պիտի կատարե Ա. Շահ-Մուրադը»: Նայում է և դայրացած ասում. «Այս ինչո՞ւ են կրճատել իմ ազգանունը, ո՞ւր է իմ «յանը»: Սրտնեղած անմիջապէս անցնում է օպերայի գրասենյակը և դիմում ղիրեկտորին. «Ո՞վ է իրավունք տվել իմ անվան վերջավորութունը աղավաղել. դուք լավ գիտեք, որ իմ ազգանունը Շահ-Մուրադյան է, ոչ թե Շահ-Մուրադ»: Գիրեկտորը տեսնելով նրա ջղազրգուլած վիճակը, մեղմութեամբ ասում է. «Սիրելիս, ի՞նչ տարբերութուն Շահ-Մուրադ թե՛ Շահ-Մուրադյան»: «Ձեզ համար տարբերություն չկա,—

ասում է Շահ-Մուրադյանը,—իսկ ինձ համար կա: Ես հայ եմ, և երբեք մտադրութիւն չունիմ հրաժարվելու իմ ազգութիւնից: Եթե մինչև ներկայացման զիշերը նոր աֆիշներ չհանվին և իմ ազգանունը ամբողջութեամբ չգրվի՝ ես բեմ դուրս չեմ գա»:

Այսպիսով Մեծ օպերայի տնօրինութիւնը պարտավորվում է նոր աֆիշներ հանել: Այդ օրը Արմենակ Շահ-Մուրադյանը կատարում է իր դերը ավելի հրաշալի և արժանանում փոթորկալից ծափողջույնների:

Այս դեպքից մի քանի ամիս հետո, ինչ-ինչ պատճառներով, Շահ-Մուրադյանը հեռանում է Փարիզի ազգային օպերայից և նվիրվում է հայ երգը տարածելու հայրենասիրական մեծ գործին:



Կալկաթայից մասնավոր երկաթուղիով, օժապտույտ ճանապարհներով, խիտ անտառների միջով գնում ենք դեպի Դարչինկ կոչված ամառանոցը, որ միևնույն ժամանակ Հընդ-կաստանի թեյաբուժութեան ամենագլխավոր կենտրոններից մեկն է: Երկաթուղին լույս է սփռում շորս կողմը, որպեսզի վայրի գազանները լույսից փախչեն և չհարձակվեն ճամփորդների վրա: Այս մասին նախօրոք երկաթուղու պաշտոնեկներին վրա: Այս մասին նախօրոք երկաթուղու պաշտոնեկները տեղեկացրած է բոլոր ճամփորդներին, որ երբ երկաթուղին կանգ առնի որևէ կայարան, ոչ ոք վազոնից դուրս չգա և ոչ էլ պատուհանները բաց անի, մինչև որ գնացքը շարժվի: Երկաթուղու հսկայական լույսերի տակ երևում

էին վագրեր, առյուծներ, փղեր, և ծառերի վրա բարձրացած ամեն տեսակի հաղթանգամ կապիկներ: Գազանների մոնշլոսը նը թնդացնում էր անտառը և կաղմում էր մի տեսակ դժոխային սիմֆոնիա, որը սարսափ էր ազդում բոլորիս:

— Մեր երկաթուղին արագընթաց շարժումով ուղևորվեց Տիբեթի բարձրավանդակը. այլևս երկյուղը անցած էր, և մենք հանգիստ սրտով նայում էինք մեր շորս կողմը, տեսնում Հիմալայան լեռնաշղթան, սկզբում երևում էին երեք քույրեր, հսկա լեռները, որ կկոչվին «Քինշին-ջան կա»: Նրանք մշուշապատ էին և դժվար նշմարելի:

Վերջապես տեղ հասանք և տեղավորվեցինք մի ծանոթ հայի բնակարանում: Ամառանոցի ընդհանուր տեսարանը հիացմունք էր պատճառում մեզ և շրջիկ օտարականներին:

Մեկ օր որոշեցինք, մի քանի ընկերներով անցնել թեյահավաքի դաշտերը և մոտիկից տեսնել նրանց աշխատանքը: Բնությունը սկզբում մեզ հյուրընկալեց քաղցրությամբ, սակայն շուտով հորիզոնը մշուշապատվեց, մրրկեց, այլևս մի քանի քայլ հեռավորության վրա չէինք տեսնում մեկս մյուսիս. սկսվեց նաև սոսկալի անձրև, կայծակի որոտումը ամպրոպ առաջացրեց. մնացինք շվարած և շնորհիվ Տիբեթյան աշխատավորների, դժվարությամբ կարողացանք վերադառնալ տուն:

Յրտից և խոնավությունից ազդված էի և ստիպվեցի մի քանի օր անկողնում մնալ: Փոքր կազդուրվելուց հետո, հայ բարեկամների ընկերակցությամբ սկսեցինք շրջել Դարչլինգի շրջակայքը: Ամառանոցի ամենաբարձր մասում կդտնվեի «Օթել մոնթ էվերեստ»-ը, որը սեփականութունն էր Ստիֆենի (Ստեփանյան հային), որտեղ պայմանավորված էինք երգի-

լու: Այդ հյուրանոցի աշակղմյան բարձունքի դիտարանից մենք բախտ ունեցանք տեսնելու Հիմալայան լեռնաշղթայի ընդհանուր տեսարանը՝ իր բարձրագագաթ էվերեստով. հրեղիկները նրան կոչում են «Կառուի զանկար»:

Մտանք տեղացի ժողովրդի մեջ և հետաքրքրվեցինք նրանց նիստ ու կացով: Տեսանք այլազան զգեստներով ծպտված տիբեթցիներ, բախտագուշակներ, որոնք միաժամանակ պարում, երգում էին ինքնահատուկ ձևերով և ուրախություն պատճառում նայողներին. տեսանք մասնավոր զարդարված մի խորհրդավոր սենյակ, որտեղ բազկաթոռի վրա ծալապատիկ նստած էր նրանց հոգևոր պետը («Ամա-Պուհզա»), որի առջև դրված սեղանի վրա տեղավորված էին զանազան տուփեր, բաղմագույն ներկերով: Անցնող բնիկները ծունկի գալով նրա առաջ խոստովանում են իրենց մեղքերը, իսկ հոգևոր պետը մունջորեն աղոթում է նրանց համար և այդ ներկերից վերցնելով խառնում է միմյանց և զարգարում ենթակայի չակատը և խոժոռ հայացք ձգելով ստանում է նյութական վարձատրություն:

Տեսանք նաև մի խորհրդավոր տեսարան. զա մեղքի քավման հավաքատեղին էր. գտնվում էր մի բլուրի վրա. քառակուսի փայտաշեն մի կառույց՝ կապված հաստիկեկ թելերով, որի վրա տեղավորված էին բազմաթիվ սպիտակագույն կտորներ, որոնց վրա կային մարդկանց անուններ, ազգանուններ, զորվածքներ իրենց գործած հանցանքների մասին: Բայց զրանք ետիված մնում էին երկար ժամանակ, մինչև որ անձրևից կամ խոնավությունից ջնջվեն-մաքրվեն: Որբան շուտ, այնքան լավ է զա տիրոջ համար, որովհետև մեղքից ազատված էլինի: Իսկ այն զրվածքները, որոնք երկար են մնում, շեն

մաքրվում, նրանց տերերը մնում են միշտ մեղքի մեջ: Սակայն մենք նկատում ենք, որ դրանք միևնույն մեխանով չեն գրված, դրա համար էլ ոմանք շուտ են ջնջվում, իսկ ոմանք էլ երկար ժամանակ մնում անջնջելի: Ուրեմն այստեղ անպայման մի «գաղտնիք» կա... Ի՞նչ կարող է լինել... «Գաղտնիքը» հետևյալն է: Խեղճ մարդկանց մեղքերը հասարակ մեխանով են գրում, որպեսզի շուտ ջնջվի, որ այդպիսիները իրենց այցելություններով շանհանգստացնեն հոգևոր պետին: Իսկ հարուստների համար տարբեր մեխանով է գրված, որպեսզի դժվարություններ ջնջվի գրվածքը, նրանք դատապարտված մնան և ստիպվեն հաճախ այցելել պետին և վճարել սակը:

Գարշիլինգից հետո, երբ վերադառնում ենք Մադրաս, մի զեպե պատահեց երկաթուղում: Վագոնում, ճիշտ մեր դիմաց նստած էր մի տարեց հնդիկ. համարյա կիսամերկ էր, մի կտորով փաթաթված էր մեջքից ցած. և խորասուզված էր մտքերի մեջ, կարծես մի ինչ-որ բան էր ուզում ասել շրջապատին, բայց չէր համարձակվում. շարունակ նայում էր շորս կողմը, գլուխը շարժում և քթի տակ շշնջում: Մի փոքր ժամանակ անց տոմսաբեմիները ստուգեցին բոլոր ճամփորդներին: Մեր դիմացի հնդիկից էլ պահանջեցին տոմս. նա ցույց տվեց իր տոմսը. ուղեցին նաև նրա բեռները կշռել, բայց նա խուսափում էր իր բեռները ցույց տալ. պաշտոնյան նրա նստատեղից դուրս քաշեց մի պարկ, բաց արեց, և ի՞նչ սեսնենք... մի աղջնակ մեջը, աղջիկը սկսեց բարձրաձայն լաց լինել: Պաշտոնյան պահանջեց նրա համար ևս տոմս. հնդիկը մեղմությամբ պատասխանեց. «Տոմս չկա, փող չունեի, որ առնեի, որոշեցի այս կերպով ճամփորդել»: Պաշտոնյան սաստեց նրան և ասաց. «Պետք է առաջին կայանում ան-

միջապես վայր իջնես, հակառակ զեպեում քեզ կհանձնենք սուտիկանությունը»: Ես հարցրի պաշտոնյային.

«Արդյոք ի՞նչ կարելի աչք փակել, որ այդ խեղճերը մի կերպ անցնեն», նա պատասխանեց. «Ոչ, պարոն, այդ բանը ես չեմ կարող անել, ընտանիքի տեր եմ, կարող եմ մեծերը իմանալ և ինձ գործից հեռացնել»:

Բայց չէ՞ որ պետք է մի կերպ օգնել նրանց:— Պարոնայք,— շարձա ես զեպի ուղևորները, մենք պատրաստ ենք մի բան վճարելու, այս փոքրիկի տոմսակի համար, դուք էլ կուղե՞ք մասնակցիլ: Ոչ ոք ուշադրություն չդարձրեց: Մենք՝ այր և կին միմյանց նայեցինք և վճռեցինք այդ տոմսը գնել:

Այդ զեպից հետո մտեցալ մեզ մի հնդիկ երիտասարդ և փափկանկատորեն ներողություն խնդրեց, հարցնելով. «Դուք ի՞նչ ազգից եք»: Պատասխանեցի, որ հայ ենք: «Թույլ տվեք ձեզ հետ ծանոթանալ: Ես ուսանող եմ իրավաբանական մասնաճյուղի՝ Բոմբեյի համալսարանից, ես ուրախ կլինեմ ծանոթանալու ձեզ հետ: Ասացեք, խնդրեմ, ո՞ւր եք գնում, ես ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել»:

«Մենք գնում ենք Մադրաս և այնտեղից էլ անցնելու ենք Թանգուն»: Մեր բեռները դասավորեցինք մի ավտոյի մեջ և ուղևորվեցինք զեպի Մադրաս հայոց եկեղեցին: Մինչև մեր հասնելը հնդիկ երիտասարդը արդեն տեսնվել էր քահանայի հետ, և մանրամասնորեն պատմել մեր մասին, և երբ մեր ավտոն կանգնեց եկեղեցու դռանը, քահանան սպասողական դրություն մեջ կգտնվեի. նա նայում էր շորս կողմը, մեզ տեսնելուն պես ճանաչեց և զարմացած հարցրեց. «Պարոն Հայկ-Արծիվ, ուրիշ եկողներ էլ կա՞ն»: «Ոչ, տեր հայր»: «Ուրեմն, Հայկո ջան, դո՞ւք եք եղել հնդիկի պատմած մարդիկը»:

Ամբողջ վանքը, իր շրջապատով, ամալի էր: Ինձ հետաքրքրում էր Մադրասի անցյալը: Քահանան մեզ ցույց տվեց այն տպարանը, որտեղ, ըստ պատմաբանների, լույս է տեսել առաջին հայկական թերթը: Տպարանը ներկայացնում էր մի բարաշեն սենյակ, շորս կողմը գերեզմանաբարեր, հայերեն գրվածքներով: Մադրաս քաղաքը անցյալում եղած է հայության ամենանշանավոր վայրը: Այստեղ բեմ է բարձրացել առաջին կատակերգություններից մեկը՝ «Խտրադիմաղժրողություն»: Եկեղեցու մուտքի մոտ տեսանք Շամիլ սուլթանի դիմանկարը՝ անհաճելի գրություն մեջ: Մեզանից ամիսներ առաջ հիշյալ եկեղեցին այցելած էր պարսկահնդկաստանի միացյալ թեմի առաջնորդ Մեսրոպ մաղիստրոսը, որն ուղեցել էր այդ նկարը վերցնել և փոխադրել Հայաստանի թանգարանը, սակայն Շամիլ սուլթանի 80-ամյա թոռը՝ Գրիգոր Սամբ, չի համաձայնել ասելով՝ «բանի ես ողջ եմ, իմ պապիս նկարը այստեղ, եկեղեցում պիտի մնա»: Մենք էլ ծանոթացանք այդ նույն Գրիգոր Սամբի հետ. նա պատմեց մի դրվագ իր պապի կյանքից: Նա ասում էր. «Ժամանակին, երբ Շամիլ սուլթանը իր փառքի գազաթնակետին կգտնվեր, դիմած է ռուսական կայսրության հայազգի մեծ զորավար Լորիս Մեչիքովին, որն այն ժամանակներում Փարիզում կգտնվեր, որպեսզի զորավարը միջնորդե ցարին՝ Ռուսահայաստանի հողերը ծախելու, և ինքը պատրաստ է եղել գնելու հնչուն ոսկիով»:

Լորիս Մեչիքովը զարմացած պատասխանել է. «Գովելի է ձեր հայրենասիրական ընթացքը, բայց ցավում եմ հայտնելու, որ ցարը այդպիսի բաներով չի զբաղվում, որևիցե երկիր

փողով չեն ծախում, այլ արյունով են գրավում» — այդ եղավ մեծ զորավարի խոսքերը:

Մադրասում հայ ընտանիքներ քիչ կային, որոնց հետ ծանոթացանք, և հաջորդ օրը քահանայի ընկերակցությամբ գնացինք նավամատույց՝ մեկնելու Ռանգուն: Նախ քան մեր նանապարհորդությունը, մեկ շաբաթ առաջ ես նամակով տեղեկացրել էի Ռանգունի Երիտասարդաց միությանը մեր ժամանման մասին: Ծովային կարճ ճամփորդությունից հետո հասանք Ռանգուն: Հաղիվ պատրաստվում էինք նավից դուրս գալ, մոտեցավ մի երիտասարդ և ասաց. «Ենդրում եմ ինձ հետևեք, ես եկած եմ Երիտասարդաց միության կողմից ձեզ ընկերանալու»: Ուղղակի մեկնեցինք քաղաքի կենտրոնը՝ «Սիլվերկրիլ» կոչված հյուրանոցը: Մի փոքր հանգստանալուց հետո, պարզվեց, որ այդ հյուրանոցը կպատկանի նահապետյան անունով մի հայի, որն այդ ժամանակ Պարսկաստանումն էր: Երիտասարդի ընկերակցությամբ մեկնեցինք մի այլ տեղ, որտեղ հավաքված էին Երիտասարդաց միության բոլոր անդամները. նրանց հետ ծանոթացանք և մտածեցինք երգահանդեսի մասին:

Վերջապես, Ռանգունի կենտրոնական սրահներից մեկում տեղի ունեցավ մեր համերգ-ներկայացումը. ներկա էր հայ գաղութը: Համերգի բաժնից դուրս ներկայացրինք «Հարսանիքի նվեր» օպերետը:

Ներկայացումից հետո նոր բարեկամների ընկերակցությամբ մեկնեցինք հյուրանոց, որտեղ պատրաստված էր մի փառավոր սեղան:

Ճաշեցինք նահապետյանի ճոխ սեղանից, բարեմաղթություններով: Միայնակ մնալով աչք ու կին, մտածում էինք,

Քն որքան բարի, անձնազոհ ժողովուրդ է մեր ազգը: Օտարության մեջ արտակարգ պատիվ ունի: Հայու խոսքը օտարների մոտ մեծ կշիռ ունի և մենք հպարտանում ենք դրանով և պարծենում, որ հայ ենք:

Հարտարապետ—Կարապետ Մելիք-Ռավիթխանյանը մտնեցավ ինձ և ասաց. «Պարոն Հայկ, ես մտածեցի մի բան և կհուսամ, որ պիտի հաջողիմ,— հայ երգը, ձեր շնորհիվ, մուտք պիտի գործն անգլիական «Ջիմխանա» ակումբը: Թող այդ գոռոզ անգլիացիները լսեն մեր երգը և տեսնեն հայ արվեստագետին, նախ քան այդ, ես պետք է տեսակցիմ նախագահի հետ»: Եվ հաջորդ օրը Կարապետը տեսնված էր նախագահի հետ: Մենք գնացինք ակումբ և երկուստեք եկանք համաձայնություն: Հաջորդ շաբաթ որոշվեց մեր առաջին համերգը, որին պիտի մասնակցեք վիեննական մի լարային օրկեստր, ղեկավարությամբ դիրիժոր Զեկոնտոյի:

«Անջելո» ստորագրությամբ մի թղթակցություն կարդացինք մեր համերգի վասին գրված Պուլսո «Ազդարար» թերթում՝ «Հայ երգիչներու հաջողությունը Հնդկաստանի մեջ». խորագրով, ուր նշված էր.

«Իրենց անվերջանալի թուրնեներից հետո Պ. Հայկ—Արծիվ և տիկինը ժամանեցին Ռանգուն, երգի սիրահարներուն զոհացում տալու համար:

Տեղիս անգլիական ակումբի վարչությունը, իմանալով հայ երգիչներուն համբավը, պաշտոնապես դիմում կատարեց, առաջարկելով արվեստագետ դույզդին ակումբին զեղարվեստական սրահին մեջ մի երգահանդես տալ, մասնավորապես անդամներուն համար: Պ. Հայկ—Արծիվ և տիկինը ընդառաջելով ակումբի դիմումին, վեր-

ջերս տվին իրենց առաջին երգահանդեսը ի՛ ներկայության հոծ բազմության մը: Երգահանդեսը իր ամբողջությամբ անցավ շատ հաջող, տպավորիչ և խանդավառ: Հայ երգիչները եվրոպացի խստապահանջ հասարակության ներկայացուցիչն մի ձոխ և փայլուն հայտագիր, կազմված աշխարհածանոթ երաժիշտների ընտիր գործերից:

Հայտագրի մեջ, եվրոպական երգերու շարքին տեղ տրված էր հայ երգի մեծանուն վարպետներուն՝ հանձարեղ Կոմիտաս վարդապետի և վաղամեո հռչակավոր երաժշտագետ Ռոմանոս Մելիքյանի գործերից:

Տիկին էմմա—Արծիվ, իտալական դպրոցեն՝ իր առաջնակարգ սոփրանո-ի հնչուն և խորաթափանց ձայնով երգեց իրեն բաժին ընկած երգերը մեծ հաջողությամբ, իտալերեն լեզվով, և արժանացավ խլացուցիչ ծափերու: Հարգելի տիկինը, հասարակության բուռն փափաղին տեղի տալով, պարտավորվեցավ կրկնություն փոխարեն երգել մի այլ կտոր:

Պ. Հայկ—Արծիվ, թենոր, ուսական և իտալական դպրոցներից, երազկոտ զգացումով լի, երգեց Բիզելի «Ը Փեշոռ տը փերլ»-ը աննման ումանսը, ինչպես նաև Թօսէլլինեն, Վերդիեն քնքուշ և վառվռուն կտորներ. Պ. Արծիվ ունի թավշային լիրիկ ձայն, որ կխոսի ամենքի սրտին: Շարունակական երգելու դասին փայլ տվին հայկական երգերը, իրենց մեղամաղձոտ և քաղցրանուշ գունավորումներով, Կոմիտասի «Կուծն առան», «Ալազյազը», «Բելե քելեն», Ռ. Մելիքյանի «Վարդը», «Ուտին» Տեր և տիկին Արծիվ երգչի ինքնահատուկ գի-

տակցութեամբ, խոր ըմբռնումով և զգայուն շեշտով երգեցին հայկական գոհարները, եվրոպացի հասարակութունը անակնկալի մը առջև բերելով, որոնք հիացած և միևնույն ժամանակ զարմացած հարց էին տալիս մեկը մյուսին: Այո, պարոնայք, հայկական աչքեր պետք են, որ տեսնեն, ականջ պետք են, որ լսեն, հայ երգը տիկնոջ շրթներին լեզու առած, խոսում էր: Հայ երգի և հայ երաժշտի միացյալ շունչն էր, որ գերիշխում և հուզում էր ամենքին: Կոմիտասի և Ռ. Մելիքյանի երաժշտական ուժն էր կախարդել բոլորին: Այդ օրը կարծես հայ երգի, հայ մշակույթի պանծացման և քարոզութեան օրն էր, շնորհիվ հայ արվեստագետներուն, մեր երգն ու հայ արվեստը իր պատվավոր տեղն էր զրավել: Մեր հոգիները անհուն հրճվանքով լի ուռճացած էին:

Մեր աչքին պատկերանում էր հայ զեղչկուհին, որ կուժն ուսին երգելով գնում էր աղբյուր ջրի, հայ հովիվը իր սիրածը երազելով երգում էր ժպտուն ու խայտոտ... Երկար տարիների ընթացքում, այս օտար ափերում, առաջին անգամն է լսվում հայ երգը այնքան հրատակորեն և հարազատ և մենք բախտ ունեցանք վայելելու զայն, ծարավի, կարոտով: Անմոռանալի պիտի մնան Արծիվ ամուսիններու քաղցր երգերն ու հաճույքը մեր սրտերուն մեջ:

Այս առեղծվածային կյանքում, երգն է միակը, որ մարդուն հափշտակում է: Մի քանի իտալացի երգի մասնագետներ, որոնք ներկա էին երգահանգեսին, իրենց հիացմունքը հայտնեցին հրապարակավ հայ երգիչներուն:

Մասնավորապես հայտնի մանսթրո կաֆրակուլա, որը իր գնահատանքը տալուց հետո, խոսեց տիկնոջ ձայնի մասին. «Այս երիտասարդ երգչուհին մեծ ապագա կ'իստատանա, որովհետև նա ունի այն բոլոր տվյալները, ինչ որ հատուկ է առաջնակարգ երգչուհու մը համար, գնահատելի մի շքեղ ձայն, զգայուն սիրտ, ըմբռնելու և արտահայտելու ամենազովարին նրբութունները երգի արվեստին: Պետք է նրան քաջալերել, օգնել նյութապես և բարոյապես, որպեսզի նա վերջնականորեն կարողանա հասնել արվեստի այն բարձունքները, որին արժանի է»: Միևնույն ատեն խրախուսեց վերստին անցնել Իտալիա, «աշխարհի երգի հայրենիքը, որտեղ գնահատում են ձայներն ու տաղանդները»:

Պրոֆեսորի խոսքերը ինձ հիացմունք պատճառեցին և միևնույն ատեն վիշտ, ես նախանձում էի նրան, իրենց երգերի հանդեպ ունեցած ջերմ սիրուն համար:



Ռանգունի ճարտարապետական մի մեծ հաստատություն ղեկավարն է Առաքել Մարդինը, որի ստեղծագործական տաղանդին կապականին մայրաքաղաքի հսկայական շենքերը: Նա հայ գաղութի ամենաազդեցիկ անձնավորություններից մեկն է: Մի անգամ նա մեզ հրավիրեց իր բնակարանը. հուզմունքով պատմեց իր կատարած գործերի մասին և ասաց. «Միրելիներս, ուր որ գնանք, և ուր որ լինենք, չպիտի մոռանանք մեր ազգն ու հայրենիքը. հայ անունը մեր հպարտու-

թյունն է, մեր ժողովուրդն ունի այնպիսի տաղանդներ, որ մեծ ազգերն անգամ չունեն: Մեր հայրենիքը, որտեղ թաղված են մեր պապերի նշխարները, մեզ համար ամենից թանկարժեքն է: Ծնորհիվ ուս մեծ ազգի օգնության, այսօր մեր ներկա Սովետական Հայաստանը գտել է իր հանգիստը. ախ ու վախը անհայտացած են ընդմիշտ»: Երկար խոսեց, և հանկարծ տեղից վեր կենալով, մի բան հիշեց. «Սպասեցեք, տեսեք, թե ձեզ ի՞նչ եմ ցույց տալու»: Իր գրադարանից դուրս բաշեց հրկու մեծ ծովանկարներ, նավերու պատկերներ. «Տեսե՛ք, այս մեկը կոչվում է «Հայաստան», իսկ մյուս նավը՝ «Արարատ»: Անբուն գիշերներ եմ անցկացրել այս տիտանները մեջտեղ բերելու համար. հազար անգամ այս նավերը կտրել են Հնդկական օվկիանոսը, նրանց կյանքը թեև ապահովագրված էր, բայց դա ինձ համար երկրորդական էր: «Հայաստան» նավը բռնվեց մի սոսկալի փոթորկի և ընկղմվեց, — խոսում էր և հոնքուր-հունքուր լալիս, արցունքները թափվում էին աչքերից: Նա ցասումով ասաց. «Առանց «Հայաստանի» ի՞նչ պետք ունիմ «Արարատին», այն էլ ծախեցի»:

Առաքել Մարգինի խոսքերը մեզ շափազանց հուզեցին, և խրախուսեցինք այդ պատկառելի հայրենակցին, որ շմտածի այլևս. «Հայաստանը կա ու կմնա ընդմիշտ, նրա գլխով շատ փոթորիկներ անցել են ու շրացել, բայց Հայաստանը միշտ կանգուն է, այսօր նա փայլում է արևի պես»: Ծերունու դեմքը իսկույն փոխվեց, ուրախացավ, մանկան պես սկսեց հեկեկալ, նոր կյանք ստանալ: Առաքել Մարգինը ուրախությունից փաթաթվեց մեզ:

Ռանգունից պետք է մեկնեինք Սինգապուր: Հետաձգվեց մեր ճամփորդությունը, որովհետև երկուքս էլ հիվանդացանք

«գեներալի ֆիլը»-ով, և ո՞վ պետք է մեզ խնամեր, տեղի հայրենասեր մարդկանցից մեկը, որին կանչում էինք մեր Ադիգ կարապետ: Իդուր չէ, որ նրան բոլորը սիրում և հարգում էին, նա հարազատի պես կանգնած էր մեր գլխին, իր գործերը թողած, վազում էր բժշկի և ղեղորայքի:

Վերջապես ոտքի կանգնեցինք և պատրաստվեցինք մեկնելու Սինգապուր:

1928 թվականի մայիսի 16-ին հրաժեշտ տվինք Ռանգունի հայ գաղութին, մեր սիրելի Առաքել Մարգինին, հրաժեշտ տրվինք նույնպես մեր շատ սիրելի Ադիգին, Երիտասարդաց միության անդամներին, որոնք ծաղկեփնջերով մեզ ճամփու դրին: Երեկոյան դեմ «Դալանդա» նավը մեզ բաժանեց ասիից:

Վերջապես մի առավոտ հայտնվեց մեր առաջ ընդարձակ մի նավահանգիստ: Դա Սինգապուրն էր, որը առավոտյան լույսով փայլում էր իր բնության շքեղությամբ:

Սինգապուրը մի մեծ թերակղզի է, որտեղ ապրում են բազմացեղ ժողովուրդներ, մասնավորապես չինացի, ճապոնացի, հնդիկ և Մալայան արշիպելագի ժողովուրդներ: Նոր երկիր, նոր բարքեր, նոր միջավայր: Փոքր հանգստանալուց հետո հաշորդ օրը հեռախոսով կապվեցինք Առաքել Մարգինի բրնձ՝ տիկին Մերիի հետ: Նա առաջարկեց, որ անպայման հյուրանոցից փոխադրվենք իրենց բնակարանը, որը գտնվում էր քաղաքից դուրս մի անտառի մեջ:

Տիկին Մերին ծանոթացրեց մեզ իր ծերունազարգ մոր հետ՝ տիկին Շահնազարի: Արժաթազարգ մաղերով այդ պատկառելի կինը Սինգապուրի հայության բարերարուհին էր. նա հիմնած էր եկեղեցի, դպրոց, բնակարան՝ պանդուխտներու համար: Տիկին Մարգինը ապրում էր հին նահապետական

սովորութիւններով. ճաշասեղանի շուրջ հավաքվում էին իր զավակները, ինքը նստում էր սեղանի գլուխ, իսկ երկու կողքերին նստեցնում էր ինձ և տիկնոջս, որպես հյուրերի: Իր բնակարանը շրջապատված էր ծառերով, ծաղիկներով, նըրանք ապրում էին ճոխութեան մեջ: Իր մեծ որդին, որի անունն էր Վոլի, ամուսնացած էր մի անդլիացի հաղթանդամ կնոջ հետ: Տիկին Մարդինը լավ աչքով չէր նայում իր հարսին՝ օտարազգի լինելու պատճառով: Նա ասում էր. «կնախընտրելի հայ լինեք, քան... Բայց Սինգապուրում այդ առիթները չկային, և ես ստիպված համաձայնեցի»:

Մեկ օր ասում եմ. «Տիկին Մարդին, հարսդ հայերեն հասկանո՞ւմ է»: Իսկ նա թե՛ «Ավելի լավ է, որ չհասկանա, կարող է մեր ներքին խնդիրները իմանալ»: Հեռավոր երկրներից եկած անծանոթ հայեր ենք, բայց նրա համար ավելի հարազատ, քան թե իր որդու կինը: Տիկին Մարդինը իր տան գաղտնիքները մեզ պատմում էր համարձակորեն, բայց անպիացի հարսին՝ երբեք... Մի օր ասում է. «Էմմա ջան, դու քույր չունե՞ս, եթե ունես, ես բերել կտամ, և մյուս որդուս հետ ամուսնացնեմ, գոնե խիղճս հանգիստ կլինի: Ես ընկած եմ օտարներու մեջ և հանգիստ չունեմ. իմ աչքին չեն երևում ոչ հարստութիւն, ոչ էլ հրճվանք, քանի որ հոգեկան մխիթարութիւն չկա»:

Սինգապուրի հայ զաղութը շատ փոքրաթիվ էր: Վարձեցիներ մի ներկայանալի սրահ և տվինք մեր համերգը՝ խառն հայտագրով: Բացի հայերից, համերգին ներկա էին նաև օտար ազգի արվեստասերներ:

Միջանկյալ տխուր պատմութիւնն այդ բարի կնոջ՝ տիկին Մարդինի ճակատագրի մասին, որ հետագայում մեզ տե-

ղեկացրել է իր փեսան՝ Մկրտիչ Հակոբյանը, Միզնի քաղաքից (Ավստրալիա):

Նա պատմում է. «Աղետաբեր պատերազմին, երբ ճապոնացի ֆաշիստները գրավեցին Սինգապուրը, բոլոր ճերմակներին ստսկալի տանջանքների ենթարկեցին, կողոպտեցին և բանջ ամբողջ ունեցվածքը. նույն դառն ճակատագրին դո՛հ եղած է տիկին Մարդինը և իր հարազատները: Ծապոնացի զինվորներու հսկողութեան տակ, մյուս զերիների հետ միասին, շարչարվելուց հետո նա մեռնում է և իր հարազատների խնդրանքին համաձայն, նրան թաղում են զգեստներով, մի անհայտ տեղ: Անցնում են այդ դաժան օրերը և վերջապես ճապոնացիները հարկադրված են լինում լքել Սինգապուրը և հեռանալ: Տիկին Մարդինի հարազատներից ոմանք, վերապաշողները, որոնք դիտեին նրա թաղված տեղը, մի քանի սրտացավ հայրենակիցների հետ բաց են անում գերեզմանը, և ի՞նչ տեսնեն... երեք-չորս տարվա թաղված հանգուցյալը բոլորովին չէր փոխված, մնացել էր նույնութեամբ և կարծես քնած լիներ: Այս տեսարանը դարմանք է պատճառում շատերին և նույնիսկ արձազանք դտնում արտասահմանյան հայկական թերթերում: Հանգուցյալի հարազատները հարգանքի շուրջով նրա դիակը փոխադրում են Հայոց եկեղեցու բակը:

Մոռանանք այս դեպքը, թողնենք և շարունակենք մեր շամփան դեպի Բաթավիա, որը առաջին նավահանգիստն է ծավա կղզու, որտեղ կար փոքրաթիվ հայութիւն, ունեք եկեղեցի, իջնանատեղի: Բաթավիայում մի քանի ժամ սպասելուց հետո գնացքով մեկնեցինք դեպի Սուրաբայա՝ ծավա կղզու կենտրոնական քաղաքը, որտեղ որոշած էինք բավականին երկար մնալ:

Սինգապուրից տիկին Մարգինը նամակով հայտնած էր իր աղջկան՝ Հոփսիմեին և փեսա Մկրտիչ Հակոբյանին, որ մեզ դիմավորեն և ցույց տան բարոյական աջակցություն, երբ հասանք Սուրբարայա, կայարանում մեզ դիմավորեցին Գեղարվեստասիրաց միության անդամները, գլխավորությամբ Մկրտիչ Հակոբյանի, և նրանց խորհրդով տեղավորվեցինք մի հյուրանոցում: Կեսօրին Հակոբյանը մեզ հրավիրեց իր բնակարանը, որտեղ հավաքված էին գաղութի ներկայացուցիչները: Ունեցանք մտերմական խոսակցություն: Մ. Հակոբյանը խնդրեց, որ եթե կարելի է, իրենց համար երգենք: Թեև սովորություն չունեինք բնտանեկան հավաքույթներում երգելու, բայց մեզ շրջապատող միջավայրը այնքան անկեղծ և հարազատ գտանք, որ մերժել անկարելի էր: Եվ երգեցինք: Հակոբյանը հայտարարեց. «Ես ուզում եմ, որ հայ երգը լավի հռչանդական «Քունսքրինկի» արվեստի տան մեջ, որ մեր գաղութի համար մեծ պատիվ կլինի: Թուրքը միաբերան տվին իրենց համաձայնությունը և հաջորդ օրն իսկ Հակոբյանը անսովեցավ հիշյալ արվեստի տան գիրեկտորի հետ, որը փափագ հայտնած էր մեզ անձամբ տեսնելու: Հաջորդ օրը Հակոբյանի ընկերակցությամբ այցելեցինք գիրեկտորին, որի առաջարկի վրա երգեցինք մի քանի կտոր, որպես փորձ: Նա գոհ մնաց և զեղարվեստի սրահը տրամադրեց մեր առաջիկա համերգի համար:

«Քունսքրինկհաուզ» հռչանդական մեծ ընկերությունը հիմնված է շատ տարիներ առաջ Ամստերդամում. զեղարվեստասեր մի միություն է, որն ունի իր մասնաճյուղերը բովանդակ հռչանդական հողերի վրա: Այդ միության անդամները իրենց հաճույքին և ճաշակին բավարարություն տալու



Զույգը՝ Կովկասյան օպերանների մեջ



Էմմա Արծիվը սագիտածը երգելիս

համար մասնավոր պայմանագրությամբ հրավիրում են աշխարհի առաջնակարգ արվեստագետներին՝ համերգ տալու համար: Անցյալում նույն հաստատության մեջ երգած են էնրիկո Կարուզոն, Ֆեոդոր Շալչապինը և ուրիշներ, ինչպես նաև աշխարհահռչակ ռուս պարուհի Աննա Պավլովան: «Քունսբրինկհաուզի» պատմության մեջ միակ հայ երգիչներն էինք, որ բախտ ունեցանք ելույթ ունենալու այդ հանրածանոթ արվեստի տան մեջ: Հայ ժողովուրդը ուրախ էր շափազանց, հայ Լրգի պանծացման օրն էր կարծես: Այդ օրը մենք ուրախ էինք: Սակայն անհանգստանում էինք, արդյոք ի՞նչ են գրելու հուլանդական թերթերը մեր մասին, նամանավանդ այդ օրերում նույն գեղարվեստի տան մեջ համերգ ունեցավ աշխարհահռչակ ջութակահարուհի Յիցիլիա Հանսենը, որին խստորեն բնագրատած էին: Մի քանի օր անցնելուց հետո Մ. Հակոբյանը ուրախ գեմքով ներկայացավ մեզ և բացականչեց, «Ես իմ փափագիս հասա, ահա ձեզ հուլանդական թերթը. գովեստով են խոսում հայ երգի և ձեր մասին: Խնդրեցինք, որ պեսդի թարգմանե «Հանդելբրլադ» առաջնակարգ թերթի հոդվածը: Ահա նա. «Գեղարվեստական համերգ»: Տեղի ունեցավ «Քունսբրինկում», դեկտեմբեր 3, 1928 թվին. հայ արտիստներ Հայկ և Էմմա Արծիվ, տենոր և սոպրանո, տվին մի գեղեցիկ համերգ հայ զաղութի և այլ գեղարվեստասեր ժողովրդի համար: Գա մի բացառիկ երեկո էր, ուր կարող արվեստագետները իրենց դաշն ու ախորժալուր երգեցողությամբ հմայեցին բոլոր ներկաները: Բեմը լցված էր ծաղկեփունջերով: Ներկաները ծափողջույններով գնահատեցին երգիչները»:

Նույն երգահանդեսի մասին գրում է հուլանդական մի ուրիշ թերթ: «Մեզ համար խիստ հետաքրքիր էր լսել հայ երգը,

որը մեծ հայտնություն եղավ: «Քունսթրինկի» մեջ հայ երգիչները իրենց հայ գեղջկական դմաչլիի երգերով գրավեցին ներկաների ուշադրությունը, երգեցին գերազանցորեն, տաք շնչով, ինքնահատուկ արվեստով»:

Համերգին ներկա էր բովանդակ հայ գաղութը, իր նախագահը՝ տիար Աուկաս-Սարգիսը՝ «Օրենթ» օթելի սեփականատերը, որը մի մեծ ծաղկեփունջով պատվեց մեզ. ստացանք ծաղկեփունջ «Քունսթրինկի» տնօրենության կողմից և վերջավորությունը նույն Սարգիսը հայտարարեց, որ ի պատիվ հայ երգիչներու, որոշած է մի բանկետ տալ իր հյուրանոցի մեծ դահլիճում և այդ առթիվ հրավիրում է նաև բովանդակ հայ գաղութը:

Այդ հյուրասիրությունը տեղի ունեցավ նոր տարվան. հոծ բազմությունը հավաքված էր Աուկաս-Սարգիսի հյուրանոցում: Նվագախմբի հնչյունների տակ մուտք գործեցինք գահլիճ. մեզ զիմավորեց ինքը Աուկաս-Սարգիսը և տեղավորեց հասկացված տեղը:

Բացումը կատարեց գաղութի սիրված անձնավորություններին Մկրտիչ Հակոբյանը: Նա իր հայրենասիրական խոսքերով վեր հանեց սփյուռքահայության ազգասիրական ոգին և սրվեստագետների արժեքը, գնահատեց մեր գործունեությունը, նշեց, որ նրանք երկար տարիներ անցել են բազմաթիվ երկրներ և հայ երգը ծանոթացրել ոչ միայն հային, այլև օտար եվրոպացիներին:

Քեզիրի քաղաքում հայությունը սակավաթիվ էր. մտերմացանք Արգարյան ընտանիքի հետ: Այնտեղ էլ ունեցանք մի համերգ և մի քանի օր մնալուց հետո, վերադարձանք

Սուրբարայա, որտեղ կազմակերպեցինք մեր թատերախումբը՝ հաջորդաբար ներկայացրինք պիեսներ և օպերետներ:

Այսպես շարունակվեց մի առժամանակ:

Հաջորդաբար ներկայացրինք Ա. Շիրվանզադեի «Չար եղին»: Սուրբարայայի հայ գաղութը ապրում էր նոր կյանքով, ոգևորությունը անսահման էր: Գիժ Գանիելի դերը ինձ էր վիճակված, ինչպես միշտ, շորրորդ արարվածին խելակորույս նետվեցա պատուհանից, խեղդեցի կախարհուհի Միանսագին և ազատեցի խեղճ Սոնային: Վերջինիս դերը կատարում էր տիկին Արծիվ, որը ապրեցավ այդ ցավալուծ աղջրուկ հոգեբանական նուրբ դերը: Ոսկանի դերով Գառնիկ Զորդանը շատ հաջող էր, արդեն կյանքում էլ նա միշտ հարբած էր: Մուրադի դերով գնահատելի էր Մ. Հակոբյանը, Չոփուտ Կարապետի դերով՝ անզուգական էր մեր Գրիգոր Առաքելը, մնացած դերակատարները բոլորն էլ հաջող էին:

Թատերասրահում, բացի հայերից, կային և օտարներ, որոնք նույնպես զոհ սրտով հեռացան:

Երրորդ ներկայացումը եղավ նույն հեղինակի «Պատվո համար»-ը: Վաշխատու էլիզրարովի դերը պիտի ապրեի, հակառակ իմ խառնվածքին: Մարգարիտի դերը ստացած էր տիկին Արծիվ: Երբ նա աղաչում էր իր հորը՝ «Հայր, փրկիր աղջրականդ պատիվը», հանդիսականները հուզմունքից լալիս էին:

Հաջորդաբար ներկայացրինք Ա. Զիոկամետի «Կորրադո» պիեսը և հետո Գեի հուշակավոր «Տրիլին», որը ժողովրդի փափագին վրա կրկնվեցավ: Թատերասեր հասարակության ցանկության համաձայն, ներկայացրինք նաև Գ. Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի», «Հաջող ամուսնություն» օպերետները, մեծ հրճվանք պատճառելով ներկաներին:

Վերջին մեր ձեռնարկը եղավ Հովհ. Թումանյանի «Անուշը», որպես երգախառն դրամա: Անուշի դերով հանդես եկավ տիկին Էմման, իսկ Սարոյի դերով՝ ես:

Սուրբաբայա քաղաքում հրաժեշտ տվինք Գեղարվեստասիրացի անդամներին, մեր Առաքելին, իր ընտանիքին, նաև Սկրտիչ և Հոփփսիմե Հակոբյաններին և մեկնեցինք Բաթավիա, որտեղ պատահականորեն ծանոթացանք մի նշանավոր հայի հետ, որի անունն էր Բուտի (Բաղդասարյան). նա Հոլանդական մարդասիրական ընկերության նախագահն էր, ինքը հարուստ չէր, սակայն հարուստները գալիս էին իր ոտքը և իրենց ավտոներով տանում ժողովի: Նրա խոսքը մեծ կշիռ ուներ այդ շրջանակում: Մեկ օր կեսօրին գտնվում էինք Բուտիի բնակարանում. նրա պնդման վրա որոշեցինք գնալ ռադիոյի ստուդիան՝ երգելու համար: Եվ այդպես էլ արեցինք: Երբ մտանք ռադիոկոմիտե, քարտուղարը մեզ դիմավորեց: Պարզեցինք նրան մեր նպատակը: Նա բացատրեց, որ ծրագիրը կազմված է երկու ամսվա համար, եթե լավ երգիչներ էք, ծրագրից դուրս բացառության կարգով կարող եք էլույթ ունենալ. դրա համար պետք է նախ լսենք ձեզ:

Առանց փորձի հեռացանք: Մի քանի օրից հետո ելույթ ունեցանք տեղական «Սիտի» թատրոնում: Այստեղ ծանոթացանք մի ռուս ջութակահարի հետ, որի անունն էր Անաստասի Յուրիև: Նա մեզ դիմավորեց անկեղծ, ծանոթացավ մեր երգացանկին, օգնեց ճոխացնել այն նաև ռուսերեն երգերով: Երբ թատրոնում երգում էինք հայ-գեղջիկական երգեր, շատերը կարծում էին, որ իտալերեն կամ ֆրանսերեն ենք երգում: Մեր հաջողությունից ոգևորված, այր և կին որոշեցինք գնալ ռադիոկայանը՝ փորձի համար, առանց մեկու մը լուր տալու:

Մ'վ գիտե, գուցե հավանեն և երգենք: Այդպես էլ եղավ: Վերջինք Կոմիտասի գեղջիկական երգերից մի փնջերգ, որը կազմել էի ինքս, նաև Գրիգոր Սյունիի «Ինձ մի՛ խնդրիր», «Սարերի հովին մեռնեմ» և այլ երգեր, նաև իտալական օպերաներից մի քանի գլխավոր ռոմանսներ: Երբ մտանք ստուդիա, քարտուղարը մեզ հանաչեց, մոտեցավ և ասաց. «Երևի եկած եք փորձի համար, այո՞»: Պատասխանեցինք՝ «Ճիշտ այդ նպատակի համար ենք եկած»: Նա ասաց. «Շատ բարի, նստեցեք, ես կտեղեկացնեմ գիրեկտորին»:

«Նիրում» կոչված ռադիոկայանում մշտնջենապես գործում էին վիեննական և հոլանդական առաջնակարգ նվագախմբեր: Մի քանի վայրկյանից հետո հայտնվեց քարտուղարը և մեզ տրամադրեց մի վիեննացի դաշնակահար: Սկսեցինք մեր փորձերը: Քառորդ ժամից հետո երգեցինք միայն նախագահի և քարտուղարի համար, որոնք երկրորդ հարկաբաժնում միկրոֆոնով լսում էին մեզ:

Երգեցողությունը վերջանալուց հետո անմիջապես քարտուղարը վար իջավ ուրախ դեմքով և հայտնեց, որ կարող ենք երգել:

Պատկերացրեք մեր ուրախությունը. առաջին անգամ հայ երգը պիտի լսվեր այդ հեռավոր կղզիներում, և մենք՝ աշխարհաշրջիկ հայ երգիչներս, այդ պատվին պիտի արժանանայինք: Մեր երգացանկը կազմեցինք և հանձնեցինք տրն-ցրինությունը: Միևնույն ժամանակ նամակով տեղեկացրինք Սուրբաբայի հայությունը, Մ. Հակոբյանին, Գրիգոր Առաքելյանին, որ լուր տան մեր բացառիկ ելույթի առթիվ: Մեր նամակը տեղ չհասած, ռադիոյից արգեն ծանուցվել էր հայ

երաժշտութեան մասին: Մեր ուղիոյի համերգի մասին ստաց-
վեցին շնորհավորական նամակներ:

Մի օր տեսնենք Բաթավիա նավահանգստի բանվորները
ուրախ տրամադրութեան մեջ են: Տեղացիներին հարցրինք.
«Այս ի՞նչ ուրախութիւնն է»: Նրանք պատասխանեցին. «Շու-
տով կիմանաք»:

Հեռւից երևում էր զբոսաշրջիկներով լեցուն ամերիկյան
մի նավ: Երբ այն մոտեցավ նավահանգստին, տեղացիները
գույնզգույն աղաւնիներով շրջապատեցին նավը: Զբոսաշրջ-
իկները տեսնելով ճաւաչի գեղեցիկ աղաւնիները, որպես
նորութիւն՝ թանկ վճարելով գնեցին՝ Ամերիկա տանելու հա-
մար: Երբ նավը վերադառնում է Ամերիկա, աղաւնիները սկը-
սում են հետզհետե թափել իրենց փետուրների գույնը, որոնք,
պարզվում է, ներկված են եղել:

Ճավայում և Սինգապուրում մենք բազմիցս տեսանք մար-
դակառբեր: Այն երկու անիվանի է, մեկ նստատեղիով, ունի
երկու թևեր, որոնցից բռնում է մարդը և քաշում ինչպես կեն-
դանի: Պատմում էին, որ այդ մարդկանց կյանքը կարճատև
է լինում: Չին, ճապոնացի, մալայացի կմախացած կիսա-
մերկ մարմինները քրտնաթոր, ոտաբորիկ, կիզիչ արևի տակ
վազում էին անդադար և փոխադրում մարդկանց քաղաքի
մեկ մասից մյուսը: Այդ տեսարանը խորապես ազգում էր
մեզ վրա:

ԿՐԿԻՆ ԴԵՊԻ ՍԻՆԳԱՊՈՒՐ

Այդ ժամանակ Սինգապուրումն էր գտնվում միջազգային
արտիստների մի խումբ: Նրանք որոշել էին անցնել հեռավոր

Ֆիլիպինյան կղզիները՝ գործելու: Մենք էլ միացանք այդ
խմբին և մեկնեցինք Մանիլա կոչված կենտրոնական քաղա-
քը: Նավի մեջ պատահմամբ տեսնվեցինք ուս արտիստների
հետ, որոնց մեջ կգտնվեր հայտնի Վերտինսկիի կինը, որոնք
վերադառնալով Շան-Շայից, գնում էին Մանիլա՝ աշխատե-
լու: Մի քանի օրվա ծովային ճամփորդութիւնից հետո հա-
սանք Մանիլա քաղաքը, որը շրջապատված է հիասքանչ տե-
սարաններով: Մի մեծ կամուրջով քաղաքը բաժանվում է
երկու մասի: Մենք մի քանի ընկերներով իջեանեցինք «Կրեդ
էստեռն» հյուրանոցում և հաջորդ օրն իսկ անցանք գործի՝
ամերիկյան արվեստասերներու ընկերութեան համար երգելու:

Մեր երգացանկը կազմած էինք խառն՝ հայերեն, ռուսե-
լեն, իտալերեն և անգլերեն երգերից: Հայ գեղջկական կոմի-
տասյան երգերը մասնավոր ուշադրութիւնը գրաված էին
ունկնդիր հասարակութեան կողմից, մեր ելույթը ծափահա-
րութիւններով էր գնահատվում, ուրախ էինք, սակայն հոգե-
պես ընկճված: Այդ միջավայրում հայութեան նշույլ չկար:
Շրջապատի փայլն ու զարդարանքը մեզ չէր գրավում: Մեր
նպատակն էր հայ ժողովրդին ծառայել:

Մի երկու ամիս հետո պայմանագրութեան ժամանակը
լրացավ, սակայն աշխատանքի արդունքը շարդարացրեց մեր
ծախսերը, և զրա համար էլ ուզում էինք մի ժամանակ ևս
սպասել, գուցե մի ուրիշ տեղ կարողանայինք համերգներ
տալ: Ես շրջում էի Մանիլայում և ուշի-ուշով հետաքրքրվում
անցուղարձով: Զարմանալի մի քաղաք է. գիշեր-ցերեկ շա-
րունակ բաց են սրճարանները, ակումբները, պարասրահները,
կինո-թատրոնները, — մեկ խոսքով հաճույքի բոլոր վայրերը
լիքն էին բազմութեամբ: Տեղացիները խոսում էին իսպանե-

րեն, քեֆ ու ուրախութիւնն էր տիրում ամեն տեղ: Մենք զարմանում էինք և հարց էինք տալիս.— արդո՞ք այս ժողովուրդը ե՞րբ է աշխատում, ե՞րբ է հանգստանում: Քաղաքում երթնակութեան սպասարկութիւնը հիանալի էր. աչքդ փակ կարող էիր անցնել մի փողոցից մյուսը՝ առանց վտանգի ենթարկվելու, շնայած հազարավոր ավտոմեքենաների անցուդարձին:

Վերադարձա հյուրանոց, տեսա տիկինս տխուր նստած մտածում է: «Պետք չէ մտածել, ասացի նրան, շուտով կվերադառնանք Սուրբայա, որտեղ հայ համայնքը մեզ կդիմավորի»: Բայց ես մտածում եմ, որ լավ կլինի, եթե հյուրանոցի կառավարչի հետ տեսակցենք, քանի որ նա անցյալում առաջարկած էր մեզ երգելու իրենց արվեստի սրահում: Թերևս նա համաձայնի և այդ կերպով պանդոկի հաշիվները կարգադրենք. այդ դեպքում կմնա միայն նավային տոմսերի խընդիրը: Մի կերպ կհասնենք Մակասար (Յելիպես կղզին), որտեղ ունինք նույնպես հայութիւն, մի համերգ էլ այնտեղ կրտանք և կշարունակենք մեր ճամփան դեպի Սուրբայա: Ուրեմն ժամ առաջ պետք է տեսակցել միտոր Ջենսոնի հետ:

Հաջորդ օրն իսկ տեսնվեցանք կառավարչի հետ, նա մեծ ուրախութեամբ ընդունեց մեր առաջարկը. մի քանի երեկոներ երգելով, մաքրեցինք մեր հաշիվները: Պետք է խոստովանել, որ օտարները շատ էին սիրում հայկական երգեր:

Մի օր, մի ամերիկացի երաժշտագետ, որ ներկա էր մեր համերգին, այսպես արտահայտվեց. «Ձեր հայկական երգերն այնքան նուրբ, այնքան քաղցր մելոդիական տվյալներով հարուստ են, որ ազդում են լսողին»: Մի ուրիշ դաշնակահար իր կարծիքը հայտնեց հետևյալ խոսքերով. «Հայ գեղջկական

երգերը ինքնուրույն կլասիկ արժեք ունեն, որ վեր է ամեն գնահատանքից: Նրա քաղցրանուշ մեղեդիները հափշտակում են ենթակային, հուզում և փոխազդում երազային մի այլ աշխարհ, որտեղ լացն ու ուրախութիւնը միանում են միմյանց հետ, կարծես ձեր երաժշտութեան լեզուն մեզ համար հասկանալի է»:

Նավային ընկերութիւնից տեղեկացանք, որ սպիտակ ցեղին երկրորդ կարգի տոմսակ չեն կարող տալ: Իմացրինք որ մենք պարսկա-հայտակներ ենք, համաձայնեցան և խոստացան տոմս տալ, սակայն երբ զնացինք գրասենյակը և ներկայացանք այն անձնավորութեանը, որի հետ հեռախոսով պայմանավորված էինք, նա մեզ տեսնելուն պես գլուխը բացասաբար շարժեց, ասելով. «Դուք պարսկահայտակներ եք»: «Այո,— պատասխանեցինք: Ահավասիկ մեր անցագրերը»: Պաշտոնյան նայեց, գլուխը շարժեց և ավելացրեց. «Ես շատ եմ ցավում և ներողութիւն խնդրում, որ երկրորդ կարգի տոմսակ չեմ կարող տալ, դուք մեզանից էլ ավելի սպիտակամորթ եք»:

Ես հարցրի, «Բայց չէ՞ որ դուք խոստացաք մի բան անել»: Պատասխանեց. «Այո, ես կարծում էի, որ դուք պարսիկներդ սև ցեղին կպատկանիք, բայց սխալված եմ եղել. մենք իրավունք չունինք սպիտակամորթները խառնելու դեղնամորթների հետ»: «Ելավ, եթե մի սպիտակամորթ, որին դուք զերադասում եք սևամորթներից, շունի միջոցներ ճամփորդելու առաջին կարգով, ձեր նավային ընկերութիւնը ի՞նչ կերպ օգնութիւն պիտի ցույց տա նրան»: «Այդպիսի կարգադրութիւններ չրկան»: «Ելավ, ուրեմն, ի՞նչ պիտի անի այդ սպիտակամորթը, դրավակա՞ն պիտի մնա այստեղ»: «Ուր կուզե թող այնտեղ

մնա»: «Պարոն, դարմանում եմ ձեր մտայնութեան վրա, նրկատի ունեցնք, որ մենք արտիստներ ենք և օտարականներ, ուզում ենք վերադառնալ մեր երկիրը: Հետո գիտե՞ք, միջազգային օրենքով արտիստներին մասնավոր զեղչ կա: Խնդրում ենք այդ մասին տեղեկացնեք տնօրինութեանը. գուցե բացառութեամբ անեն մեզ: Մենք սիրով պատրաստ ենք դեղնամորթների հետ ճամփորդելու: Եվ վերջապես ի՞նչ նշանակություն ունի գույնը, նրանք էլ մեզ նման մարդիկ են»:

Բացատրեցինք, շատ խնդրեցինք, բայց անօգուտ: Ուրեմն մեզ մնում էր անպայման առաջին կարգով ճամփորդել և ամեն մեկին համար վճարել 35 անգլիական ստերլինգ մինչև Մակասար, և հետո էլ 100-ական գիլդեր՝ հոլանդական դրամ հանձնել որպես զեպոզիտ: Ճար չկար, ամեն ինչ պետք է ծախեինք և մեկ ժամ առաջ մեկնեինք, հեռանայինք: Այդ երեկո ճաշարանում պատահամբ ծանոթացանք մի սիրիացի արաբի հետ, որի անունն էր Հաշիմ: Նա շատ ուրախացավ, երբ խմացավ, որ հայ ենք: Մենք էլ հարցրինք նրան. «Արդյոք Մանիլայում հայեր կա՞ն»: Նա ժպտադեմ պատասխանեց. «Այո, մեկ հատ միայն, այն էլ աղամանդի գործարանատեր, որի ազգանունն է Իբրեկյան»: Հարցրինք. «Կարո՞ղ ենք արդյոք տեսնել այդ Իբրեկյանին»: Հաշիմը պատասխանեց. «Ինչո՞ւ է, երբ փափագիք, ես կտանեմ ձեզ նրա մոտ: Նա իմ ամենալավ բարեկամն է»:

Հաջորդ օրը Հաշիմի ընկերակցութեամբ մեկնեցանք Իբրեկյանի գրասենյակը: Երբ դռանը մոտեցանք, պատի վրա տեսանք գրված խոշոր գրերով. «Իտալական ղեսպանատուն»: Հարցրինք Հաշիմին. «Մեզ ո՞ւր ես տանում»: «Հիմա եկեք, հետո կպատմեմ, — ասաց Հաշիմը: Ներս մտանք: Հաշիմը մեզ

ծանոթացրեց մի բարձրահասակ, նուրբ դիմագծերով անձնավորութեան հետ: Նա ինքը Իբրեկյանն էր: Գլխավոր գրասենյանի մոտ նստած, մատներին փայլում էին աղամանդաքարերը, հետաքրքրութեամբ նայում էր իր շորս կողմը և հրամաններ արձակում: Մեզ տեսնելուն պես մեզմ ձայնով բարեվեց և առաջարկեց նստել իր մոտ: Հաշիմը շարունակեց. «Պարոն Իբրեկյան, այս պատվական հայ մարդիկ երգիչներ են, և ամերիկյան կենտրոնական ակումբում մոտ երկու ամիս է երգում էին և տեղական թերթերը գովեստով խոսած են նրանց մասին»: Իբրեկյանը գլխով գոհունակութեան նշան արեց և ասաց «Շատ ուրախ եմ, բարի եկաք»: Եվ թթի տակին սկսեց «Բամ բորոտան» երգել: Պատմեցեք տեսնեմ, ինչպե՞ս նղավ, որ այս հեռուները եկաք, չէ՞ որ այստեղ հայ գաղութ գոյություն չունի»: Ես պատմեցի նրան մեր գալու նպատակն ու վիճակը:

Իբրեկյանը, գլուխը շարժելով ասում է. «Ահա քեզ գլխացավութեան: Երևակայեցեք, որ ես այստեղ չլինեի, ի՞նչ պիտի անեիք. դարձյալ նույնն արեք»: Հաշիմը միջամտում է. «Պարոն Իբրեկյան, շատ երկար եղավ, կարգադրեցեք այս խնդիրը, որ նրանք շուտ մեկնին, այստեղ մնալով ավելի դժվարությունների մեջ պիտի ընկնեն և քո սիրտը պիտի ցավի: — Դառնալով մեզ՝ ասաց: — Պարոն Իբրեկյանը չի թողնի իր հայրենակիցներին անորոշության մեջ»:

Իբրեկյանը երկար լռութունից հետո ասաց. «Ազատում չկա այս մարդկանցից, լավ է վճարեմ և ազատվեմ»: — Դառնալով ինձ, «Այն պայմանով կուտամ, որ ղեպոզիտի թուղթը ճավայում հանձնեք իմ որոշած մարդուն»: Շնորհակալու-

թյուններ հայտնեցինք, ասելով. «Պարոն Իրշեկյան, այդպես էլ կանենք»:

Ես և տիկինս Իրշեկյանին նվիրեցինք մի արծաթյա ծխատուփ, որը պարսկական հին ձևով էր: Նա վերցրեց տուփը և հետաքրքրությամբ նայեց, զննեց, ժպտադեմ ասաց. «Այո, գեղեցիկ և արժեքավոր գործ է, շնորհակալ եմ» և դրեց գրպանը:

Ինքներդ դատեցեք, թե ո՞վ ում պարտք մնաց:

Արար Հաշիմը և մենք հրաժեշտ ասվինք պարոն Իրշեկյանին և մեկնեցինք հյուրանոց: Բոլոր հաշիմները մաքրելուց հետո, «Զինագարա» հոլանդական նավով շարունակեցինք մեր ճամփան դեպի Մադասար (Յելեբես): Նույն նավով կրճամփորդեին մեծահարուստներ, ղրոսաշրջիկներ, գիտնականներ, որոնք գնում էին Բալի կոչված պատմական վայրը՝ ուսումնասիրության: Նավում զիշեր-ցերեկ բեֆ և ուրախություն էր: Երեկոյան ճաշից հետո դուրս եկանք բացօթյա նավառաք՝ համալվելու բնության գեղեցկություններ: Նավային շրկեստրի շոպենյան տխուր մեղեդիները մեզ փոխադրում էին մի այլ աշխարհ: Օդը խաղաղ էր, ծովը հանգիստ, լուսինն իր արծաթյա փայլը սփռել էր շորս զին, բնությունը իր պեսպիսուն ու ցայտուն տեսարաններով գրավել էր մեր ուշադրությունը: Առանձնացած մի անկյունում նայում էինք կախարհիչ լուսնին, որը կարծես մեզ ժպտում էր և մեծ հույսեր ներշնչում գալիքի համար:

Բնության կախարհիչ տեսարանը երգելու տրամադրություն էր առաջացրել մեր մեջ: Էմման ցածր ձայնով երգում էր և ես զգացի որ ինքնաբերաբար նվագակցում եմ նրան:

Ճաշասեղանից մարդիկ գալիս էին դեպի մեզ, նրանց կանչել էր մեր հրգը: Մենք դադարեցինք երգել: Մեզ մոտեցավ մի բարձրահասակ շիկադեմ պարոն իր տիկնոջ հետ:

Տիկինը գիմեց անզվերեն լեզվով.

— Ինչքան մենք կարողացանք հասկանալ, դուք պետք է որ արտիստներ լինեք:

— Արդյո՞ք չէիք ցանկանա մի համերգ տալ ճանապարհորդներին համար, — իսկույն վրա բերեց ամուսինը:

Այր ու կին մի պահ տատանման մեջ էինք:

— Իհարկե կարելի է, ինչո՞ւ չէ, — համաձայնեցինք մենք, — միայն թե նավի կապիտանը արտոնե:

Մի բանի բուպից շիկադեմ պարոնը վերադարձավ իր կնոջ հետ՝ բերելով կապիտանի արտոնության հրամանը:

Համերգին պիտի մասնակցեք նավի նավախումբը: Հայտագիրը կազմած էինք հայկական, իտալական, անգլիական հայտնի ու մանսներից:

Շաբաթ երեկոյան տեղի ունեցավ մեր համերգը, որը տեղեց մեկ ու կես ժամ: Կնոջներին և ժափահարությունների միջից լավում էին բացականչություններ «Վիվա Արմենիա»: Երեկոն մի պատվոց ցույց դարձավ հայ արվեստի հանդես: Վերջում նավի կապիտանը շնորհակալություն հայտնեց ելույթի համար և տվեց մի գնահատական վկայագիր:

Մեր նավը հասավ Մադասար, Յելեբես կղզու մայրաքաղաքը: Անձանոթ միջավայր, նոր դեմքեր, նոր տեսարաններ: Տեղավորվեցինք մի պանդոկում. մի փոքր հանգստանալուց հետո հեռախոսի զրբույկից փնտրեցինք հայկական անուններ, և այդպիսով, ծանոթացանք հայ գաղութի հետ: Մադասարում կային հայկական առևտրական հաստատություններ, արհես-

աավորներ, փոքրաթիվ հայ գաղութն ունի իր մատուռը և դպրոցը:

Քաղաքում ծանոթացանք շնորհալի մի հայ երիտասարդի հետ, որը Անգլիո վիցե-կոնսուլի պաշտոնն ուներ և հայերուն մեծ օգնություն էր ցույց տված: Ուրախ էինք, որ նորից գտնվում ենք հայության մեջ:

Մի քանի ամիս էլ Սուրբարայում, Բաթավիայում, Մինգապուրում, Ռանգունում, Կալկաթայում, Բոմբեյում մնալուց և ներկայացումներ տալուց հետո մեկնեցինք ուղղակի Իտալիա:

Երկրորդ անգամն է, որ դնում էինք Իտալիա, դա 1936 թ. վերջերին էր: Առաջին անգամ գտնված ենք 1929 թվականին: Հնդկաստանից նոր եկած էինք Միլան և իջեանած մի պանսիոն: Առավոտյան դեմ տիկինս ձայնի մարզանք էր անում և միևնույն ժամանակ երգում Ռ. Մելիքյանի «Վարդը», ես էլ գործիքով մեղմորեն ընկերակցում էի: Մեկ էլ հանկարծ լսեցինք որոտընդոտ ծափահարություններ, «բի՛ս, բի՛ս», — բացականչություններ: Պատուհանը բաց արինք, և ի՞նչ տեսնենք, — պանսիոնի բնակիչները դուրս էին եկել իրենց պատուհանները և լսում էին մեր երգը: Անուրանալի էր, որ էրգի և երաժշտության սիրահար ժողովուրդ է իտալացին, փուլթ չէ, թե ինչ լեզվով կերգվի կամ ինչ ազգի կպատկանի էրաժշտությունը:

Միլանում պատահամբ տեսնվեցինք նշանավոր ուսուցչուհի-դերասանուհի Օվի Սևումյանի կնոջ՝ տիկին Լյուսիի հետ: Ծանոթացանք նույնպես դարսեցի երիտասարդ բժիշկ Բագրատ Եղիազարյանի հետ և՛ նրա ընկերակցությամբ տեսնվեցինք մի քանի ձայնի մարդիչ երաժիշտների հետ:

որոնցից նախընտրեցինք Սկալայի նախկին երգչուհիներից սինյորա Ալբերտինա Բալդի-Վելֆային:

Կարճ ժամանակում տիկինս այնքան առաջադիմեց, որ իր ուսուցչուհին հիացած էր նրա ձայնի և երաժշտական ընդունակությունների վրա:

Մի երեկո Ալբերտինան իր բնակարանը հրավիրեց օպերաներից՝ թատրոնի տասնյակ գործիչների և նրանց ներկայացրեց իր աշակերտուհուն: Տիկինս բոլորի ներկայությամբ երգեց Զ. Պուչչինիի «Մադամ Բատերֆլայի» գլխավոր արիան, որը հիացում պատճառեց ներկաներին: Վարպետները միաբերան առաջարկեցին, որ տիկինս երկու տարի ևս մնա Միլանում և շարունակե իր դասերը: Սակայն անկարելի էր մեզ համար երկար մնալ, որովհետև մեր նյութական միջոցները չէին արտոնի, նամանավանդ Միլանի հայ գաղութը փոքր էր և մենք չէինք կարող հույս դնել նրա վրա, այդ իսկ պատճառով կարճ ժամանակվա մեջ պատրաստեցինք մեզ համար մի ճոխ սեպերտուար, երբ պատրաստվեցինք մեկնել Փարիզ:

Հրաժեշտ տվինք Ալբերտինա Բալդի Վելֆային, ուսուցչուհին իր գրություններ հայտնեց իր հիացմունքը տիկնոջս, հետևյալ խոսքերով.

«Միլան, 5 հուլիս, 1929 թ.

Համակրելի սինյորա էմմա-Արծիվ!

Նախ քան ձեր մեկնումը Փարիզ, մեծ հաճույքով կուզամ հայտնելու իմ հիացմունքը ձեր հրաշալի ձայնի և երաժշտական բացառիկ ընդունակությունների համար: Օպերային այն դժվարին կտորները, որ դուք կարճ ժամանակվա մեջ յուրացրիք, դա ցույց կտա, որ դուք ձեր առաջ ունեք մեծ ապագա»:

Միլանում գտնված ժամանակ կա Սկալա թատրոնում հա-
ճախեցինք շատ ներկայացումներ՝ Զ. Վերդիի «Աիդա»-ն,
«Ռիգոլետտոն», Զ. Պուչչինիի «Բոհեման», «Տոսկան»: Ծատ
հետաքրքիր էին մանավանդ Տոսկայի և Կավառադոսի դերերը
կատարող արտիստները. տենորը փոքրիկ մարմնով գեղեց-
կազեմ մի երիտասարդ էր, ձայնը հիանալի բարձունքներ
ունեի, իսկ Տոսկայի դերով, բարձրահասակ, փարթամ մարմ-
նով, հսկայական ձայնով մի երգչուհի էր: Երբ զույգ արվես-
տագետները սիրային տեսարանում մոտենում էին և միմյանց
փառաբղում, հանդիսատեսի վրա այնպիսի տպավորություն
էր թողնում, որ կարծես մայրը փաթաթվում է իր որդուն:
Մենք նկատեցինք, որ նման տեսարաններում, հանդիսական-
ներին մեծ մասը աչքերը փակած, լսում էին միայն երգն ու
երաժշտությունը: Այդ մի քանի օպերաները, որ մենք տե-
սանք, զարմացած միմյանց հարց էինք տալիս, ինչո՞ւ արդյոք
Էլզբի հայրենիքում այդպիսի անսպառնալիք զույգերով են ներ-
կայացնում օպերաները: Եկանք այն եզրակացություն, որ
Իտալիայում օպերային ներկայացումներում ավելի ձայնին
են ուշադրություն դարձնում, քան մի այլ բանի: Իտալացի
ժողովուրդը երաժշտականորեն այնքան պատրաստված է, որ
ամենափոքրիկ վրիպումն անգամ ուշադրության է առնում և
բենադատում:

Անցնում ես քաղաքի փողոցներով. համարյա ամեն տեղ,
ամեն անկյուն լսվում է երգ ու երաժշտություն, նույնիսկ փո-
ղոց մաքրողը, ավելը ձեռքին, մի բոպե մոռանալով իր պար-
տականությունը, արտիստի ձևերով երգում է և անցորդների
ուշադրությունը գրավում, մանավանդ մեզ նման նորեկ այ-
ցեւորներին:

Մենք հիանում էինք իտալացի ժողովրդի վրա, որ այդ
բան սեր ունի երգի և երաժշտության հանդեպ: Նա առանց
անունդի կարող է ասել, բայց առանց երգի՝ երբեք:

1935 թվականին Ռանգոն քաղաքում (Բիրմա) ներկա
եղանք իտալացի մեծանուն երգչուհի Գալլի-Կուրչիի համեր-
պին: Խուռներամ բազմությունը գրավել էր աթոռները, կա-
յին իտալացիներ, որոնք կեցցեներով զիմավորեցին մեծ
երգչուհուն: Վարագույրը բացվեց, երգչուհին ներկայացավ
իր բարձրահասակ, փարթամ մարմնով, ժպտաց հանդիսա-
կաններին, որոնք բուն ծափոջույններով զիմավորեցին նը-
րան: Գալլի-Կուրչին արդեն 50-ն անց կին էր, բայց արտաբ-
նապես մնացել էր թարմ ու փայլուն. հագնված էր սևագույն
զգեստ, շատ ճաշակավոր և պարզ, վզին կախած ունեի եր-
կարաշարք մարգարիտներ: Երգելու ժամանակ մեկ ձեռքով
կարաշարք մարգարիտները. գեղգեղուն ձայնով հիպնոզաց-
րոնում էր մարգարիտները. գեղգեղուն ձայնով հիպնոզաց-
րոնում էր ներկաներին, երգում էր առանց դեմքի ծամածռու-
թյունների և առանց դժվարության, ամենաբարձր նոտաները
վերցնում էր շատ հանգիստ: Համերգի վերջում նա ստացավ
մեծ ծաղկեփունջեր և իր նկարները ստորագրելով նվիրեց
հանդիսականներին: Ես և տիկինս ներկայացանք մեծ երգ-
չուհուն և անձամբ շնորհավորեցինք. երբ իմացավ, որ հայ
գեղարվեստին ծառայողներ ենք, ասաց, որ ինքը հայ բարե-
կամներ շատ ունի Միլանում և Հյուսիսային Ամերիկայում:

Միլանից մեկնեցինք Փարիզ, այն հուլիսով, որ հայոց բու-
րեգործական Միության գեղարվեստի ֆոնդից պիտի կարո-
ղանանք օգտվել և կրկին վերադառնալ Միլան: Հետաքրքր-
վեցինք թե ո՞ւմ հրամանին է ենթակա այդ ֆոնդը: Մեծա-
նուն գրող Արշակ Զուպանյանին հայտնեցինք մեր նպատակը

և նրա ընկերակցությունը գնացինք Բարեգործական միության գրասենյակը: Պարզվեց, որ ումն Պողոս էսմերյանին է հանձնելված գեղարվեստի ֆոնդի կառավարչի պաշտոնը: Էսմերյանին շատ խնդրեցինք, բացատրեցինք, բայց ապարդյուն:

Կան մարդիկ, որ պատասխանատու պաշտոն ստանձնելով իրենք իրենց կարծում են այդ հաստատության տերն ու տընօրենը, իրենց ուզած ձևով են խնդիրները կարգադրում. վա՛յ նրան, ով այդ աղաչի բմահաճույքներին չի ենթարկվի:

Նույնը պատահեց նաև մեզ հետ: Արշակ Չոպանյանի բարեխոսությունը շնորհգործեց այդ բթամիտ անձնավորության վրա: Նա մերժեց ցույց տալ մեզ այդ օգնությունը. սակայն մենք շնուսահատվեցինք: Փարիզում, առաջնակարգ սրահներին մեկում մի համերգ կազմակերպեցինք, ընկերակցությունը կովկասահայ հայտնի դաշնակահարուհի Տիրուհի Զարաբյանի, որը շատ անգամներ համերգներ տված է էյֆելյան աշտարակից և գնահատված ֆրանսիական մամուլի կողմից:

Մեր համերգը անցավ մեծ հաջողությամբ. այդ մասին գրեցին նաև թերթերը: Այս անգամ մեր հայտագիրը ավելի ճոխ էր, հայկական երգերից բացի կային նաև իտալական օպերաներ: Փարիզահայության երգասեր հասարակությունը ջերմորեն գնահատեց մեր ձեռնարկը: Հանդիսականների մեջ կգտնվեին Ա. Չոպանյանը, որին մասնավոր հրավիրած էինք, ինչպես և «Շամախի պարուհին»՝ Արմեն Օհանյանը և ուրիշ աչքառու մտավորականներ:

Փարիզում մեր գտնված ժամանակ այցելեցինք «Փաթեֆիլմի» ընկերության ստուդիան, ծանոթացանք Արտավազդ Խանջյանի հետ, որ այդ ժամանակներում տնօրենն էր ընկերության, ծանոթացանք ֆրանսիական կինոյի հռչակավոր

պերասան Մ. Մագսուդյանի հետ, որը գործում էր «Փաթե» ստուդիայում: Նա առաջին և ամենահաջող դերակատարն է հանդիսացած, պատկերացնելով Քրիստոսի կյանքը: Երբ Մ. Մագսուդյանը կանցնի Ամերիկա, քրիստոնեական միության դրդումով նրան կձերբակալեն, դատապարտելով, որ նա իրավունք չունի Քրիստոսի դերը կատարելու: Ֆրանսիական ֆիլմերի ընկերությունները բողոքելով ազատում են Մագսուդյանին:

Շուտով մեկնեցինք Բելգիա: Այստեղ, Բրյուսելի Հայ երիտասարդաց միության նախաձեռնությամբ տվեցինք մի համերգ: Հանդիսականների մեջ էր նաև հայտնի լուսանկարիչ Վահրամը: Ծանոթացանք և այցելեցինք նրա ստուդիան, որը կկոչվի «Ստուդիո Վահրամ»: Ամբողջ եվրոպայում իբրև արտիստիկ նկարիչ նա գրավում է առաջին տեղը և Եվրոպայի ամեն կողմերից արվեստագետները թափվում են նրա մոտ լուսանկարվելու: Մենք ևս բախտ ունեցանք լուսանկարվելու այդ վարպետի մոտ: Մեր նկարները նա զետեղեց իր ցուցափեղկում: Հետաքրքրվեցինք այդ տաղանդավոր տղայի կյանքով, անցյալով. պարզվեց, որ նա 1915 թվականի եղեռնի որրերից է և աշխարհում ոչ մի հարազատ չունի: Եթե դուք նայեք Վահրամի դիմագծերին, առաջին առթիվ ձեր առջև կպատկերանա մի մեծ արտիստ—նուրբ, խորազգաց դիմագծերով:

Մեր երկրորդ այցը Գերմանիա. 1939 թ-ին Բեռլինում հանդիպեցինք պատանի տաղանդավոր դաշնակահար Զավեն Եաչատուրյանին: Փոքրիկ Զավենը ի ծնե մեծ արտիստ էր, մենք ծանոթացել էինք նրա հետ 1931 թ-ին Ալեքսանդրիայում, երբ 9 տարեկան հաղիվ կար: Նրա երաժշտադեստ հայրը ուներ կոնսերվատորիա, որտեղ կհաճախեին բազմաթիվ

ուսանողներ, և տարին մեկ անգամ կուեննար համերգ: Համերգի զարդը, փալլուն աստղը Զավենն ինքն էր, նվագում էր Շոպենից, Բեթհովենից, Բախից, Լիստից և նման մեծ երաժրշտագետների գործերից անգիր, և հիացում պատճառում ներկաներին:

Զավենը եկած էր Բեռլին կարճ ժամանակվա համար՝ վկայական ստանալու Բեռլինի երաժշտանոցից:

Մենք որոշած էինք Բեռլինում համերգ տալ և այդ կապակցութեամբ դիմեցինք Զավենին, որ մեզ հետ ելույթ ունենա: Համերգին ներկա էին նաև գերմանական օպերայի երգչուհիներից՝ Աննա Զուդերմանը իր պարսկահայ ամուսնու հետ: Երգչուհին շատ սիրած էր տիկնոջս երգած «Լա Տոսկան» և «Մազամ Բատերֆլայ»-ը: Այր և կին մեզ խրախուսեցին անպայման անցնել Համբուրգ: Մենք դժվարանում էինք համաձայնել, որովհետև հայ գաղութը շատ փոքր էր: Սակայն պարսկահայ մեր հայրենակիցները խոստացան բարոյապես օգնել, և հաջորդ օրը մեկնեցինք Համբուրգ:

Կայարանում կանգնած նայում էինք անցնողներին: Կապուտաչվի գերմաններն առանց բեղի, շեկ մազերով, լրջախոհ, խոժոռ դեմքով անցնում էին այս ու այն կողմ: Շքեղ մի ավտոմեքենա կանգնեց կայարանի ճիշտ դիմացը: Միջից դուրս եկավ առնական մարմնով, վայելուչ դեմքով, փոքրիկ բեղերով մի մարդ: Նա շատ կոկիկ հագնված էր, և սկսեց իր շորս կողմը նայել. հայտնի էր, որ մեկին էր փնտրում: Մենք զգացինք, որ այդ պարոնը անպայման Արտաշես Հարությունյանը կլինի, մեր հայրենակից բարեկամը: Մտեցանք, ձայն տվինք. «Պարոն Հարությունյան, այդ դո՞ւք եք»: «Այո» պատասխանեց և հարագատի պես ողջագուրվեցինք:

Համբուրգի մեր համերգին ներկա էր հայ գաղութը և օտարներ, որոնց մեջ գտնվում էր թերթի խմբագիրը իր տիկնոջ հետ:

«Համբուրգե Ֆոնդները ար Դիենսրագ» քերքը գրում է մեր համերգի մասին հետևյալը.

«Համբուրգի հայկական գաղութը կիրակի օրը հավաքված էր «Իոսու-հաուզ»-ի մեջ, որպեսզի լսեն իրենց հայրենիքի երաժշտությունը: Նախ դոկտոր Քուրբյանը իր ողջունի խոսքերի մեջ ցույց տվեց գնահատելի մի ժողովուրդ և նրա արժանի զավակներ պրն. և տիկին Հայկ-Արծիվ: Հասունացած գեղարվեստական ձևով նրանք վերակենդանացրին հայկական ժողովրդական երգեր և գտան հաջողություն՝ հինավուրց այդ գեղեցիկ երգերի կերպարները վեր հանելով: Մեղեդիների նկարագրական, հոգեբուխ բնույթը, որոնց մեծ մասը գեղջկական հայ երգեր էին, բանաստեղծական պատկերով զրսևորում էին լեռնային ժողովրդի հոգսերը և ուրախությունները: Հաջորդաբար մենք ունկնդրեցինք նաև հայ նոր կոմպոզիտորների ստեղծագործություններին: Պրն. Հայկ-Արծիվ, ազգային հարուստ ստեղծագործություններից վեր հանեց հայ երգի հմայքն ու խանդը»:

Համբուրգում մնացինք մի քանի օր: Այստեղ ծանոթացանք հայ անվանի ջութակահար Դավիթ Դավթյանի քրոջ՝ տիկին Գալիկյանի հետ, հյուր եղանք նրանց բնակարանում: Նա պատմեց իր եղբոր անցյալի մասին, արտասովեց և հուզեց մեզ: Դավիթ Դավթյանը, որպես առաջնակարգ ջութակահար եվրոպական իմաստով, անվանի էր. նա հայոց Պագանինին

էր, ունէր իր ձեռքին Ստրադիվարիուս ջութակ, որ նրա մահ-վանից հետո անհետացել էր:

Համբուրգի հայ գաղութը միմյանց հետ այնքան սիրով և այնքան համերաշխ էին, որ մարդ հիանում էր: Մենք ցանկացանք, որ մյուս հայ գաղութներն էլ հետևեին նրանց օրինակին:

Մի երեկո գտնվում էինք մի ընտանիքում: Հավաքված էին բոլոր հայերը, որոնք ուզում էին լսել իմ մի քանի հեղինակած երգերը: Գաշնամուրի նվագակցութեամբ ես և տիկինս երգեցինք Վ. Տերյանի բանաստեղծությունների հիման վրա հյուսած «Մոռանալ»-ը, «Գիշեր-ցերեկ» և «Երազ աշխարհում»: Նրանք առաջարկեցին այդ երգերը հանձնել տպագրության: Սակայն ժամանակը կարճ լինելու պատճառով հետաձգվեց:

Նույն երեկոյին ջերմ մթնոլորտի մեջ ձայնապնակի միջոցով լսեցինք Շահ-Մուրադյանի «Անմահ Հայաստանը», «Մայր Արաքսի ասփերով», «Քելե-քելե», «Վիրավոր լորիկ»-ը: Նույն ինքն Տարոնի սոխակը՝ վիրավոր և դառն ճակատագրի զոհ: Զկարողանալով զսպել հուզումս, իմ շրջապատին երկու խոսքով պարզեցի տառապող հայ մեծ երգչի կյանքն ու գործը, նրա տարած փառավոր հաղթանակը հայ դասական և գեղջկական երգերի տարածման մեջ: Տարոնի սոխակը միակըն էր, որ ընկերակցութեամբ հանճարեղ Կոմիտասի, կարողացավ մայրենի ղողանջն ու քաղցրանուշ մեղեդիները հնչեցնել աշխարհ-աշխարհ...

Վերհիշումներիս սարսուռի տակ մտքով անցա Հնդկաստան և հիշեցի մեր վերջին տեսակցությունը հայ մեծ երգչի հետ: 1929-ի սկիզբները ամառային սաստիկ տաք եղանակին, երբ Ա. Շահ-Մուրադյանը ժամանեց Կալկաթա, ճիշտ այդ

օրերը մենք կպատրաստվեինք մի երգահանդեսի, սակայն, երբ լսեցի մեծ վարպետի այցը, անմիջապես գնացինք այցելութեան: Նա իջեանած էր «Կոնտինենտալ» հյուրանոցում: Հետաձգեցինք մեր երգահանդեսը և օգտակար հանդիսացանք մեծ երգչին, որը առաջին անգամն էր գտնվում Կալկաթայում: Նախ ծանոթացրինք հայտնի ընտանիքների հետ և ապա՝ կազմակերպեցինք իր երգահանդեսը, որ տեղի ունեցավ ամենավավագույն սրահներից մեկում:

Ա. Շահ-Մուրադյանի երգահանդեսը իր պեսպիսուն, ընտրելով հայտագրով անցավ արտակարգ հաջողութեամբ: Հնդկահայությունը բախտ ունեցավ վայելելու «Տարոնի սոխակը»: Անդիական մամուլի ջերմ գնահատանքը պատիվ էր հայ ցեղին: Բայց ավաղ... Երեկ էր այդ, երբ Շահ-Մուրադյանը կղայլայլեր ամեն տեղ, ուր լսվում էր հայ անունը: Բայց ճակատագրական դառն հարվածով նա ընդմիշտ լռեց մեծ երգիչը հոգեկան խանգարում ստացավ:

Տխուր է մեր սիրտը: Անցան օրեր, տարիներ, հայ երգչի հրապույրն ու քաղցրությունը պիտի վերապրինք հայ ցեղին փառքը հիշելով: Մտքովս անցավ համախմբել Համբուրգի հայ գաղութը, որ շատ անգամներ օգտակար հանդիսացած է ազգային ձեռնարկներին, և նրանց միջոցով օգնել տառապող հայ երգչին: Առաջին հանդիպած հայրենակիցս՝ Վարդան Մելիք-Ասլանյանը և իր ընկերը խոստացան իրենց նյութական օգնութեամբ փրկել հայ մեծ երգչի կյանքը, եթե կարելի է, դիտականորեն: Այս ուղղութեամբ ես դիմեցի Փարիզ այն հանձնախումբին, որը զբաղվում էր Շահ Մուրադյանի առողջութեան խնդրով: Նրանք ինձ հայտնեցին խնամող բժշկապետ պրոֆեսոր Աղաջանյանի տեսակետը, Շահ-Մուրադյանի հի-

վանդությունը անբուժելի էր: Եվ այդպես, իմ ջանքերս ապար-
դյուն անցան:

Պատերազմը սկսված էր. գերմանացիները խուժեցին
Փարիզ: 1940-ին ճիշտ այդ ժամանակներում վախճանվեց հայ
ազգի անդուգական երգիչ Ա. Շահ-Մուրադյանը, թողնելով
շատերին տխրության մեջ, և մեր սրտերում՝ վիշտ ու ցավ:

Համրուրդից հետո եղանք խնդրում, ապա անցանք Եվե-
ցարիա, որտեղ կար փոքրաթիվ հայ դադուք: Ծանոթացանք
հայտնի բժշկապետ Շերեջյանի հետ: Նա մեծ հուշակ ուներ
Եվեցարիայում, որպես գիտնական և բարի անձնավորություն:
Նրա շնորհիվ հայ անունը մեծ հարգանք էր վայելում Եվե-
ցարիայում: Իր տիկինը դասատու էր պետական կոնսերվա-
տորիայում: Պրոֆեսոր Շերեջյանը մեծ սիրահար էր երգի
և երաժշտության, ուներ սքանչելի բարիտոն ձայն. նա երգում
էր եվրոպական օպերաներից և նույնպես հայկական երգեր:
Տարին մեկ անգամ հայ կարոտյալների համար պրոֆեսոր
Շերեջյանը կազմակերպում էր մի համերգ՝ իր կնոջ մաս-
նակցությամբ և օժանդակում տարագիրներին:

Մի քանի ամիս էլ մնացինք Հարավսլավիայում: Հիշում
եմ. Բելգրադի ռադիոհամերգից էինք դուրս գալիս, երբ փո-
ղոցում մեզ դիմավորեցին մի քանի հայ երիտասարդներ և
ուրախ ժպտով հարցրին. «Դո՞ւք էիք երգողները»: «Այո», —
պատասխանեցինք: «Մի հայ ընտանիք ձեզ հրավիրում է իր
տունը»: «Կգնանք, կծանոթանաք»: Մտածեցինք. «Քանի որ
հայ են, ինչո՞ւ մերժել»: Մեզ ներս ընդունեց միջին տա-
րիքով, ծանրաբարո մի անձնավորություն: Երկուսիս ձեռ-
քերը սեղմելով նա ասաց. «Ապրիք, շատ ապրիք, որ նվիրված
եք հայ երգը տարածելու գործին»:

Մեր հետաքրքրությունը մեծ էր. ուզում էինք իմանալ,
թե ո՞ւմ հետ պատիվն ունինք ծանոթանալու: Տանտերը մի
փոքր տատանվելուց հետո հայտնեց, որ ինքը Սողոմոն Թեյ-
լերյանն է: Մենք հանկարծակիի եկանք, ո՞ր հայը չի լսել
այդ պատվական անունը. մենք բախտ ունեցանք անձամբ
տեսնելու հայ ազգի հերոսներից մեկին, որ Բեռլինում գնդա-
կահարեց վատհոգի Թալեաթին՝ Թուրքիո արյունարբու հրե-
շին, որը միլիտնավոր անմեղ հայ ժողովրդի կործանման
պատճառ դարձած էր 1915 սև թվականին:

Մեզ համար այդ անակնկալ հանդիպումը խիստ ուրախալի
էր: Սողոմոն Թեյլերյանը կազմած էր իր ընտանիքը, ուներ
զավակներ և ապրում էր խաղաղությամբ:

Հարավսլավիայից մեկնեցինք Բուլղարիա. ունեցանք մի
մեծ համերգ, որի մասին «Բալկանյան մամուլ» թերթը գր-
ում է.

«Սոֆիայի հայությունը, ավելի ճիշտ խոսելով՝ Սոֆիա-
յի հայության համեստ այլև գիտակից հոծ բազմու-
թյունը լեցուցած էր «Ալյանս ֆրանսեզի» ընդարձակ
սրահը, Տեր և տիկին Հայկ Արծիվ տված երգահանդեսի
առթիվ, կաճապարեմ ըսելու, նշանակելի հաջողություն
մը ունեցավ: Տիկին էմմա Արծիվ, որ կազմվածքով, իր
հեղ ու շնորհալի կեցվածքով ու հավակնոտութենե զուրկ
բնավորությամբ հարազատ մեկ ներկայացուցիչն է
տիպար հայ կնոջ, առաջին վայրկյանեն առիքնեց ամ-
բողջ սրահին անվերապահ համակրությունը ու գրավեց
ամենուն սրտերը, որովհետև ան գիտցավ իր դաշն ու
ախորժալուր երգեցության մեջ գտնել այն շեշտերն ու

ելևէջները, որոնք ուղղակի հոգիին կխոսին: Մեզմե շատերը ներկա եղած են հայկական համերգներու և ցեղային արգար հպարտութեամբ ու խանդավառ ոգիով ունկնդրած են մեր տոհմիկ բարբերն ու սովորութիւնները, մեր ցավերն ու հաճույքները, մեր սերերն ու սարերը հիշեցնող հայրենի ու հարազատորեն հայկական երգերու, բայց այս անգամ այդ զգացումներուն զուգընթաց ունեցանք նոր ապրումներ ալ: Պահ մը շուրջս նայեցա ու տեսա հուզված ու ինքնամփոփ դեմքեր, մըտախոհ արտահայտութիւններով, ու շատերուն քով՝ խանդաղատանք տամուկ աչքեր: Մեներգի թե զուգերգի մեջ տիկին Հայկ Արծիվ գիտցավ արժանացնել սուպրանոյի իր գեղեցիկ ու թովիչ ձայնը և խլել բոլորն ծափահարութիւններ: Հավասար արժանիքներով հասարակութեան ներկայացավ իր ամուսինը՝ պ. Հայկ Արծիվ, որ լիրիկ տենորի իր շատ հաճելի ձայնով ու երգեցողութեամբ լավագոյն տպավորութիւնը թողուց ունկնդիրներուն վրա և խլեց ան ալ բոլորն ծափահարութիւններ: Իր երգը հանկուցիչ է, որովհետև զգայուն սրտե մը կբխի, իր ձևերը ժուժկալ են ու բնական, որովհետև փորձված է ու վարպետ իր արվեստին մեջ: Ավելորդ պիտի ըլլար գնահատանքի նոր տողեր շարել իր մասին, որովհետև այր ու կին զիրար կլրացնեն: Եվ սակայն, տեր և տիկին Արծիվ ոչ միայն լավ երգիչներ են, այլև միևնույն ատեն լավ դերասաններ, իրենց խաղարկութիւնը որևէ բեմի վրա մեծագոյն հաջողութիւնը պիտի ապահովե իրենց: Այն քանի մը հատուկտորներու ներկայացումը՝ որոնց հանդիսատես եղանք և որոնցմե մի քանին

հայացուցած է բանաստեղծի խառնվածքով դերասան պ. Հայկը, կրնա գոհ ձգել ամենեն դժվարահաճ հանդիսականը:

Լսած եմ շատ հայրենաշունչ ճառեր, երկյուղածորեն ունկնդրած եմ ազգասիրութեան զգացումը խթանող ու փառաբանող երկարաշունչ ատենաբանութիւններ, (ես ինքս ալ քիչ մը այդ արվեստը ի գործ դրած եմ ժամանակին), բայց կկարծեմ, որ ոչինչ կրնա հայուն սրտին մեջ արթնացնել ու վառ պահել հայրենասիրական ոգին ու հայրենի օջախին տխուր կամ զվարթ հիշատակները այնքան ուժգնորեն և հարատևորեն, որքան համակրելի ու արդիական գողթան երգիչներու, տեր և տիկին Հայկ-Արծիվ սարքած երգահանդեսները»:

4 նոյեմբերի 1937 թ., Սոֆիա

Կրճ Միխայելան

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԵԳԻՊՏՈՍՅԱՆ ՀՈՒՇԵՐԻՅ

1930 թվականի թեժ ամռանն էր: Ալեքսանդրիայում պատ-
րաստվում էինք ներկայացնելու «Աշուղ Ղարիբ» լիրիկական
օպերետը: Կազմած էինք մեր թատերախումբը և սկսած փոր-
ձերը: Մասնակցողների մեջ կային առաջին անգամ բեմ ելնող-
ներ, նրանց պետք էր տաշել, հղկել և հարմարեցնել իրենց
ստանձնած դերերին, մանավանդ կային դերակատարներ, որ
ոճնին կրկնակի, եռակի դերեր: Իմ բեմադրած օպերետը իր
գեղարվեստական կառուցվածքով նման չէ նույն անունը կրող
օպերետին: Նյութը ես վերցրած եմ Աշուղ Զիվանու հանրածա-
նոթ հեքիաթից և դասավորած ըստ իմ ճաշակի: Այդ փոքրիկ
հեքիաթից ես կազմած եմ մի օպերետ՝ վեց արար, մեկ պատ-
կեր: Փորձի ժամանակ դերակատարներիցս մեկը ինձ հայտ-
նեց, որ քաղաքս ժամանած է հայտնի դերասանուհի Սիրա-
նույշը, որը մտադիր է Ալեքսանդրիայում մի քանի ներկա-
յացումներ տալ: Եվ սակայն դերակատարներու խնդրո
շուրջ մեծ դժվարությունաց առջև կգտնվի: Մինչև այդ մեր մեծ
դերասանուհու հետ առանձնապես ժանոթություն չէի ունե-

ցած: Իպրոցական շրջանից լսել էի նրա համբավը և ահա
Սիրանույշի ժամանումը Ալեքսանդրիա՝ մեզ անսահման ու-
րախություն պատճառեց: Այր և կին որոշեցինք անպայման
այցելել նրան և հրավիրել մեր ներկայացմանը: Նրա ներ-
կայությունը մեզ համար արտակարգ նշանակություն ուներ:
Հետաքրքրվեցինք և իմացանք, որ նա ապրում է իր ազգա-
կան դոկտ. Ռուբեն Գազանջյանի մոտ, և առանց ժամանակ
կորցնելու, հաջորդ օրն իսկ գնացինք նրան այցելության:

Մտանք ընդունարանը. դերասանուհին շրջապատված էր
մի քանի այցելուներով: Նրանք մեզ տեսնելուն պես ճանա-
չեցին, դիմափոխվեցան, երևի մեր ներկայությունը արգելք
պիտի լիներ իրենց ծրագրերի իրագործմանը: Սիրանույշին
հայտնեցինք մեր ինքնությունը և այցելության նպատակը:
Ուրախացավ, նստեցրեց իր կողքին: Շարունակվեց խոսակ-
ցությունը: Հայտնի եղավ, որ այցելուները եկած էին Կա-
հիրեից և առաջարկում էին Սիրանույշին՝ մի քանի ներկա-
յացումներ տալ այնպիսի շնչին զումարով, որ Սիրանույշը
չէր կարող համաձայնել. «Ձագուկներս, ձեր խոստացած զու-
մարով հաղվի կարելի է զգեստներ պատրաստել, ես սիրով
կօզնեի ձեզ, եթե ի վիճակի լինեի: Այժմ ես էլ կարիքի մեջ եմ
և ուզում եմ իմ ներկայացումներով մի փոքր բարելավել դրու-
թյունս»:

Սիրանույշի խոսքերը նրանց խոտոր էին թվում, համառո-
րեն պնդում էին և խոստումներով աշխատում համոզել նրան:
Մեծ դերասանուհին տատանման մեջ էր: «Մերժե՛լ թե ընդու-
նել»: Ես միջամտեցի. «Պարոնայք, պետք է մեծ արվեստա-
գետուհուն գոհացնել, քանի որ ուզում եք նրա ներկայությու-
նից օգտվել»: Նրանց գուր չեկավ իմ միջամտությունը. իսկ

Սիրանուշը սեղմելով ձեռքս, մեղմորեն ասաց. «Աստված ձեզ ուղարկեց, որ ինձ օգնեք»: Բայց ընդդիմադիրները համառում էին: Տիկին Սիրանուշին ներողություն խնդրեցինք, հանձնեցինք հրավիրատոմսը, ուզում էինք գնալ. թույլ չտրվեց:

Այցելուները տեսնելով, որ չպիտի կարողանան համոզել Սիրանուշին, դժգոհ սրտով հեռացան:

Սիրանուշը ուրախացած ասաց. «Եթե դուք այստեղ չլինեիք, նրանք ինձ կարող էին համոզել»:

Վերջապես եկավ ժամը: Հունական «էշիլարիոնի» սրահը ծայրի ծայր լիքն էր հանդիսականներով: Տոմսակները սպառված էին և շատերը մնացել էին ոտքի վրա: Հանդիսականների համար Սիրանուշի ներկայությունը մեծ անակնկալ եղավ:

Ներկայացումը վերջանալուց հետո Սիրանուշը դուրս գալուց հետո ուղղակի բեմ եկավ, շնորհավորեց դերակատարներին, համբուրեց տիկին Արծիվին և կոչեց «Սպիտակ աղավնիս», շնորհավորելով նրա սուպրանոյի շքեղ ձայնը, բնական դերակատարությունը: Համբուրեց նաև իմ ճակատս և ասաց. «Արծիվ ջան, շնորհավորում եմ ձեր բազմակողմանի բացառիկ հատկությունները. դուք դերասանի, երգչի, ռեժիսյորի, դիմահարդարի բոլոր բարեմասնություններն ունիք և մեն-մենակ գլուխ հանեցիք այսպիսի գեղեցիկ մի ներկայացումը»:

Մի ժամանակ անց, երբ բնակարանումս զբաղված էի «Անուշ»-ի բեմադրման խնդրով, դուռը զարկին: Ներս ընդունեցի իմ դերակատարներից Հ. Մամուրյանին: Ուրախ դիմքով, ձեռքին բռնած մի հայկական թերթ երկարելով ինձ՝ ասաց.

«Էավ լուր եմ բերել, պրն. Հայկ-Արծիվ, տես ով է գրել մեր ներկայացման մասին՝ Տիկին Սիրանուշը»:

(Հետևյալ թատերախոսությունը ստացանք հայ բեմի փառքերեն տիկին Սիրանուշի. ի հարգանս իր անձին ու գրչին, կհրատարակենք անփոփոխ):

ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԶՈՒՅԳԵՐՈՒՆ

Ուրախառիթ պատիվն ունեցա հրավիրվելու տեր և տիկին Արծիվ ամուսիններու կողմն իրենց հրապուրիչ երեկույթին ներկա լինելու համար: Խաղում էին գավառական հայ իրական կյանքը ներկայացնող Աշուղ Ջիվանիի «Աշուղ Ղարիբը»: Ծահ-Սանամի դերը կկատարեր շնորհալի տիկին էմմա-Արծիվ, իսկ Ղարիբի դերը կկատարեր պրն. Հայկ-Արծիվ: Խաղը շատ կոկիկ, սիրուն, զվարճալի էր: Միևնույն ժամանակ ուներ միամիտ կյանքի այնչափ հուզիչ կողմերը, որ շատ ճարպիկ կերպով անցնելով մեկ զգացմունքից մյուսը, անմիջապես փոխվում էր ուրախության, շատ կենդանի և բնական ելևէջներով: Նյութը առնված է Ա. Ջիվանիի հանրածանոթ հեքիաթից, որուն մեջ նույնիսկ գոյություն չունին այն անձինք, որոնք շուք տված են օպերետի զլխավոր դերակատարներին, այդ փոքրիկ հեքիաթից՝ 6 արար, 1 պատկեր, հայկական շքեղ օպերետ մը կազմած է պրն. Հայկ-Արծիվ, որ արժանի է գովեստի: Հայ բեմին պատիվ բերող շնորհալի երգիչ դերասան պրն. Հայկ-Արծիվ ունի բազմա ձայն (տենոր-լիրիկ), դրամա-

տիկ խառնվածք և իր զարգացմամբ ու կրթությամբ, նաև ամենադիսպոզիտիվ իր աշխատասիրությամբ արդեն ցույց կուտա իր տաղանդի կայծերը: Խոսելով Ղարիբի գերակատարության մասին, պրն. Հայկ-Արծիվ գերազանցորեն կատարեց Աշուղ Ղարիբի վեհ և աղնիվ զգացումներով օժտված դերը: Ղարիբ թեև ընկճված, սակայն հոգեպես՝ իր սիրո բոլոր տառապանքներով ու ապրումներով հերոս էր... սիրո համար ապրող, սիրո համար զոհվող: Երբ հարկը պահանջեց, նա թողեց Սանամին և իր սիրո նեկտարը խմեց դառնության բաժակով և հեռացավ օտար աշխարհ...:

Ղարիբ թե՛ երգում էր հույզերով և թե խեղդում էր արցունքը, որպեսզի իր սրտի միակ ծաղիկը վշտով չթողնի:

Տիկին էմմա-Արծիվ Եահ-Սանամի գերին մեջ շափաղանց գեղեցիկ էր, թե՛ արտահայտություններով և թե իր սուպրանոյի գեղգեղուն, շքեղ ձայնով: Պոկված վարդի մը նման նա գլխիկը դրած իր չարի սրտին, իր անդրանիկ, անրիժ սիրով լցված, կաղերսեր չթողնել իր Եահ-Սանամին... Որքան սրտազրավ խնդիր էր յան... Ղարիբի սիրտն էլ այրվում էր իբրև սիրահար, որ ճակատագրական հարվածով մը բաժանվում էր իր սիրածին...

Այդ երկու երիտասարդ սրտերու բաժանումը սրտաճմլիկ էր... Յոթը երկար տարիներ հետո Ղարիբ պատիվը վերականգնած և հարուստ՝ կվերադառնա և մեծ դժվարություններ հետո կարժանանա իր կարոտ Սանամին:



Հայկ Արծիվը Սեյրանի գերում



Հայկ և Էմմա Արժիմեր: Համերգ «Երեւանի»-ի վեցերորդ տարեկիցի առթիվ (Մոսկովեցոն)

Մնացյալ դերակատարները, որոնք կազմված էին բոլորն ալ թատերասերներից, կարող եմ ասել, որ ամենքն ալ շատ բարեխիղճ կերպով կատարեցին իրենց գերերը: Գիտելով բոլոր դերակատարները, մարդ հիանում է տեսնելով անոնց լուրջ վերաբերմունքը իրենց գերերուն հանդեպ: Մանավանդ պրն. Հ. Մամուրյանին տրված թե՛ սիրո պատգամի լուրջ դերը և թե Գիժ Մանուկին զվարթ դերը. նա երկու դերերն ալ հավասար հաջողությամբ կատարեց:

Գերասանի մը հաջողությունը թեև հասարակության քաջալերութենեն կախում ունի, սակայն գեղարվեստի ճանապարհը անվերջ է և անհուն... Ուտի այդ դժվարին ճանապարհը անցնելու համար, արվեստագետի միակ սերը պետք է լինի անվերջ ուսումնասիրությունը... որպեսզի կարենա հարդարել իր ընտրած շավիղը, ընթանալու համար ղեպի վսեմ նպատակը:

Ներկայացումը անցավ շատ հաջող և հասարակությունը շափազանց զոհ հեռացավ էշիլարիոնի սրահեն:

Ալեքսանդրիա, դեկտ. 23, 1930 թ.

Սիրանույշ

Ի՞նչ թաքցնեմ մեղքս, որախությունս շափ ու սահման չկար, և քանի որ մեծ արտիստն է խոսում մեր մասին, ավելի եռանդով փարվեցանք զործի և ձեռնարկեցինք «Անուշ»-ի ներկայացումը:

Ինչպես հայտնի է գեղարվեստասեր հայ հասարակությանը, «Անուշ» պոեմը հեղինակություն է ամենայն հա-

յոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի: Կովկասի մեջ տարիներ առաջ անվանի երաժշտագետ Արմեն Տիգրանյանի ներշնչումով, նրա հիասքանչ մեղեդիներու միացումով «Անուշ»-ը գարձած էր երգախառն դրամա՝ շորս արար, մեկ պատկեր: Արտասահմանյան երկրներում «Անուշ»-ի երգերը մասամբ խեղաթյուրված էին և իր հատկանշական անունը փոխված: Հայտարարությանց վրա փոխանակ գրվելու «Անուշ» երգախառն դրամա, երբեմն գրված է եղել «Անուշ» օպերա: Թատերական աշխարհում օպերաներու նյութը կկազմեն ընդհանրապես կատակերգությունները, իսկ ողբերգությունները երաժշտականորեն ներկայացված, կկոչվին դուսաներգություն (օպերա): «Անուշ»-ը ողբերգություն է: Հայաստանի Պետական օպերայի ռեպերտուարը կազմող ներկա «Անուշ»-ը 30-ական թվականներին ամբողջացված և կատարելագործված է Արմեն Տիգրանյանի կողմից որպես օպերա և այդ երաժշտությունը արտասահման մուտք չէր գործած, երբ մենք «Անուշ»-ը ներկայացրինք 1931 թվին Ալեքսանդրիո մեջ, որպես օպերա: Արմեն Տիգրանյանի մի քանի գլխավոր երգերից բացի մնացյալ երաժշտությունը ինքս էի հորինել, հարազատ մնալով նրա հեղինակի ընդհանուր ոգուն և ոճին:

Երեք ամիս անընդհատ շարժարվելուց հետո, որոշեցինք «Անուշի» ներկայացման օրը՝ 8 նոյեմբեր 1931: Վարձեցինք «էլ-Մոսսաբ» շքեղ թատրոնը: Առաջին առթիվ հրավիրեցինք մեծ Սիրանուշին և դոկտ. Գաղանջյանին ներկա գտնվելու:

Նախ քան ներկայացումը, տիկինս համարձակություն ունեցավ խնդրելու Սիրանուշին, որ ցույց տար, թե ինչպես պետք է կատարել Անուշի խելագարության տեսարանը: Սի-

րանուշ ժպտազեմ պատասխանեց. «Աղջիկս, ինքդ պետք է զգաս և կատարես զերդ առանց մեկու մը նմանեցնելու: Ես տեսա քեզ բեմում, դու ունիս այդ շնորհքը և վստահ եմ, որ լավ պիտի կատարես զերդ: Սակայն ի՞նչ է լինելու իմ դրուժյունս անփորձ դերակատարներով: Արմանի դերը ուզում էի հանձնել մեկին, հարմար չգտա: Ես մտածեցի, որ պրն. Հայկ-Արծիվը կստանձնե այդ դերը»:

«Ամենայն ուրախությամբ, — պատասխանեցի, — սակայն ես մտածում եմ, որ ավելի կարևոր խնդիրներ կան: Մեր պարտականությունն է, տիկին Սիրանուշ, ամեն կերպ ձեզ օժանդակել: Ձեր ներկայացումը գլուխ հանելու համար ո՞վ պիտի օգնե: Գուք որոշեցեք: Կուզե՞ք դերը կստանձնեմ, կուզե՞ք՝ բեմից դուրս եղած աշխատանքները կտանիմ»: Սիրանուշը մի փոքր մտածելուց հետո պատասխանեց. «Ինչպես որ հարմար կտեսնեք, այնպես էլ կանենք: Իսկ ո՞վ է Արմանի դերը ստանձնելու, որ նույնքան կարևոր է»:

«Մի՛ մտածեք այդ մասին, ես մեկը գտած եմ, որ կարող է և շատ հարմար»: «Իսկ ո՞վ է այդ երիտասարդը, ի՞նչ է նրա ազգանունը»: «Գափամաշյան, ես նրա հետ խոսել եմ այդ մասին: Ձեզ մոտ կբերեմ և դուք կտեսնեք, որ հարմար է»: «Լավ, թող այդպես լինի» — մի փոքր տրամադրությունը վերականգնեց: Հրավիրատոմսը հանձնեցինք Սիրանուշին և բաժանվեցինք:

Վերջապես բեմադրեցինք «Անուշ»-ը: Նվագախմբի ղեկավարությունը հանձնած էինք իտալացի հայտնի մասետրո Զ. Ալաբիին, որ մեծ վարպետությամբ առաջնորդեց օպերան մինչև վերջ: Յուրաբանչուր արարված բուռն ծափահարություններով գնահատվում էր: Խելագարության տեսարանին

տիկին Արծիվը նուրբ խաղով հուզեց ներկաները և ստացավ երկարատև ծափահարություններ, ծաղկեփնջեր: Ներկայացումը երբ վերջացավ, բեմ եկավ Սիրանուշը՝ թաց աչքերով, փաթաթվեց տիկին Արծիվին, համբուրեց նրան և կրկին անգամ գոչեց. «Սպիտակ աղավնիս, ես գիտեի, որ դուն լավ պիտի կատարես դերդ: Եթե ես շուրջիններես չբաշվեի, պարզ մահկանացուի պես պիտի լայի»: Ապա դառնալով ինձ՝ գնահատեց. «Արծիվ ջան, քու գործդ դուն պատվով զլուխ հանեցիր»:

18 նոյեմբեր 1931 թ. «Լա սեֆորմ» Ալեքսանդրիո ֆրանսիական թերթը գրում է.

«Հայտնի տներ և սուպրանո Հայկ և էմմա Արծիվներ—ամուսիններ, Ալեքսանդրիո «էլ-Մոսասթ» թատրոնում բեմադրեցին «Անուշ» հայկական օպերան: Հոծ բազմությունը բուռն ծափողջույններով զիմավորեց զույգ գլխավոր արտիստներին: էմմա-Արծիվ, մասնավորապես խելագարության տեսարանին, ի հայտ եկավ արվեստագետի արտակարգ ձիրքերով և մեզ լսել տվավ այնքան ղեղեցիկ և հոյակապ ձայն մը: Հայկ-Արծիվ ցույց տվավ հիանալի տաղանդ, որպես երգիչ և դրամատիկ դերասան»:

Սիրանուշի ներկայացումը լինելու էր որդի Դյումայի «Քամելիազարդ տիկինը»: Իմ դերակատարներիցս լավագույնները տրամադրած էի օգնելու նրան: Փորձերը տեղեցին ամիսներ: Զգեստների պատմություն, ալլեալլ բացառիկ ծախսեր: Ո՞վ պիտի հոգար: Մասնակի կերպով օժանդակություն բերին մի քանի բարեսիրտ տիկիններ, մենք էլ մեր ձեռքից եկածը արեցինք, սակայն դժվարությունները շատ էին: Նախ

քան ներկայացումը արգելքներ էլ կային անհաջողության մատնելու Սիրանուշի ձեռնարկը:

Երբեք չեմ մոռացած վատ արարքը դերասանների, որոնք ծրագրած էին ձախորդության մատնելու մեծ Սիրանուշի ձեռնարկը, և այդ նպատակով հանած էին մասնավոր թուղիկներ, բաժանելու ժողովրդին, սուտ-փուտ պատճառաբանելով, որ Սիրանուշը ի վիճակի չէ ներկայացումը զլուխ հանելու: Այդ գեպը խորապես ազդած էր ինձ և տիկնոջս, և դերակատարներին մեկի միջոցով լուր ուղարկեցի նրանց՝ ասելով. «...Ձեր տմարդի կեցվածքը հայ բեմի հուշակավոր դերասանուհի Սիրանուշի հանդեպ լսած եմ և զգուշացնում եմ կյանքի դնով»:

Այդ մարդիկ քիչ թե շատ ծանոթ էին կովկասցիի իմ բնավորությանը և ալլես շհամարձակվեցին իրենց ծրագիրը գործադրելու:

Սիրանուշի ներկայացումը տեղի ունեցավ «Ալ Համբրա» թատրոնում, մեծ հաջողությամբ, փոթորկալի ծափերի մեջ նա գնահատվեց: Մարդարիտա Գոթիեի նուրբ դերով Սիրանուշը գերազանցորեն ապրեցավ և արժանացավ արվեստասեր ժողովրդի հիացմունքին, ստացավ բազմաթիվ ծաղկեպսակներ: Ներկաներից շատերը բեմ եկան և անձամբ շնորհավորեցին մեծ արտիստուհուն:

Մի քանի օր հետո, երբ գտնվում էինք Սիրանուշի բնակարանում, նա ասում էր. «Ներսս երիտասարդ է, իսկ դուրսս մաշված, տառապած, հիմա ես բեմը ավելի լավ եմ հասկանում, քան առաջ»: Սիրանուշի հետ խոսելիս, կարծես գերբնական մի ուժ ինձ քաշում էր, մազնիսացնում:

Հաճախ էինք հանդիպում: Մի կիրակի օր, Սիրանուշին

հրավիրած էինք մեզ մոտ ճաշի, սակայն մինչ ճաշը, նա փափազ հայանեց անցնել եկեղեցի՝ լսելու հայոց պատարագը: Տիկինն մնաց տանը ճաշ պատրաստելու, ես և Սիրանույշը գնացինք եկեղեցի: Այդ օրը Կահիրեից Ալեքսանդրիա եկած էր անվանի մտավորական արքեպիսկոպոս Քորգոմ Գուշակյանը, որը միևնույն ժամանակ պատարագիչ էր: Խոսներամ բազմությունը լցված էր եկեղեցին: Սիրանույշի հետ մի անկյունում կանգնեցինք: Եկեղեցին ավարտելուց հետո ժողովորդը ցրվեց: Առաջնորդարանում սպասում էինք սրբազան Գուշակյանին տեսնելու: Երբ ես տեսա սրբազանին, ձեռքը համբուրեցի և ներկայացրի Սիրանույշը, ասելով. «Սրբազան հայր, ձեզ կներկայացնեմ հայ բեմի թագուհին՝ տիկին Սիրանույշը: Սրբազանը հանկարծակիի գալով հառաչեց. «Սիրանույշը, ի՞նչ կրեսք»:

Սիրանույշը ուզեց նրա աչք համբուրել, բայց Գուշակյանը չթողեց, ընդհակառակը, ինքը համբուրեց Սիրանույշի ձեռքը:

Որքան լավ է մեծ լինել և մեծությունը հասկանալ: Ս. Գուշակյանը մանրամասնորեն հետաքրքրվեցավ Սիրանույշի կյանքով և, իր այցելուսի վրա գրեց Կահիրեում գտնվող Հարություն Ամիրյանին, որ Սիրանույշին ամեն կերպ հող տանի: Հ. Ամիրյանը Կահիրեում սիրված անձնավորություններից մեկն էր և նյութապես էլ լավ վիճակի մեջ:

Վերադարձանք տուն: Ծաշին խոսք բացվեց արվեստի շուրջ. Սիրանույշը ցավելով ասաց. «Մոտ է ժամանակը, որ չվենք այս աշխարհից և մեր մեկնելուց հետո պիտի դադարի գոյություն ունենալի ճշմարիտ արվեստը»: Հիշեց անզուգական ողբերգու Պետրոս Աղամյանին, հուզվեց, հուզեց նաև մեզի: «Ափսոս հայ հանճարին, շարունակեց նա, չտեսավ դրսի

աշխարհը, շունիք միջոցներ, հենարան՝ մեկնելու եվրոպա՝ իր արվեստը ցուցադրելու համար: Աղամյանը չէր կարող պարզ մարդու պես ճամփորդել, նրան պետք էր առաջնակարգ ճամփորդություն, իմպրեսարիո, լավագույն հյուրանոցներ, թերթերու թղթակիցներ՝ դիմավորելու նրան որպես Շեքսպիր-բուստանի, որ նյութին կառչած, շոալություն մեջ կփնտրեն իրենց երջանկությունը: Աղամյանը պետք էր աշխարհին ներկայացնեի իր աննման Համլետը: Ազգերը աշխարհին ներկայանում են իրենց հանճարներով»:

Անդրադառնալով մեր՝ «Անուշ» օպերայի ներկայացմանը, Սիրանույշը ասաց. «Արժիվ ջան, եթե մի օր բախտ ունեցար Հայաստան գնալու, «Անուշ»-ի երաժշտության քո հղացած մասերը պետությանը հանձնիր: «Այդ երաժշտությունը ես շատ սիրեցի, որովհետև կոնտրաստ է, մարդ որքան լսե, չի ձանձրանար»: Սիրանույշը ինձ ցույց տվեց հանրածանոթ դերասան Իսահակ Ալիխանյանի նամակը, որ ստացել էր հայրենիքից: Ալիխանյանը կանչում էր Սիրանույշին՝ վերադառնալ Սովետական Հայաստան: Սակայն նա չէր կարող ճամփորդել, ասում էր... «Հայրենիքը մոտ է սրտիս, բայց վախենում եմ կես ճամփին մնալ»:

Վերջին անգամ, երբ այցելեցինք Սիրանույշին, պատմեց, թե ի՞նչպես թողեց իր ծննդավայրը:

Այդ պատմությունը նույնությամբ հիշում եմ: 1930 թվականի սկզբները: Երբ նա գտնվում էր Պոլսում, միօրինակ կյանքը նրան ճնշում էր. հողեպես տանջվում, և վերհիշումներով ապրում. նա հիշում էր իր փառավոր անցյալը և ցանկանում էր կրկին բեմ դուրս գալ, ծառայել իր սիրած ժողովանում էր կրկին բեմ դուրս գալ, ծառայել իր սիրած ժողո-

վրդին: Տարիքը նշանակութուն չունի. ներքնապես Սիրանուշը երիտասարդ էր, և որոշում է թողնել իր ծննդավայրը, մեկնել Եգիպտոս իր ազգական դոկտոր Գաղանջյանի մոտ՝ ներկայացումներ տալու, մանավանդ եգիպտահայութունը վաղուց ծանոթ էր իր համբավին: Եվ ահա նա որոշում է առանց ժամանակ կորցնելու անցնել անգլիական դեսպանատունը՝ վիզե ստանալու համար: Սակայն դժվարությունների է հանդիպում: Գեսպանատունը հարցաքննում է Սիրանուշին, թե ինչո՞ւ է նա ուզում զնալ Ալեքսանդրիա, ո՞վ ունի այնտեղ: Սիրանուշը պատասխանում է, որ այնտեղ ունի իր ազգականը՝ զոկտ. Ռուբեն Գաղանջյանը, և երկրորդ, ինքը գերասանուհի է, կարող է ներկայացումներ տալ հայ ժողովրդի համար: Գեսպանատան պաշտոնյան տեսնելով տարիքոտ կնոջ համարձակությունը, հարցնում է, թե ի՞նչ կարգի գերասանուհի է, վկայագիր, զիպլում ունի: Սիրանուշը քնքշությամբ պատասխանում է. «Ես վկայագիր չունիմ, բայց իմ մասին գրվածքներ շատ կան: Եթե կփափագիր, կարող եմ բերել»: Պաշտոնյան ասում է. «Լավ, եթե կարելի է, այդ գրվածքները բերեք, նրանք մեզ համար կարևոր են»: Սիրանուշը երկրորդ այցին վերցնում է իր մասին գրվածքները և մեկնում դեսպանատուն, հանձնում գրագրին ուսերեն լեզվով գրված մի ամսագիր, որի առաջին երեսում գետեզված էր իր լուսանկարը, ներքևում մակագրված՝ Հուլիանովոր գերասանուհի Սիրանուշի գաստրոլները Մոսկվայում: Երկրորդ էջում տեղավորված էր ռուս հայտնի գերասան Կաչալովի նկարը: Գեսպանատան գրագիրը ներողություն է խնդրում և համբուրելով նրա ձեռքը, անմիջապես կարգադրում է անցագիր տալ:

Մյուս պաշտոնյան այնուամենայնիվ հետաքրքրվում է այն հարցով, թե ի՞նչպես կարող է այդքան մեծ հուշակ ունեցող գերասանուհին զիպլում չունենալ: Սիրանուշը պատասխանում է. «Մի՛ զարմանաք, մենք ունեցած ենք Պետրոս Աղամյան, նա էլ զիպլում չունի, բայց աշխարհածանոթ ոգբերգուներ Սալվինիի և Ռոսիի կողքը կղնեին անոր»: Գեսպանատան գրագիրը տեսնելով նրա թախծալի դեմքը, հարցնում է. — «Տիկին, ինչո՞ւ այդքան հուզվեցաք, արդյոք ձեր ազգականն էր այդ Աղամյանը»: «Այո,— պատասխանում է Սիրանուշը,— արվեստի մեր ընտանիքին կպատկաներ, կցավիմ, որ այդ հանճարի անունը, կան մարդիկ, որ լսած չեն»:

Եգիպտոս մեկնելուց առաջ Սիրանուշը մի քանի սրտակից բարեկամների հետ անցնում է Պոլսո հայոց գերեզմանատունը, իր հրաժեշտը տալու Աղամյանի շիրիմին, արցունքներով ոչոզում նրա շիրմաքարը:

Ալեքսանդրիայում Սիրանուշին զիմավորում է զոկտոր Գաղանջյանը և առաջնորդում իր բնակարանը: Սակայն նրա միտքը հեռուններն էր, հիշում էր իր ծննդավայրը, շատ հաճախ կովկասը, որտեղ նա հասել էր իր փառքի գազաթնակետին, թողնելով բազմաթիվ հիացողներ՝ Թիֆլիսում, Բաքվում, Երեվանում, Մոսկվայում:

Սիրանուշը որոշած էր մեկնել Կահիրե: Նախ քան մեկնումը, ես և տիկինս կրկին այցելեցինք իր բնակարանը: Տեսարնք մեծ արվեստագետուհին սլիտույքներն է հավաքում: Նա մեզ տեսնելուն պես բացականչեց. «Արծիվներս, լավ ժամանակին հասաք, ես պատրաստվում եմ մեկնելու Կահիրե: Սակայն չկա մեկը, որ ինձ օգնե, ճամփու դնե»: Մենք այր և կին զարմացած հարց տվինք. «Մի՞թե գաղութը լուր չունի

ձեր ճամփորդութեան մասին»: Սիրանուշը պատասխանեց. «Հատկապես ոչ որի լուր չիմ տված, սակայն ինչպես դուք նույնպես և շատերը տեղյակ են»:

Գուկտոր Գազանջանը դիմավորեց մեզ ժպտադեմ, ասելով, «Լավ որ եկաք, Սիրանուշը այսօր երեք օր է պատրաստվում է ճամփորդութեան, բայց չի հաջողվում, որովհետև մենակ է, պետք է նրան օգնել, ինչքերը կապկպել, երկաթուղու տոմսը ապահովել և որոշյալ ժամին գնալ կայարան, ուղեկցել և՛ վ պիտի անն այդ բոլորը: Ես անկարող եմ, տրկար եմ»:

Անմիջապես դասավորեցինք, կապկպեցինք իրերը, Սիրանուշը իր թատերական պիեսներից «Դավաճանություն», «Քույր Քերեզա», «Անհայտ կին», «Մելիքի աղջիկ» և իր արժր մականգրելով նվիրեց մեզ:

Երկրորդ օրը վարձեցինք մի ավտո, դասավորեցինք իրերը և Սիրանուշի հետ ուղևորվեցինք դեպի կայարան: Տոմսը ապահովելուց հետո իր գույքերը հանձնեցինք ուր որ պետքն էր, Սիրանուշին նատեցրինք վագոնում առանձնահատուկ տեղ, զգուշացրինք, որ ճանապարհին ինքն իրան լավ նայի և հրաժեշտ տալով բաժանվեցինք:

Երկաթուղին սույեց և արագընթաց շարժվեց առաջ: Սիրանուշը պատուհանից մեզ էր նայում անընդհատ օդային համբույրներ ուղարկելով: Երկաթուղին անհայտացավ: Մենք նայում էինք նրա հտեկից:

Շուտով մենք էլ որոշեցինք անցնել Կահիրե: Երկար փընտրելուց հետո գտանք Սիրանուշին: Մեզ դիմավորող կինը ասաց, որ նա հիվանդ է՝ ոչ որի չի ընդունում: Գուների մեջ երևաց Սիրանուշը, վերարկուով փաթաթված. մեզ տես-

նելուն պես բացականչեց. «Լավ է, որ եկաք» և իր բազուկների մեջ առնելով մեզ տարավ իր ննջասենյակը: «Ընչպե՞ս եղավ, որ եկաք, երկա՞ր պիտի մնաք»: «Ոչ, տիկին Սիրանուշ, ճամփորդ ենք, անցնելու ենք Խարթում (Մուզան) և այնտեղից էլ ուղղակի Հաբեշտան: Եկած ենք մի անգամ ևս ձեզ տեսնելու, ցավում ենք, որ ձեզ հիվանդ գտանք»:

Սիրանուշը պատմեց, թե ինչպիսի խոշընդոտների է հանդիպել իր հորեղանական հանդեսը գլուխ բերելու համար: Պատմեց, որ դիմել է հայ կաղամակերպությունների ղեկավարներին, որպեսզի համազգային ձևով տոնեն իր հորեղանը: Սակայն նրանցից ամեն մեկը առաջարկել է առանձին-առանձին տոնել: Սիրանուշը բացատրել է նրանց, որ ինքը պատկանում է ընդհանուրին և պետք է միացյալ ջանքերով տոնել այդ հանդեսը: «Մյսպես ձգձգվեց օրեր, շաբաթներ, մինչև որ հինգ հոգի կարողացա իրար մոտ բերել և ինքս անկողին ընկա: Ահա տեսնում եք վիճակս: Եթե իմ նյութական պայմանները լավ լինեին, հորեղանը շուտ գլուխ կգար»: Հառաչելով վերհիշեց թե ի՞նչպես անցյալում Ռազմա-վիրական ճանապարհի վրա ավաղակները հարձակվել և կողոպտել են իր թանկագին զարդերը, իր բոլոր ունեցածը:

Մենք շատ ցավեցինք լսելով մեծ արվեստագետուհու քաշած տառապանքների մասին, և հուսադրեցինք, որ ամեն ինչ լավ կվերջանա, լավ կլինի, միայն կարևոր է մարդուս առողջությունը: Սիրանուշը վերհիշեց անցյալի այցելությունները Եգիպտոս, իր հետ պատահած զժբախտությունները: Գրանցից մեկը ամուր դրոշմվել է իմ հիշողության մեջ:

1889 թվականին Կահիրեում աղգային ղեկավարների նա-

խածնունդովյամբ «տեղիվյալ» թատրոնում տեղի պիտի ունենար մի մեծ ներկայացում հօգուտ բարի նպատակի և բարեհաճ մասնակցությամբ Սիրանույշի Քառասունութ ժամվա մեջ արվեստագետուհին կորցնում է իր մեկ հատիկ որդուն՝ երեք ու կես տարեկանը ներկայացումը կազմակերպող մարմինը շփոթության մեջ է ընկնում, արդյոք ներկայացումը տեղի պիտի ունենա՞ — Սիրանույշը պիտի մասնակցի՞: Սիրանույշը զերբնական ուժ գործադրելով, համաձայնում է, միայն խնդրում է մի քանի օր հետաձգել: Իր որդու մահվանից մեկ շաբաթ հետո թատրոնի առանձնասենյակում կուտալով կսկծալի արցունքները, հանուն իր թանկագին ժողովրդի, բեմի վրա կատարում է իր գերը:

Նա հուզված համբուրեց մեզ:

Դա եղավ մեր վերջին տեսակցությունը:

Կահիրեից հետո մեկնեցինք Խարթում, որտեղ ունեցանք բացառիկ մի համերգ, որի մասին զրախոսական տպագրեց անգլիական «Սուդան զեյլի հերալդ» թերթը (2-ր մարտի 1932 թ.):

Խարթումից հետո ուղևորվեցինք դեպի Ադիս-Աբեբա՝ Եթովպիայի մայրաքաղաքը, որտեղ ունեինք նշանակալի մի հայ գաղութ: Մեր անունը արգեն ծանոթ էր շատերուն և գաղութի սիրված նախագահ Մ. Գեորգովի հովանավորությամբ տեղի ունեցավ մեր առաջին երեկույթ-համերգը «Օլիմպիա» թատրոնի մեջ, ապրիլ 24-ին 1932 թվականին: Ներկա էր հայ և օտար հասարակություն: Մեր համերգի մասին գովեստով խոսեց «Կուրիեր դ' Եթովպիա» ֆրանսիական թերթը:

Հաջորդաբար ներկայացրինք զրամաներ և օպերետներ: Մեր գործունեության շուրջ արձագանքեցին հայ և օտար թեր-

թերը: Պոլսո «Ժամանակ» թերթը գրում է. «Ծուրջ մեկ ամիս է, տեղս կգտնվին երգիչ-դերասաններ տեր և տիկին Հայկ-Արծիվ, որոնք իրենց առաջին երեկույթ-երգահանդեսը տվին «Օլիմպիա» թատրոնին մեջ նշանակալի հաջողությամբ»:

Հազիվ մի քանի ձեռնարկներ ունեցած էինք, երբ Եգիպտոսից եկած հայկական թերթերը գուժեցին մեծ Սիրանույշի մահվան լուրը: Թերթերը հրատարակած էին Սիրանույշի կիրպարները և միևնույն ժամանակ սկսել էին մեկը մյուսին բղկաել, ասելով, որ Սիրանույշի համար անտարբեր գտնված են. և այդպիսով սկսվեց Կահիրեում մի տղեղ պայքար:

Մեր տիրությունը շատ էր: Դիմեցի հայ քահանային, որ առաջիկա կիրակի, պատարագին, հիշվի մեծ Սիրանույշի անունը, երկու խոսքով ցավակցին նրա մահվան առթիվ: Քահանան իր համաձայնությունը տվեց և խոստացավ հայտնել վարչականներին: Երկրորդ օրը ստացա մի երկտող՝ եկեղեցու վարչության կողմից, որտեղ գրված էր հետևյալը. «Տիար Արծիվ, եթե տիկին Սիրանույշը ձեր աղագականն է, պետք է որոշյալ սակը վճարեք, որպեսզի նրա սգահանդեսը եկեղեցում կատարվի»:

Ինչպիսի անտարբերություն... Որոշեցինք բացառիկ ծախսեր անել, Սիրանույշի սգահանդեսը կազմակերպել թատրոնում, բան թե ողորմություն հայցել հայ եկեղեցու խզուկ վարչականներից: «Վերջին լուր» Պոլսահայ թերթը գրում է.

«Հուլիսի 10-ին տեղվույս Մամեստիկ սրահի մեջ տեղի ունեցավ սգահանդես մը ի հարգանս մեծանուն դերասանուհի տիկին Սիրանույշի, զոր կազմակերպած էր պ. Հայկ Արծիվ, հայ բեմի թագուհին ի հիշատակ: Սգահանդեսի բացումը կատարեց ուսուցչապետ

պ. Ս. Շիրձմանյան, որը կարճ և ազդու կերպով ծանոթացուց տիկին Սիրանուշը: Օր. Նեատուրյան, գաղութիս սիրված դաշնակահարուհին նվագեց Շոպենի մահերգը, զոր ներկաները հոտնկայս ունկնդրեցին: Հետո փոխն ի փոխ երգեցին և արտասանեցին, տիկ. Էմմա-Արծիվ՝ «Գնաց, գնաց», պ. Հայկ-Արծիվ խոր լուսնյան մեջ արտասանեց «Լինե՛լ թե չլինե՛լ» («Համլետեն»), տիկ. Սիրանուշի հոգիին պաշտամունքը... Հետո պ. Ս. Նալբանդյան ջութակի վրա ածեց՝ Մայր Արաքսի վիշտն ու ցավը... Տիկ. Արծիվ երգեց՝ «Մի՛ լար», հուշսի և կյանքի երգը... Ապա՝ պ. Արծիվ արտասանեց Հ. Քումանյանի «Ականջ արեք»-ը «Թմկաբերդի առումը» պոեմից: Պ. Հայկ-Արծիվ երկու խոսքով պատկերացուց մեծ արվեստագիտուհիին կյանքն ու գործը, արևելահայ և արևմտահայ թատրոնների ծաղումը և մեծանուն տիկին Սիրանուշի կատարած դերը հայ թատերական պատմության մեջ... Ցավեց ու ցավեց անցյալի համար, անցնողի համար... որուն փոխարինող չկա:

Ադիս-Աբեբա

Երացավ՝



Եթովպիայում մնացինք մոտավորապես երեք-չորս ամիս, ծանոթացանք գաղութի ակնառու հայրենակիցների հետ: Հայության մեծ մասը արհեստավորներ էին, փոքր մասը՝ վաճառականներ: Կային նաև մի քանի բժիշկներ և լուսանկա-

րիչներ: Հայ գաղութն ուներ իր վարչությունը, որի նախագահն էր Մաթիկ Գևորգովը, — բնիկ պուլեցի, ժողովրդի կարիքներին հասնող, սիրված մի անձնավորություն: Հիշատակության արժանի է նաև երիտ. Թագևոս Չալըրճյանը, արտիստների անկեղծ բարեկամը, որ օժանդակած է Ա. Շահ-Մուրադյանին և մեզ:

Եթովպացիների եկեղեցական մեծ տոն էր: Բազմություն էր հավաքված փողոցներում: Մարդիկ գնում էին իրենց սըրբավայրը աղոթելու: Ես էլ հետաքրքրվեցի և կայսերական նախարարներից մեկի հետ ջորիներին հեծած գնացինք սրբատեղին: Ուզում էի մոտիկից տեսնել նրանց ազգային ծիսակատարությունները: Ներկա պիտի լիներ նաև կայսր Հայլե Սելասիեն և իր պետական կազմը: Հուլից տեսա կայսերը նստած մի ղեղեցիկ զարդարված ջորիի վրա (ջորին եթովպիայում շատ հարգի է): Կայսեր աջ և ձախ կողմերը կային երկու թիկնապահներ, որոնք փոխն ի փոխ բռնում էին մի կարմրազույն մեծ հովանոց՝ արևից պաշտպանելու համար: Հասանք ուխտատեղին. եթովպացիները ծնրադիր աղոթում էին, տարօրինակ շարժումներով երգում և կարծես պարում: Մեծ հետաքրքրությամբ հետևում էի այդ տեսարանին, եթովպական եկեղեցին ենթարկվում է հայ եկեղեցուն: Հոգևոր պետք մի ասորի բարձրաստիճան կրոնավոր էր նշանակված Երուսաղեմի հայոց պատրիարքարանի կողմից: Աղոթքից հետո պատրաստեցին մի ճոխ սեղան ի հարգանս կայսեր: Ծանոթացա Հայլե Սելասիե կայսեր հետ, որն ինձ սիրալիր կերպով ընդունեց: Խնջույքի պահին նորին մեծությունը ճառախոսեց: Ի միջի այլոց դառնալով հայ պաշտոնյաներին՝ զերվատիքի շատ խոսքեր ասաց հայերի հասցեին:

կայսեր խոսքերը ծափահարություններով ընդունվեցին: Երկրի ոստիկանապետը հայ էր, Պապիկյան ազգանունով: Նախարարների մեջ նույնպես հայեր կային. կայսեր անձնական թարգմանը և խորհրդատուն Քերզյան անունով մի հայ էր:

Մեզանից առաջ Ադիս-Աբեբայում եղել էր Շահ-Մուրադյանը և տվել միայն մեկ համերգ. Եթովպիայի օղբ աննպաստ է երգիչների համար:



Մեկ օր փորձից տուն վերադառնալիս ճանապարհին տեսանք մի խումբ հաբեշներ, որոնք բարձրաձայն վիճում էին: Մեզ տեսնելուն պես դադարեցրին իրենց վեճը և ձայն տվին. «Հայլե Հելեսի ամլակ», որ նշանակում է «Հայլե Սելասիե թագավորի անունով կանգնեցեք»: Մենք, իհարկե, այդ խոսքերի իմաստը չհասկացանք, սակայն մեզ ընկերացող Թադեվոս Չալդրճյանը, որ տեղական լեզվին և բարբերուն ծանոթ էր, բացատրեց, որ պետք է կանգնել և նրանց դատը տեսնել: Զարմանալի բան. մենք ոչ դատավոր ենք և ոչ էլ պետական պաշտոնյա, այնուամենայնիվ ստիպվեցինք կանգնել և լսել նրանց վեճը, որ շատ հետաքրքիր էր մեզ համար: Նրանք ձեռքերով, ոտքերով շարունակ խոսում էին և վիճում: Ադիս-Աբեբայում սպիտակամորթներին մեծ հարգանքով էին վերաբերվում և նրանց տված վճիռը շատ կարևոր էր տեղացիներու համար: Մենք լսեցինք նրանց բողոքը Չալդրճյանի թարգմանությամբ և հաշտեցրինք միմյանց հետ: Վերջապես

խոտվաբարները երկուստեք ձեռք տվին և հայտնեցին մեզ իրենց երախտագիտությունը: Նման դատական փոքրիկ դեպքեր ամեն քաղաքոսում տեսնում էինք. եթե այդ վեճերը չէին կարգադրվում անցորդ սպիտակամորթների ջանքերով, նրանք ի վերջո դիմում էին քաղաքային դատարանին:

Եթովպիո կառավարությունը չէր միջամտում օտարազգի մարդկանց ներքին խնդիրներին, նա զբաղվում էր միայն իր երկրի ժողովուրդով: Օտարերկրացիների գործերով զբաղվում են դեսպանները, որոնք գտնվում են մայրաքաղաքից դուրս՝ իրենց սեփական բնակարաններում: Հայերի խնդրով զբաղվում էր ֆրանսական դեսպանատան մեջ եղած մի հայ լիազոր:



Երկարատև թատերապույտներից հետո կրկին այցելեցինք Բոմբեյ, Կալկաթա: Այդ օրերին պատահած էր մի անախորժ դեպք: Կալկաթայի ճեմարանի ուսուցիչներից մեկը՝ Վարդանյան ազգանունով (որին կանչում էին պրոֆեսոր Վարդըն), որպես ֆրանսերեն լեզվի գիտակ, թերթում հայտարարած էր, որ ինքը բելգիացի պրոֆեսոր է և պատրաստ է հաճախելու բնակարաններում լեզվական դասեր ավանդելու համար: Մի հոլանդացի ընտանիք հրավիրում է նրան՝ երեխաներին լեզու դասավանդելու: Անցնում է հինգ-վեց ամիս: Խաներին լեզու դասավանդելու: Անցնում է մի ծանոթ հայի բնակարան, նույն հոլանդացին այցելում է մի ծանոթ հայի բնակարան, որտեղ պատահում է պրոֆեսոր Վարդընին: Ծանոթություն է. «Ի՞նչ էլ ծանոթ եք պրոֆ. Վարդընին»: Ծանոթերը պատասխանում է, «Ի՞նչպես չէ, պրոֆեսոր Վարդան-

յանը հայ է և իմ երեխաներիս դասատուն»։ Հուլանդացին գառնալով Վարդանյանին, ասում է. «Ուրեմն դուք հայ եք եղել, շատ ուրախ եմ. խնդրում եմ վաղն ինձ այցելեք, կարևոր խոսելիք ունեմ»։

Երկրորդ օրը Վարդանյանը այցելում է հուլանդացու բնակարանը. տանտեղը սրտենդած ասում է նրան. «Յավում եմ, որ ինձ խաբել եք, և վեց ամսից ի վեր մտել եք իմ բնակարանը որպես բելգացի, դուք սխալված եք, ես հային ավելի եմ հարգում։ Վերջապես ի՞նչ պատճառ կար ծածկելու ձեր ազգությունը»։

Վարդանյանն զգալով իր սխալ ընթացքը՝ ներողություն է խնդրում և հեռանում։

Բոմբեի միջավայրին արդեն ծանոթ էինք։ Այս անգամ որոշեցինք անցնել հնդկական կինոստուդիաները, որտեղ պատրաստում էին համր ֆիլմեր։ Այցելեցինք «Իմպերիել ֆիլմ կոմպանի»-ին, տեսնվեցինք տնօրինության հետ, առաջարկեցինք մեր ծառայությունը։ Տնօրենն անմիջապես կանչեց զլխավոր ղերասանուհուն, որի անունն էր Ռուրի Մայերս։ Նրա հետ փոքր խոսակցելուց հետո ասաց. «Առաջիկայիս մի ֆիլմ պիտի պատրաստենք՝ «Կինգ օֆ Ինդիա» անունով, որի մեջ ձեզ համար հարմար գեր կա։ Այդպես էլ եղավ։ Ես և տիկինս մասնակցեցինք այդ ֆիլմին, հնդիկների կողմից մեծ գնահատում ստացանք և մտերմացանք Ռուրի Մայերսի հետ։ Այդ դերասանուհին շատ սիրված էր ժողովրդի կողմից։

Ռուրի Մայերսի ընկերակցությամբ մի օր գնացինք Բոմբեի ամենանշանավոր մարաշաներից մեկի ղղակը։ Մեզ ընդունեցին սիրալիք և ցույց տվեցին իրենց բնակարանը։ Տեսանք հնդկական ինքնահատուկ գործիքներով մի մեծ նվա-

գախումբ՝ աղգային տարազներով։ Այցելեցինք նույնպես հարեմը, տեսանք ընտրյալ գեղեցկուհիներ։ Նրանք հագնված էին թանկարժեք շղարշյա տարազներ և կարծես երկնային փերիներ լինեին։ Ի հարգանս մեզ, մարաշան հրամայեց նվազել մի պարեղանակ։ Եվ հանկարծ երևացին մի խումբ պարուհիներ, մեկը մյուսից գեղեցիկ և զրավիչ, ինքնահատուկ շարժումներով և նազանքով պարեցին և մեծ հաճույք պատճառեցին մեզ։

Հնդկաստանի հայ զաղութներում կրկնակի համերգներ և ներկայացումներ տալուց հետո մեկնեցինք Պարսկաստան։

Թեհրանում 1934 թ. մեր առաջին համերգը տալուց հետո, պատրաստվում էինք «Աշուղ-Ղարիբ» օպերետը ներկայացնել «Նիբուհի» թատրոնում։ Ճիշտ այդ ժամանակներում Թեհրան ժամանեց Սովետական Միության ժողովրդական արտիստ, հայտնի ողբերգու Վահրամ Փափազյանը, որ պիտի ներկայացներ հանրաժանոթ «Օթելլոն» և «Երկաթե մարդը»։ Նրա ժամանումը մեծ ոգևորություն պատճառեց թատերասեր ժողովրդին և մասնավորապես մեզ։ Շատ անգամներ լսած էինք նրա հուշակավոր «Օթելլո»-ի մասին, սակայն առիթը չէր ներկայացած անձամբ տեսնելու։

Եվ ահա Թեհրանում տեսանք նրա փայլուն արվեստը. հասարակությունը հափշտակված ծափահարում էր նրա հրաշակավոր Մավր-ը, որն իր տեսակին մեջ եղակի երևույթ էր։ Թատերասրահում մի քանի շաբթե մեղանից հետո նստած էր մի դերասան՝ Մ. Մ. իր կնոջ հետ, ամբողջ սրահը թնդում էր ծափերով, մեր ուշադրությունը զրավեց այդ դերասանի անտարբեր վերաբերմունքը, նա ձևորը ձեռքին չէր խփում, զոնե ամաչիւր իր շրջապատից, ինչպես որ մենք նկատեցինք, ու-

րիշներն էլ նկատեցին և արհամարհեցին: Պատճառը այն էր, որ իբր թև ինքն էլ «Օթիլո» խաղացողներին է: Ի՞նչ մեծամտություն... Ներկայացումի վերջավորության ես և տիկինս շերմորեն շնորհավորեցինք վարպետին: Տաղանդավոր արվեստագետներից միակն է, որ ներկայիս ապրում է: Հաջորդ մեր ներկայացումը եղավ «Անուշ» օպերան: Որի մասին հայ մամուլը արձագանքեց նվերով՝ արժեքավոր տողերը: Վերադարձանք Նոր Զուղա, այստեղ ունեցանք կրկին մի համերգ:

1936 թվականի վերջերն էր: Հնդկաստանից մեկնեցինք Իտալիա, և ապա Ավստրիա: Վիեննայում ունեցանք մի բացառիկ համերգ, որի մասին արձագանքեցին հայ թերթերը: Մի երիտասարդ վանախանի ընկերակցությամբ այցելեցինք Մխիթարյանների զբոսայրան-թանգարանը, որն իր ճոխությամբ հիացմունք պատճառեց մեզ: Մանոթացանք տնօրինության ավագ պաշտոնեության հետ: Գերապայծառը հետաքրքրվեց մեր գործունեությամբ: Ես ցույց տվի իմ ալբոմը: Նա հետաքրքրությամբ թղթատեց և առաջարկեց, որ ալբոմը հանձնենք իրենց, միևնույն ժամանակ ասաց. «Ձեր գործը արտակարգ արժեք կներկայացնե սփյուռքի հայության համար, և երբեք չի կարելի համեմատել շատ մը հարուստների բարեսիրական գործերի հետ: Գուր ձեր երիտասարդությունը նվիրել եք հայրենասիրական մեծ գործին, տարածելով հայ երգն ու մշակույթը երկրն երկիր»:

Հայտնեցինք, որ դեռ պիտի շրջենք, մինչև որ հայրենիքից արտոնություն ստանանք վերադառնալու: Մեր ալբոմը պիտի հանձնենք Սովետական Հայաստանի Թանգարանին: Եվրոպական հայ գաղութներում կրկնակի համերգներ և ներ-

կայացումներ տալուց հետո, անցանք Անգլիա, Լոնդոնում և Մանչեստրում նույնպես ունեցանք կրկնակի համերգներ, 1939 թվին Բրադլիթայի դեսպանատնից վերցնելով անցազր, մեկնեցինք Ռիո-դե-ժանեյրո: Այնտեղ մի քանի ժամից պարզ դարձավ, որ հայկական գաղութ գոյություն չունի, ընդամենը մի քանի հայ ընտանիք կա: Մեր նավը մեկնեցավ Սանթոս՝ երկրորդ նավահանգիստը Բրադլիթայի, և որտեղից երկաթուղու ճանապարհով հասանք Սեն-Պավլո՝ բրազիլյան արդյունաբերության կենտրոնը, որտեղ կար աչքի ընկնող հայ գաղութ՝ դպրոց, եկեղեցի և ակումբներ: Հայության մեծ մասը եկած են Միրիայից և Լիբանանից:

Սեն Պավլոյում հին ժանոթների հանդիպեցինք, որոնք մեզ գիմավորեցին և իրենց ձեռքից եկած բարոյական օժանդակությունը անշահախնդրորեն ցույց տվեցին, կազմակերպեցին մեր համերգը. Ս. Պավլոյի քոնսերվատորի սրահում ալվինք մի քանի ներկայացումներ:

Սեն-Պավլոյից հետո անցանք Սանթոս կոչված նավահանգիստը և այնտեղից էլ Իտալական նավով մեկնեցինք ուղղակի Բունեսու-Ալբես (Արգենտինա): Մեր առաջին համերգը տեղի ունեցավ Կանանց Խորհրդի թատերասրահում 1940 թվականի հունիսի 22-ին: Ներկա էր բովանդակ հայ գաղութը իր վարչական կազմով. մեր երգերը գտան չերմ ընդունելություն, գաղութի նախագահ տիար Արմեն Բերկամալին և իր շրջապատը այնքան ոգևորված էին, որ ծափերու տարափի տակ մեր երգերը կրկնության արժանացան:

Ո՞վ գիտե, թերևս այս չերմ ընդունելությունն էր պատճառը, որ դրոց մեզ մշտական բնակություն հաստատել Բունեսու-Ալբեսում:

Հայ երգիչ դերասաններու՝ տեր և տիկին Հայկ-Արծիվի առաջին
երգահանդեսը Բուենոս Այրեսում

Հրատարակված «Նարժում» քերթում

Գրեց՝ Հ. ԳՐԸՅԱՆ

Սույն երեկույթ-երգահանդեսը տեղի ունեցավ
22 հունիսի 1940 թ. շաբաթ գիշեր, ժամը 10-ին «Սալոն
տէ Արթոս տէլ Գօնսէխո տէ Մուխէրէս»-ի մեջ, ուր
փութացած էր գեղարվեստասեր ընտրանի բազմու-
թյուն մը:

Գեղարվեստական-երգահանդես մը նկարագրելու ա-
տեն, պետք է նկատի առնել քանի մը կարևոր հարցեր:
Երգիչ-դերասաններու մասին արտահայտվելիս առաջ
թող ներվի մեզ հարցնել եկեղեցական, կրթական և մշա-
կութային կազմակերպություններու, թե ի՞նչ նյութա-
կան և բարոյական զոհողություններ կատարեր է, ապ-
րեցնելու հայ երգիչը, հայ նվագաժուռն, հայ բանաստեղ-
ծը և վերջապես հայ թատրոնը մշակույթի բոլոր մասե-
րով: Հոս շարտի նկարագրենք այն հանգեսը այն կեր-
պով, ինչպես կ'նկարագրվեն գաղութիս այլ հանգեսները
իրենց բոլոր մանրամասնություններով, շոտյված գո-
վասանքներով կամ անիրավ քննադատություններով:

Երբ նկարագրությունը գեղարվեստական հանգեսի
մը մասին է և կ'ներկայացվի «Երգիչ-դերասաններու»
կողմեն, նկարագրել և զրիչ շարժել փափուկ խնդիր մըն
է և մասնադիտական հարց: Մեր նկարագրության միակ
նպատակն է հայ երաժշտ. արվեստին հավատարիմ ծա-

ռայողներուն (արվեստական նրբություն) ունեցող ան-
ձերու մասին քանի մը գնահատական համեստ խոսքեր
արձանագրել հոս: Հայտագիր բովանդակության մեջ,
նկատելի էին հետևյալ կետերը.

ա) Մշակված նվագի մը ներդաշնակությունը յուրա-
քանչյուր պատկերին և զգացումներուն խիստ հաջող
կերպով հարմարցված:

բ) Եվրոպական երգերեն մի քանի հատին երևումը
հայկական հայտագրի մը մեջ, տեր և տիկին Հայկ-Ար-
ծիվ յուրացուցած են արևելյան երգերուն մեջ: Դասական
երաժշտության շունչը խառնելու, նրբին արվեստը
թարմացնելու և կենդանացնելու երգերուն արտահայ-
տիչ մասերը, որոնք առանց արվեստի շունչին կ'մնան
տկար և անփայլ:

գ) Գերասան Հայկ-Արծիվի գեղարվեստական աշ-
խատանքի հանդեպ ցույց տված մանրակրկիտ պրպտո-
զական ոգին, թրթռուն տպավորիչ ձայնը, բեմին վրա
ունեցած լուրջ նայվածքներն ու հրապուրիչ շարժում-
ները, իր առնական կամբոտ հայաստանցի կեցվածքը,
երգած երգերուն մեջ, թաքնված կարտի, ցավի, հույսի
և պաշտումի զգացումները կը զորացնեն:

դ) Գերասանուհի տիկին էմմայի անուշ, հնչական և
ուժեղ ձայնը, մանավանդ հստակ առողանությունը եր-
գերու ելևէջներուն, ձայնի թեթևության և ուժգնության
ատեն ի հայտ կուղար, զուրչ և արթուն ոգիով:

Երբ տեր և տիկին Հայկ-Արծիվ միասին կերպեն,
մեզի այնպես կ'թվեր, թե սուսահայ և թե թրբահայ երգն

ու թատրոնը մեկ պսակի տակ կենդանի պատկեր մը կներկայացնենին:

Ե) Երգահանդեսին պ. Իվանով օտար զաշնակահարի մը հայկական երգերն ու եղանակները այնքան հարագատ զգացումներով նվագելը արդարև շնորհավորելի և գնահատելի է: Հայտադրին ամենեն ավելի սիրված երգերն ու եղանակները եղան հայկական Ֆանթեզին, «Շեկ տղա», «Նազ» և «Անուշեն» շուրջպար, «Ալազյազ», «Կայթարմա», «Սերը կույր է» և օտար երգերեն՝ «Լա Տոսրա» և «Մաղամ Բաթերֆլայ» երգերը: Շնորհավորելով երգիչ-գերասան ամուլը, կակընկալենք իրենցմե հայկական օպերետներու գեղեցիկ շարք մը, բազմապատկելու ներկաներու թիվը, ուսուցանելու հայ գեղարվեստի ժողովրդական ստեղծագործությունները, իրենց հարագատ պատկերներով, որոնք ավելի հետաքրքրական են թե՛ մեզի և թե օտարներուն: Գնահատենք թափված բոլոր ջանքերը և քաջալերենք մեր գեղարվեստագետները:

Հետագային կադմեցիներ մեր թատերախումբը. մշտապես մեր ներկայացումներին կմասնակցենին հետևյալ կարող արվեստասերները: Տիկնայք՝ Ն. Թոփաշյան, Զ. Բայաղչյան, Հ. Գույումջյան, Ա. Բողոզյան, Բ. Ղուկասյան, Հ. Լոմյուջյան (հուշարար), Հ. Քոնդակչյան (հուշարար) և ուրիշներ: Բունոս-Ալբեսում տված ենք մի շարք համերգներ և հաջորդաբար ներկայացրած ենք օպերետներ և թատերգություններ: Մասնավոր հրավերով մեկնեցինք Մոնտեվիդեո (Ուրուգվայ), որտեղ ու-

նենք նույնպես մի պատվական հայ զաղութ, որն ունի իր եկեղեցին, դպրոցը, ակումբները, երկու ռազիոժամ, որոնցից աչքի է ընկնում ռազիո Արմենիայի հաստատությունը, որը երկար տարիներ կգործե ղեկավարությունաբ տիար Հարություն Ռուրիչյանի. նա մեծ զոհողություններով պահում է ռազիոժամը և սիրահոծար նպաստած է հասարակական, գրական և ընդհանրապես ազգօգուտ ձեռնարկներին: Ռուրիչյանը միևնույն ժամանակ հանդիսացած է ջերմ համակիր սովետական Հայաստանին: Մոնտեվիդեոյում առաջին առթիվ ունեցանք մի համերգ «Ինստիտուտ Վերդիի» սրահում: Կմասնակցեր հայտնի մասետրո զաշնակահար Մուխիկան իր նվագախմբով: Հաջորդաբար ներկայացրինք «Հարսանիքի նվեր» օպերետը: Ռազիո Արմենիայի առաջարկի վրա իր վեցերորդ տարեկիցի առթիվ ունեցանք մի բացառիկ համերգ, որի արձագանքը լավեց բովանդակ Ուրուգվայում և Արգենտինայում: Հրատարակվեցին մեր լուսանկարները տեղական ռազիո ժուռնալներու մեջ:

«Ս—42 Տրիբունա Մոնոա» ռազիոկայանից հաղորդում են. Մոնտեվիդեոյի հայություն համար անակնկալ մեծ ուրախություն պատճառեց հանրաժանութ արտիստներ Հայկ և Էմմա-Արծիվների ներկայությունը: Նրանք երգեցին «Ռազիո Արմենիայի» 6-րդ տարեդարձի առթիվ: Գրամատիկ դերասան Հայկ-Արծիվ (տենոր) և իր կինը՝ Էմմա-Արծիվ արտիստ—լիրիկական սոպրանո: Այս երկու անվանի արտիստների շնորհիվ հայ երգն ու երաժշտությունը գրավեց երգասեր ժողովրդի ուշադրությունը և հիացմունք պատճառեց: Նույն համերգի մասին գրում է «Ռազիո Արմենիայի» տնօրենը. «Ռազիո

Արմենիայի» պատմության մեջ ամենահիշատակելի և փառապանծ թվականներեն մին եղավ իր 6-րդ տարելիցը, ուր արժեքավոր և գնահատված արվեստագետներ Հայկ և յուր համակրելի տիկին էմմա-Արծիվ իրենց գոհար և հոգեզմայլ մեղեդիներով արդարացուցին սույն տարեդարձին հայ երաժշտության արվեստի տոն կոչվելու արժանի ըլլալը: Ասիկա հիշատակն է այն մեծ տոնին, զոր Հայկ և էմմա-Արծիվ զարդարեցին իրենց զմայլելի արվեստով, անուշ երգերով և հոգեկան քնքուշ ապրումներով, պանծացնելով միաժամանակ «Ռադիո Արմենիայի» 6-րդ տարելիցը և հայ երաժշտական արվեստի մեծ տոնը:

2. Ռուբինյան

1918 թվին Արգենտինա ժամանած է տարագիր եղած հայերի մի մեծ խումբ: Ներկայումս Արգենտինայում կգտնվի մոտ քառասուն հազար հայություն: Մեծագույն մասը հաստատված են Բուենոս Այրեսում՝ մայրաքաղաքում: Հայերը իրենց մաքուր նկարագրով և ուղղամիտ գործելակերպով սիրված և հարգված են տեղացիներու կողմից: Հայության մեծ մասը արհեստավորներ են, կան նաև աչքի ընկնող վաճառականներ: Վերջին տարիներս կրկնապատկվեց մտավորականների թիվը:

Բուենոս Այրեսի Ասավեդո— 1353 (փողոցի վրա դտնվում է հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը հիմնված է Հրանտ Նիկողոսյանի նյութական միջոցներով և կառուցված է հայտնի ճարտարապետ Ի. Ասլանի գեղարվեստական նրբին ճաշակով: Եկեղեցու շրջապատի մեջ կգտնվի Ասլանյան Ազ-

գային վարժարանը, և նույնպես թատերասահը, որն իր մեջ կպարունակե մոտ 560 աթոռ և 40 օթյակ, սրահը վարձու է սրվում ոչ միայն հայերին, այլ նաև օտարներին, որտեղ տեղի են ունենում ներկայացումներ, պարահանդեսներ և ազգային ձեռնարկներ: Բուենոս Այրեսի շրջաններում (Վիսենթե-Լոբես, Լանուս, Լինեսս, Ֆլորես, Բուենոս Այրինե), հայությունն ունի իր դպրոցները, որոնք ենթակա են հայ կենտրոնին: Մխիթարյանները նույնպես վերջին տարիները հիմնեցին գպրոց, օգնությունք աչքառու հայ հայրենակիցներին:

Բուենոս Այրեսի հայ գաղութի երկարամյա նախագահը եղած է տիար Արմեն Բերգամալին. լրջախոհ, հեռատես, կոռեկտ, ազդասեր այս անձնավորությունը մեծ ժողովրդակա-նություն է վայելում. նա սիրված է և գնահատված նաև օտար բարձր շրջանակների կողմից: Նույն Բերգամալին իր անբասիր նկարագրով և փորձառությունով օգտակար հանդիսացած է հայ գաղութին և ի հարգանք իր անձին, նախագահական թեկնածությունը վերապահված է նրան: Տիար Բերգամալին միևնույն ժամանակ տնօրենն է Բագրջյան առևտրական մեծ հաստատության: Բագրջյան տան տեր և տնօրենը Մարկո Բագրջյանը, բնակվում էր Անգլիայում, Մանչեստր քաղաքում, չնայած իր նյութական բարձր դիրքին, նա մեծ հիացող էր Սովետական մեր հայրենիքին և քանիցս անգամներ այցելած է Մոսկվա և առանձնապես տեսակցած է Ա. Միկոյանի հետ: Մ. Բագրջյան բացառիկ անձնավորություն էր իր մարդասիրությամբ, նա նման չէր այն հարուստներին, որոնք իրենց նյութականից զատ ուրիշ ոչինչ չէին հասկանում: Բագրջյանի արած բարիքների մասին ուրիշներն էին խոսում, ինքը լուռ էր և գաղտնորեն օգնում ուսանողներին և ազգային կարիք-

ներին հասնում: Վերջին տարիներս լսեցինք նրա մահվան լուրը, որը մեծ կսկիծ պատճառեց սփյուռքի հայությունը: Բուենոս Այրեսի հայության մեծ մասը անգամ են հայ կենտրոնին, անգամ էինք նաև մենք: Ուլքեր անդամ էին կենտրոնին, նրանք միայն իրավասու էին քվեարկելու վարչական կազմը ընտրելու ժամանակ: Կենտրոնի վարչական կարևորագույն անգամներն են տիրաք Ա. Բերգամալի, Գ. Սարաֆյան, Հ. Թախթաջյան, Օ. Փանոսյան, Իս. Բախչեչյան, Հ. Տիգրանյան, Հ. Արարյան, Ե. Բայրամյան և ուրիշներ, որոնք վախելում են ժողովրդի համակրանքը:

Հայ կենտրոնին ենթակա է Տիկնանց օժանդակ Հանձնախումբը, որը տարին երեք անգամ հանդեսներ կկազմակերպի ի նպաստ հայ կենտրոնի կարիքներին և միևնույն ժամանակ կճգա Կորգորա քաղաքի մեջ հաստատված Ազնավուրյան ապարինարանի ծախսերը:

Բուենոս Այրեսում կա հայ ազբատախնամ մարմին, որը ենթակա է հայ կենտրոնին: Կան նաև Տիկնանց Կարմիր Խաչի Միություն, որը կգործե անկախ: Քաղաքում գոյություն ունի Հայոց Բարեգործական Միության մասնաճյուղը և Լիգա Երիտասարդաց միությունը, որ կգտնվեն տիրա Հայկազ Սարի Գույումջյանի շենքում՝ Հայոց եկեղեցու դիմաց: Լիգա երիտասարդաց միությունն ունի իր սրահը, որտեղ տեղի են ունենում զեղարվեստական հավաքույթներ, զրական ասուլիսներ և նկարչական ցուցահանդեսներ: Տիրա Հայկազ Սարի իր շենքը երկար տարիներ տրամադրած է ազգասիրարար: Մեր առաջին համերգից հետո նույն Հայկազ Սարին ինքնարերարար լուր ուղարկեց մեզ, հայտնելով՝ որբան ժամանակ որ Բուենոս Այրեսում ներկայացում ունենաք, շմուռնաք իրեն

համար վերապահել մի օթյակ: Այս զեղարվեստների կեցվածքը գրավեց մեր ուշադրությունը, ծանոթացանք նրա հետ և հայտնեցինք, որ մենք եկած ենք Արգենտինա, որպես տուրիստներ և ուզում ենք Բուենոս Այրեսում հաստատվել, և սակայն դժվարությունների մեջ կգտնվինք: Միևնույն ժամանակ բնակարանային խնդրո շուրջ երաշխավոր է պետք: Տիրա Հայկազ-Սարին մի քանի օրվա մեջ կարգադրեց մեր խնդիրները: Այդ մարդասեր անձնավորությունը ոչ միայն մեզ հանդես բարի գտնված է, այլ նաև շատերի հանդես: Տիկնանց միություն պատվո նախագահուհին միշտ եղած է տիկին Մարթա Գիարբեբիրյանը, մի բացառիկ հարգված անձնավորություն:

Տիկնանց միությունը պատերազմի տարիներին ուներ իր կարանոցը հայ կենտրոնի առանձնասրահում, որտեղ հավաքվում էին տիկիներ և օրիորդներ, շաքաթը երկու անգամ աշխատում էին: Այդ կարանոցին տիկինս էլ էր մասնակցում երեք տարի շարունակ, անշահախնդրորեն: Կարանոցում պատրաստում էին զգեստներ, հյուսվածքներ և ուղարկում պատերազմի աղետյալներին, Եվրոպա՝ Հունաստան և այլուր: Տիկին Մարթա Գիարբեբիրյան կտորեղենները բերում էր որպես նվեր իր կողմից և ինքը նստում էր մեքենայի առաջ, լավ բանվորի նման և ամենից շատ էր աշխատում:

Արվեստի դժով Բուենոս-Այրեսում հայտնի էր ջութակահար կովկասահայ Աղաբարյանը, որը երկար տարիներ եղել է մենանվագիչ Բուենոս Այրեսի «Քոլոն» օպերայի օրկեստրին, և վախճանված է 1948 թվին: Հրանտ Գյրճյան՝ երաժիշտ-ուսուցիչ, որը անցյալում եղած է Ասյանյան ազգային վարժարանի տնօրեն (նույնպես վախճանված): Կան նաև սկանակ երաժիշտներ:

Նկարիչներից աչքի է ընկնում պրոֆեսիոնալ արվեստագետ Ալվադյանը և ուրիշներ:

Գաղութում լույս են տեսնում հայկական թերթեր. «Հայ մամուլ», առաջադիմական օրգան, որն իր շանքերը չի խնայում հայրենիքի համար. նույնպես «Շարժում»—Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության օրգանը: Հայ կենտրոնը ունի իր շաբաթաթերթերը, կան նաև «Հաճըն» և «Մարաշ» հայրենակցական միությունների ամսագրերը:

Բուենոս Այրեսի հայության մեծ մասը մարաշեցի և հաճընցի հայրենասերներից են կազմված, որոնք ունին իրենց սևփական ակումբները, կազմակերպում են հավաքույթներ, պարահանդեսներ և ասուլիսներ: Ռամոն-Մելխիա արվարձանում հաստատված է հայ Մարմնամարզական միությունը, ունի իր ընդարձակ դաշտը և ակումբը: Երիտասարդությունը զբաղվում է սպորտային զանազան խաղերով: Հայոց եկեղեցին ունի իր երգչախումբը, որը կկոչվի Կոմիտասի անունով. կա նաև ժողովրդական երգչախումբ Արամ Նաչատրյանի անունով:

Բուենոս Այրեսում, ինչպես ամեն տարի, նույնպես 1946 թ-ին, նոր տարվա առթիվ մի խումբ պանդուխտ հայերս մի կրկիտ հավաքված էինը հայրենակարոտ մի հայրենակցի բնակարանում և սրտատրուփ սպասում էինը ժամացույցի 12 դարկին, որպեսզի մեր վշտերն ու ցավերը հանձնենք անցնող տարվան և ուրախանանք նոր գալիք տարվա համար: Ամեն նոր տարի, նոր հույզերով, նոր հույսերով կապասեինք՝ արդյոք գալու՞ է մի բացառիկ նոր տարի, որ օտարության մեջ դեզերող հայ մարդը կարողանա վերադառնալ իր նոր հայրենիքը՝ Սովետական Հայաստան, փայփայելու հարազատ մաշր հողը

և մասնակցելու նրա վերելքին, լծվելու հայրենասիրական մեծ գործին: Իմ մուսան այդ օրը ինձ մեծ հույս էր ներշնչում, փշրված քնարով ես երգում էի դալող նոր տարին, նոր հույսերով ու ապրումներով:

Միշտ մալլ, հուլված, տխուր, երազկոտ
Տարիներն անվերջ գալիս են գնում,
Չեն բուժում երբեք մեր վերքերն արևոտ,
Կրկին հուսաբեկ գալիս են գնում...

Մեծանոր տարին ի՞նչ է բերելու, ժպտուն նոր օրե՞ր,
Թե՛ դառն հայացքով փշրել նեղ սրտեր,
Նա միշտ գալիս է տխուր ու անցնում,
Խեղճ մարդկանց սրտերը կրակով լցնում:

Ահա նոր տարին, գալիս է, գալիս,
Շատերն են ծիծղում, շատերն են լալիս,
Մեր վշտոտ սրտին, երբեք չի խոսում,
Բանի հայերս ենք, պանդուխտ ու անտուն...

Հույսով չի այսպես տոնում ենք կրկին,
Տխուր թե ուրախ գալող նոր տարին,
Մեր հայ աշխարհին ու սիրելիներին,
Մաղթում ենք սրտանց ուրախ ու բարին:

1948, Բուենոս-Այրես:

«Անուշ»-ը Բուենոս Այրեսի մեջ

1942 թ. ապրիլի 25-ին Հայ կենտրոնի թատերասրահի մեջ, հանրածանոթ երգիչ-դերասաններ Հայկ և Էմմա-Արծիվները՝ մասնակցությամբ մի խումբ արվեստագետներու՝ ար-

տակարգ հաջողութեամբ ներկայացրին Հ. Թումանյանի «Անուշ»-ը Արգենտինայի մեջ, առաջին անգամ, որպէս օպերա, «Անուշ»-ի երաժշտ. հիմքը հեղինակութունն է հայտնի երաժշտագետ Ա. Տիգրանյանի, իսկ ներկա օպերայի լրացուցիչ մասը իր գունագեղ, ներդաշնակ երաժշտութեամբ հղացումն է Հայկ-Արծիւի, որու համար ջերմապէս կշնորհավորենք: Անուշի պատասխանատու, դրամատիկ նուրբ գերով էմմա-Արծիւ ի հայտ եկավ առաջնակարգ արվեստագիտուհու գնահատելի ձիրքերով: Նա իր դաշն և ախորժալուր սուպրանոյի շքեղ ձայնով երգեց և ապրեցավ «Անուշ»-ի ցավատանջ անմեղուկ կյանքը, իր երզը հանգուցն էր խորտակված սիրո: Նա կը բողբեր իր դառն ճակատագրի դեմ, խոր հառաչանքով կը պատմեր ընկերուհիներին իր մանկութեան շարագուշակ դերվիշի անեծքի և զուգընթաց վատ վիճակի մասին. «Ուռնի» երգը պատկերացումն է վաղամեռ սիրո: Սարսուղ-ղեցիկ էր խելագարութեան տեսարանը: Տիկին Արծիւ որքան օժտված է հնչական քաղցր ձայնով, միևնույն ատեն եղակի երգուհի է երգի բառերը հստակորեն արտաբերելու մեջ և նույնքան էլ կատարյալ է դրամատիկ արվեստի մեջ:

Հայկ-Արծիւ, Հայաստանի «կոմիս» սարերու այդ կտրիճ-Սարոն, իր առաջին «Աղջի անաստված» երգով այնքան զրավիչ էր, որ իր աննորի քաղցր գունավորումով հիացում պատճառեց ներկաներուն և արժանացավ անվերջ ծափերու: Սարոյի և Անուշի գիշերային փախուստը խիստ բնական էր և տպավորիչ:

Գեղանի զույգը իրենց զմայելի մեներգներով-զուգերգներով արժանացան գեղարվեստասեր հասարակութեան անվերապահ հիացմունքին: Սարոյի մահերգը, «Բարձր սարեր»

խիստ հուզումնալից էր: Հայկ-Արծիւ իբրև հմուտ և բազմակողմանի հատկութուններով օժտված արվեստագետ, «Անուշ»-ի մեջ իր երևումները երգով և դերակատարութեամբ գերազանց էին:

Աղավնունի»



Վրա հասավ երկրորդ համաշխարհային պատերազմը: Անհանգիստ ու սրտատրոփ հետևում էինք օրվա լուրերին և լավատես էինք մեր հայրենիքի հաղթանակի համար: Այդ օրերին Բուենոս Այրեսում ցուցադրվեց սովետական մի նոր ֆիլմ: Մի քանի ընկերներով գնացինք տեսնելու այդ շարժանկարը: Ծա նայում էի և հպարտանում իմ հայրենիքի կտրիճ ժողովրդով: Երկու անգամ դիտեցի կինոնկարը՝ մասնավորապէս ներքոհիշյալ երգի բառերը սովորելու և եղանակը ձայնագրելու համար:

Կամենում եմ ձեր ուշադրութեանն հանձնել հիշյալ քայլերգի իմ հայրենի թարգմանութունից մի հատված.

Պատերազմ թե՛ ծագի,
Թշնամին հարձակի,
Մութ ուժեր սպառնան
Մեր երկրին...

Սովետական ազգեր
Մեկ հոգի, մեկ մարմին,
Ազատութեան համար
Պիտ կռվին...

Թե հողում, թե ծովում,
Թե երկրում,
Մեր երգն է խիստ ազդու,
Մոլեգին...

Եթե վաղը կտիվ,
Եթե վաղը մրդեն,
Պատրաստ այսօր դու,
Վաղվա կովին:

Սույն քայլերը ուղարկեցինք Հյուսիսային Ամերիկա՝ հայկական թերթերին, «Լրաբեր»-ին և «Պայքար»-ին, որտեղ հրատարակվեց: Հիշյալ քայլերը քանիցս երգած էինք Բուենոս Այրեսի հայ կենտրոնում մեր համերգներին, և ժողովրդականացված:

Այդ տխուր օրերին ես տեսնում էի, որ իմ շրջապատի հայրենասերները հուսահատության մեջ են ընկնում, երբ հիալերականները մոտենում էին Մոսկվային և Վոլգոգրադին: Սակայն մենք մեծ հավատք ունեինք մեր հայրենիքի հերոս ժողովրդի վրա և հաղթանակին չէինք կասկածում: Ես աշխատում էի հույս ներշնչել մեր շրջապատին, իմ համեստ ֆերթվածներով ոգևորում էի շատերին:

Չա՛րկ, Կարմիր բանակ,
Թող քո վարկի տակ
Իսպառ կործանվի
Նացիզմն այլանդակ...

Մենք լսում էինք Սովետական Միության հանձարեղ զորավարների բազմաթիվ անուններ, նրանց գերազանց սխրագործությունների մասին և հպարտությամբ լցվում... Հիշում

և՛մ հայ խիզախ օդաչու, Սովետական Միության կրկնակի հերոս, գնդապետ Նելսոն Ստեփանյանի անունը, նույնպես Սովետական Միության հերոս Մարշալ Հովհաննես Բաղրամյանի, ծովակալ Հովհաննես Իսահակյանի, բանակի զորավար Գինոսյանի և նման հերոսների անուններ: Այդ օրերում պատահմամբ ձեռքս անցավ Սովետական Հայաստանի անվտանգ բանաստեղծ Նաիրի Զարյանի մեկ ֆերթվածը՝ ուղղված Սովետական Բանակի զորավար Հովհ. Բաղրամյանին: Այդ անունը վաղուց մեր սրտերում տեղ գրաված էր, և ահա հենվելով այդ ֆերթվածին, ես հղացա զինվորական մի քայլերգ և ձոնեցի Սովետական Միության հերոս Հովհաննես Բաղրամյանին, նրան մարշալ կոչելով, թեև այն ժամանակ նա դեռ մարշալ չէր: Հիշյալ քայլերը հրատարակեց տիկինս, ղժվարին պայմաններում, և տարածեցինք արտասահմանյան երկրներում:

Երբ պատերազմը վերջացավ և մեր հայրենիքը հաղթանակով դուրս եկավ, իմ և կնոջս ուրախությանը շափ ու սահման չկար: Վերջապես շար նացիզմը խորտակվեց և մենք բախտը պիտի ունենայինք վերադառնալու մեր մեծ հայրենիքը, Սովետական Հայաստանը: Այդ ժամանակ ես հղացա հայրենիքի հաղթանակի առթիվ «Յնծա՛, երկիր» բանաստեղծ Սարմենի տեքստով ֆայլերգս:

1948—49 թվականներին Բուենոս Այրես ժամանեց կինոարվեստի աշխարհահռչակ ռեժիսոր Ռուբեն Մամուլյանը: Արգենտինյան բովանդակ մամուլը արձագանքեց այդ փաստին և արվեստի պատկանող բոլոր կազմակերպությունները ջերմ հարգանքով դիմավորեցին նրան և ճաշկերույթ տվին ի պատիվ մեծ հյուրի: Մամուլյանի այցը մեծ խանդավառու-

թյուն ստեղծեց նաև հայ գաղութի մեջ: Հայ կենտրոնի վարչությունը իր հերթին արժանավայել կերպով ընդունելություն ցույց տվեց: Մասնավոր մի հրավերի ժամանակ Ռուբեն Մամուլյանը շեշտեց, պետք է իրար սիրել, գուրգուրել, օտար երկրներում գտնվող հայությունը ենթակա է ձուլման: Նշեց, որ շատ միություններ ունենք, բայց մեզ պետք է միայն մեկ միություն, մեկ սիրտ, մեկ հոգի: Փոթորկալից ծափերով բնագունվեց նրա խոսքը:

Հաջորդ կիրակի օրը Մամուլյանն այցելեց եկեղեցի՝ ունկընդրելու հայկական պատարագը: Հոծ բազմություն էր հավաքվել. շատերը արվարձաններից էին եկել՝ տեսնելու Մամուլյանին: Երբ եկեղեցուց դուրս էինք գալիս, Մամուլյանին պարզեցի մի ծրար, որ ստացել էի հեռավոր իմ հայրենիքից. վրան կար մի դրոշմաթուղթ գծված Արարատի պատկերով և մեքրուպյան տառերով գրված էր. «Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն»: Նա ժպտաց, երկար նայեց, հուզվեց, երևի հայրենիքի կարոտից: Նույն դրոշմաթուղթը ցույց տվի շրջապատիս, որոնք ձեռքի ձեռք խլելով նայում էին հիացած: Մամուլյանը մի քանի օր ևս մնաց Բուենոս Այրեսում և ապա մեկնեց Հյուսիսային Ամերիկա:

Մի առժամանակ հետո հայ գաղութը կրկին ուրախության մեջ էր: Այս անգամ հյուրը հայրենիքից էր՝ հայտնի շախմատիստ Տիգրան Պետրոսյանը: Ես և տիկինս մասնավոր այցելեցինք այն հյուրանոցը, որտեղ իջևանած էին Սովետական Միության շախմատիստները: Այդ համեստ, շնորհալի երիտասարդը մեզ վրա լավ տպավորություն թողեց:

Հայ մշակութային միության նախաձեռնությամբ հրավերեցին Տիգրան Պետրոսյանին հայ կենտրոնի սրահը՝ ժողո-

վըրդին ծանոթացնելու համար: Առիթից օգտվելով բազմաթիվ հայեր հավաքվեցին սրահը և ծափահարեցին շախմատի մեծ վարպետին: Տեղի ունեցավ քաղցր խոսակցություն, որից հետո բեմում սկսվեց շախմատի խաղը, մասնակցությամբ տեղացի հայ շախմատիստների, որ կղեկավարեր ինքը Տիգրան Պետրոսյանը: Տեղն ու տեղը կազմվեց Տիգրան Պետրոսյանի անունով շախմատի խումբ:

Բուենոս Այրեսի հայության ուրախությանը սահման չբերեց: Տիգրան Պետրոսյանից հետո հայրենիքից եկավ աշխարհահռչակ երաժշտագետ Արամ Խաչատրյանը, որի անունը ծանոթ էր մեզ: Շատ անգամներ լսած էինք պետական ռադիոկայանից նրա հոգեզմայլ սիմֆոնիաները, անման «Գաղիոկայանից նրա հոգեզմայլ սիմֆոնիաները, անման «Գալանի» բալետը, նույնպես զաշնակի և շութակի կոնցերտները և հիացել: Բովանդակ արգենտինյան մամուլը, երաժշտական աշխարհը ցնծությամբ դիմավորեց հայ մեծ երաժշտագետին: Բուենոս Այրեսի «Քոլոն» օպերայի բեմից արգենտինյան սիմֆոնիկ օրկեստրը Արամ Խաչատրյանի մոգական ճիպոտի ներքո անմահացրեց իր երաժշտական գոհարները: Նախ քան նրա այցը Բուենոս Այրես, եկած էր Հյուսիսային Ամերիկայից հայտնի դիրիժոր մասետրո Արթուր Ֆիլլեր: Ղեկավարելով պետական սիմֆոնիկ օրկեստրը «Քոլոն» օպերայի բեմում՝ ունեցավ իր համերգները: Հայտագրի մեջ մեծ երաժիշտների շարքին կար նաև Արամ Խաչատրյանի «Գալանի» բալետից «Սուտերով պարը» և «Դիմակահանդեսի» վալսը, որոնք սիրվելով ժողովրդի կողմից և նրա պահանջով կրկնության ենթարկվեցին՝ խախտելով «Քոլոն» օպերայի ներքին կանոնագիրը:

Հրճվում էր հայ ժողովուրդը. հաշարավոր ազգայիններ

հավաքված էին կենտրոնի սրահը՝ տեսնելու Արամ Խաչատրյանին: Հայ կենտրոնի վարչությունը կազմակերպեց մի մեծ բանկետ ի պատիվ մեծ երաժշտագետի, որտեղ ներկա էր գաղութի ընտրանին:

Արամ Խաչատրյանի այցը դեռ թարմ էր մեր հիշողության մեջ, նրան հաջորդեց սիրված երգչուհի Զարուհի Գուլիսյանը, որին նույն ձևով և ուրախությունով դիմավորեց հայությունը:

1958 թ. օգոստոսին Ուրուզվայի կառավարության մասնավոր հրավերով, Մոնտեվիդեո ժամանեցին սովետական պետության ներկայացուցիչները, որոնց մեջ կգտնվեր Սովետական Հայաստանի Գերագույն սովետի նախագահության նախագահ Շմավոն Առուշանյանը:

Միջուրբահայ պատմության մեջ եղակի մի դեպք էր այդ, ո՞վ կարող էր երազել, կամ ո՞ւմ մտքից կանցներ, որ մի գեղեցիկ օր, մեր սիրելի Սովետական Հայաստանի պատվարժան նախագահը պիտի այցելեր Մոնտեվիդեո, հանդիպում ունենար հայ համայնքի հետ և ոգևորություն ներշնչեր հայրենակարոտ հայությունը:

Աչքեր պետք էր որ տեսներ, ականջներ պետք էր, որ լսեր, հայերի սերն ու բացառիկ համակրանքը հարգարժան հյուրի հանդեպ, որ անսահման էր: Մարաշի հայրենակցական միության ընդարձակ սրահը լցված էր հոծ բազմությունմբ: «Ծաղկիր, ազատ իմ հայրենիք» քայլերգով ժողովուրդը դիմավորում էր հյուրին: Շմավոն Առուշանյանը խոսեց Հայրենիքի ընդհանուր առաջադիմության մասին, արտակարգ ոգևորություն ստեղծելով շորս կողմը, տարազիր հայությունը

ջերմորեն դիմավորեց հայրենիքի նախագահին և իր սերը հայտնեց արցունքներով:

Նախագահի խրախուսական խոսքերը մեծ ոգևորություն ներշնչեցին բոլոր ներկաներին: Նա առաջին հայ պետական ղեմքն էր, որ ժամանեց նախ Բրազիլիա և ապա Ուրուգվայ: Արգենտինյան կառավարության ներքին քաղաքականության խառնաշփոթության պատճառով Շ. Առուշանյանը շայցեկեց Բուենոս Այրես և հայության մեծագույն մասը առիթը շունեցավ տեսնելու նրան: Այդ օրերում Մոնտեվիդեոյի և Բուենոս Այրեսի մեջ կարծես հաստատված էր մի կամուրջ և հայրենակարոտ հայ ժողովուրդը խուսնեբամ դիմում էր Մոնտեվիդեո, անձամբ տեսնելու արևաշող Հայաստանի նախագահին, լսելու նրա հայրենաշունչ խոսքերը, որ ամենքի սրտից էր խոսում: Լսվում էին ուրախության բացականչություններ, կեցցեններ, ժողովուրդը այնքան ոգևորված էր, որ կարծես բոլորը փոխադրվում էին մեր երազած Սովետական Հայրենիքը, Արարատյան աշխարհը, տեսնելու մայր Երևանը և նվիրվելու նրա հառաջադիմական մեծ գործին:

Մի օր ներկայացման փորձի պատճառով ցերեկը բացակայում էինք տնից, երեկոյան ուշ վերադարձանք: Դռան մոտ գտանք մի երկտող, որը ծանուցում էր մեզ այն մասին, որ մեզ արտոնված է վերադառնալ հայրենիք: Երևակայեցեք մեր ուրախությունը... Վերջապես մոտ էր այն պայծառ օրը, որ պիտի տեսնեինք մեր վերածնված Սովետական հայրենիքը: Երկրորդ օրն առավոտյան դեմ, առանց ժամանակ կորցնելու, ներկայացանք դեսպանատուն, տեսնվեցինք զրազրի հետ և ճշտվեց իրականությունը: Մի քանի օր հետո ստացանք սովետական քաղաքացիության անցագրերը: Եվ առանց ժամա-

նակ կորցնելու, պատրաստվեցինք ճամփորդության: Գեպի Երևան՝ մեր երազած Սովետական Հայաստանը, որի հետ հոգեպես միշտ կապված ենք եղել, գերադասելով մեր տեսած բոլոր երկրներից:

Հայ կենտրոնի սրահում տեղի ունեցավ մեր հրաժեշտի համերգը, որի մասին հետևյալն է գրում «Պայքար» թերթի թղթակիցը:

«Աշխարհաշրջիկ երգիչ-ղերասան տեր և տիկին Հայկ և Էմմա-Արժվի հայրենիք վերադառնալու առթիվ

Արվեստագետ Ամուլը երկար տարիներ նվիրվելով հայ ազգային թատրոնին, անցած է ամբողջ աշխարհ, տարածելով հայ երգն ու մայրենի լեզուն և հանդիպած են մեր գեղարվեստի լավագույն գործիչներին: Քսան տարիներն ի վեր անոնք կգտնվին Բուենոս Այրես, որտեղ տված են բազմաթիվ օպերաներ, զրամատիկական ներկայացումներ և համերգներ, արժանանալով ժողովրդի ջերմ գնահատանքին: Ունին նաև երգապնակներ՝ կազմված հայ գեղջկական և դասական կտորներին: Արվեստագետ զույգը ժողովրդի փափագին ընդառաջելով՝ անցյալ 26 հոկտեմբերին տվին իրենց վերջին ձևափոխումը, որ անցավ արտակարգ հաջողությամբ: Ներկաներու խանդավառությունը մեծ էր. կարծես առաջին անգամն էր, որ կտեսնեին արվեստագետ զույգը բեմում, որոնք իրենց հրաշալի ձայներով, երգերով ու խանդավառությամբ գրաված էին բոլոր հանդիսականներու սրտերը:

Արահը կթնդար ծափողույններով և կեցցեններով: Արվեստագետ զույգը իրենց շնորհակալությունները կըհայտնեն Բուենոս Այրեսի հայ գաղութին, նույնպես բովանդակ արտասահմանյան հայությանը, որ շնայած շատ մը դժվարությանց, դարձյալ ունեցած է գորով՝ գուրգուրելու հայ արվեստի մշակներու վրա: Կմաղթենք մեր արվեստագետներուն բարի ճանապարհ և հաջողություններ իրենց ասպարեզի մեջ»:

Երբ սկսեցինք գրել կիսաթող մեր հուշերը Սովետական Հայաստանում, փոխադարձ թղթակցությունների բերումով, Պարսկաստանից ստացանք մի գրություն արտասահմանյան հանրաժանոթ բանասեր-թատերագետ Արամ Երեմյանից, որտեղ նա նշում է. «Գուր տարիների վաստակ ունիք հայ ժողովրդի գեղարվեստական դաստիարակության խնդրում, եթև սփյուռքի մի շարք թատրոններ լեզու առնեն՝ շատ բան կըպատմեն ձեր բրտնաջան վաստակի մասին: Միևնույն ժամանակ ուրախալի է, որ զուր գրում եք ձեր հուշերը, որ շահեկան է հայ թատրոնի համար»:

Արամ Երեմյանի հետ դժբախտաբար անձնապես ծանոթություն չենք ունեցած, սակայն իր գրական բեղմնավոր աշխատանքի շնորհիվ անունը վաղուց ծանոթ է մեզ, Երեմյան հմտորեն հետաքրքրված է հայ թատրոնի անցյալով և ներկայով, իր պրպտողական ոգիով նա լույս աշխարհ է բերել մի շարք մոռացված տաղանդներ: Ներկայիս նա զբաղված է 13-րդ դարի երկրորդ կեսում ապրող անզուգական մանրանկարիչ Թորոս Ռոսլինի կյանքի և նկարչական ստեղծագործությունների ուսումնասիրությամբ:

Հայ թատրոնի պատմութեան ուսումնասիրութեան գործում՝ Ա. Երեմյանի աշխատանքը անուրանալի է:

Այսօր, երբ գրի եմ առնում մեր անցյալը, շարժապատկերի նման իմ աչքի առաջով անցնում են այն երկրները, որ անցել ենք մեր արվեստի բերումով: 1918 թիվ՝ Կովկաս՝ Թիֆլիս, Բաթում: Թուրքիա՝ Պոլիս: Հունաստան՝ Սալոնիկ, Բանդրմա, Բալըբեսիր, Աքսար, Մանիսա, Էոզեմիշ, Իզմիր, Ռոզոստո: Բուլղարիա՝ Սոֆիա, Պլովդիվ, Վառնա: Եգիպտոս՝ Ալեքսանդրիա, Կահիրե: Սիրիա-Լիբանան՝ Բեյրութ, Հալեպ, կրկին՝ Բեյրութ: 1925 թվական՝ (տիկնոջս՝ Էմմայի հետ) Դամասկոս, դարձյալ Բեյրութ: Պաղեստին՝ Երուսաղեմ, Հայֆա, Եաֆա, Թել-Ավիվ, կրկին Բեյրութ, Չահլե և ապա Միջագետք, Բաղդադ, Բասրա, Մուսուլ, Քիարքուկ: Պարսկաստան՝ Արազան, Մեջիդ, Սուլեյմանիե, Իսպահան, Նոր-Ջուղա և Թեհրան: Հնդկաստան՝ Կարաչի, Բոմբեյ, Կալկաթա, Ասանսոլ, Դարջլինգ, Մադրաս: Բիրմա՝ Ռանգուն: Սինգապուր թերակղզին և ապա Ճավա կղզին՝ Բաթավիա, Սուրաբայա, Քեպի-րի, Բանկոկ: Կրկին Սինգապուր, Ֆիլիպինյան կղզիները՝ Մանիլա, Ցեկեբես կղզին՝ Մագասար քաղաքը: Բալի, կրկին Սուրաբայա և Բաթավիա: Ծովային երկար ճանապարհով Իտալիա—Նեապոլ, Վենետիկ, Ճենովա և Միլան: Եվեցարիա՝ Ժնև, Ցյուրիխ: Ֆրանսիա՝ Մարսել, Բոմոն, Լիոն, Դեսին, Սեն Եամոն, Փարիզ, Նիցա, Մոնտե Կարլո: Բելգիա՝ Անտվերպեն, Բրյուսել: Անգլիա՝ Լոնդոն, Մանչեստր: Գերմանիա՝ Բեռլին, Համբուրգ: Ավստրիա՝ Վիեննա: Հունգարիա՝ Բուդապեշտ: Ռումինիա՝ Բուխարեստ: Բուլղարիա՝ Սոֆիա, Պլովդիվ, Վառնա, Բուրկաս և Ռուշուկ: Հարավսլավիա՝ Բելգրադ, Չագրեբ, Բիոկրատնամորու և կրկին Եգիպտոս՝ Ալեքսանդրիա, Կահի-

րե: Սուդան՝ Խարթում, Ֆրանսիական Զիրուտիե: Եթովպիա՝ Դեբեզեվա և Ադիս-Աբեբա: Կրկին Հնդկաստան, կրկին նույն քաղաքները և Բոմբեյից կրկին Իտալիա: 1939 թվական. Հարավային Ամերիկա: Բրազիլիա՝ Ռիո դե Ժանեյրո, Սանթոս, Սան-Պաուլո: Կրկին ծովային ճանապարհ՝ Արգենտինա՝ Բուենոս-Այրես, Կորդովա, Ռոզարիա: Ուրուգվայ՝ Մոնտեվիդեո և վերջապես, մեր թափառական նավը խարխսի գցեց Բուենոս Այրեսում, որտեղ ապրեցանք քսան երկար տարիներ:

Պետք է խոստովանել, որ Արգենտինյան երկիրը մեզ համար դարձել էր երկրորդ հայրենիք, որտեղ անցրել ենք դառնութեան և ուրախութեան օրեր: Թատերական ընկերներին և շատ մոտիկ ծանոթներին մեր հրաժեշտը տալուց հետո իտալական «Կոնտե Գրանդե» նավով թողեցինք Բուենոս-Այրեսը՝ մի սոսկալի անձրևատ օր: Սովետական մեր հայրենիքի պետական պաշտոնյաները Հունգարիայում և Չոփում մեզ դիմավորեցին արտակարգ ուրախ: Առավել ուրախ էինք մենք և ի վերջո երջանիկ, գտնվում էինք հարազատ երկրում: Չոփում մեզ նույնպես դիմավորեց փոքր եղբայրս Արծրունին և ուղեվորովեցինք իր բնակավայրը՝ Գրոզնի, որտեղ նա աշխատում է որպես ավագ անասնաբույժ: Արծրունին մասնակցած է Հայրենական մեծ պատերազմին և ճաշակած է նրա դառնությունները: Մտացած է մայրի աստիճան և պարզևատրված է Կարմիր աստղի շքանշանով:

Գրոզնիից ուղևորվեցինք դեպի իմ ծննդավայրը՝ Ախալքալաք:

Շատերը լսած էին մեր վերադարձի մասին, կիսաճամփին մեզ դիմավորեցին Արակովայի գյուղացիները, իսկ երբ մոտեցանք Գոմանին, մեր բոլոր գլուղացիները նվագով, երգով

ու պարով շրջապատեցին մեզ: Երկու երիտասարդներ ձեռքներին ունեին բռնած մի ճերմակ պաստառ, որի վրա մեծ գիրերով գրված էր՝ բարի գալուստ հայրենադարձ Սիմոնյան-Սարգսյաններին»:

Մեր առաջին գործը այն եղավ, որ տիկնոջս հետ, սուրբ պարտքը համարեցինք այցի գնալ ծնողներին շիրմին: Մայրս վախճանվել էր վաղուց, եղբայրներս 1936—37-ին, իսկ հայրս մի քանի տարի առաջ: Ծունկի եկած համբուրեցինք ծնողներին գերեզմանը և թեթևությամբ զգացինք, որ զոհե տեսանք նրանց շիրմները:

Անցել են տարիներ, վերադարձել ենք հայրենիք, ուրախ ենք և երջանիկ՝ տեսնելով վերածնված Սովետական մեր մեծ հայրենիքը: Այլևս չկան դավեր, հալածանքներ, մեր ժողովուրդը ապրում է խաղաղ ստեղծագործ կյանքի իր նոր փուլը: Եվ մենք, որպես այդ ժողովրդի լիիրավ մասունքը, մեր հանգիստն ենք գտել նրա գրկում:

1960 թվականից անդամագրված ենք Հայկական թատերական ընկերության: Այսօր շափաղանց ուրախ ենք, որ մեր սեփական աչքերով տեսնում ենք հայ ժողովրդի իսկական վերածնունդը:

Ավիտակ եմ Սովետական Միության
Ներսի Մուշեղյան և ԲԱՆՎԱՍՏԻԱՆԻ

Խում՝ Ե. ՉԱՐՏԱՆԻ

ԳԱՅԼԵՐԳ

Երանգություն՝ Հ.Ս.Ս. ԱՐՄԵՆՎԷՆ

Tempo di marcia

Սա-ղ-սա - կան զե - լե-րայ-նե
ու մար-տոյ - նե

մեծա-նան
եկ փա - րա - սանն առ - զե - ՚րի մեջ

հա - ՚րի - զո - ճով
հաղ-քա-կան
տո-ղով է
հայ

ու ճո-րն - քառ
ա-նու-նը
ֆո
Բար-աւոյ-լան

Հա-յոց զա - սանն
ի - ընն ըզ - զով
էլ ֆո փառ

1-2. 2.
- ինն մաս - նա-կից
Քո
Բար - ավ-լան

ՄԵՇԱՆ ԵՐԿԻՐ

Խոսք՝ ԱՄԲՈՒՆՆԻ

Խրատեսչություն՝ ՀԱՅԿ ԱՐՄԵՆԻԱ

Tempo di marcia

Մեծ - ծա եր - կիր ա - ռիվ ա ն - մար, ռե - փար թըմ -

- թուկ հըն կի մո - զին թա - ճել ա ծեր մա -

Գուկ ա մար ող - լույն զը - վե՛ր մեր թա - ճա - կին:

Ջա - հել ա ծեր մա - ճուկ ա մար,

ող - լույն զը - վե՛ր մեր թա - ճա - կին: Մեր թա -

Musical score for the song "Հայկ և Էմմա—Արծիվներ" (Hayk and Emma - Hawks). The score is written in G major and 4/4 time. It consists of a vocal line and a piano accompaniment. The lyrics are in Armenian. The score includes a first ending and a Coda section. The piano part features a prominent bass line and chordal accompaniment.

Lyrics:
 Ես կի՞ն
 մե՛ր պար
 - ծան - քին
 մե՛ր հող-քա - կան Հայ - ռե - ցի-ֆին:
 րե - ցի - ֆին - ռե - ցի - ֆին:
 Coda

Հայկ և Էմմա—Արծիվներ

Աշխարհով մեկ

Խմբագիրներ՝

Լ. Խաչարյան

Վլ. Գանիբեյան

Նկարիչ՝ Վ. Կոժոյան

Գեղ. խմբագիր՝ Ան. Գասպարյան

Տեխ. խմբագիր՝ Վ. Եղանյան

Վերստ. սրբագրիչ՝ Ա. Նրիցյան

ՎՁ 09551

Գրատվեր 1206

Տիրաժ 5000

Հանձնված է արտադրության 31/X 1963 թ.:

Ստորագրված է տպագրության 8/VI 1964 թ.:

Քուղի՞՞ր՝ 70×108¹/₁₆՝ Տպագր. 5,62 մամ., = 7,7 պայմ. մամ.:

Հրատ. 6,8 մամ. + 4 ներդիր:

Գինը՝ 31 կոպ.:

Հայկական ՍՍՌ Մինիստրության տվեալի մասնիկի գրատվան կոժմանի
Պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 6 տպարան,
Երևան, Գումանյանի փ. № 51, 1964 թ.:

